

ՀԱՅՈՎԱՐԴԻՆԵՐ

ԳՈՒՐԳԵԼ
ՀՈՎԱՍԼ

891.99

8792

2-86 | Հովհաննես, Գ.

၂၀၂၄ ခုနှစ်၊ ၇၊

Z-86

ԳՈՒՐԳԵՆ ՀՈՎՆԱՆ

ԱՍԽԻԿԱՆ Հ 1961 թ.

ՆՈՎԵԼՆԵՐ

A 28378 8792
28378 8792



ՀԱՅՊԵՏԱՐԱՏ

ԵՐԵՎԱՆ

1 9 4 6


Գիւրս, ուսպես համեստ շիրմախ,
դնում եմ մարտերի դաշտում քնկած
իմ ընկերների հեռավոր ու ամսայց
գերեզմանին:

Գ. ՀԱՊԵՍԻՆ

Շապիկը՝ Ակարիչ
ՍՊԻՐԵՆ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ

ГУРГЕН ОВНАН
И О В Е Л Л Ы
(На армянском языке)
Армгиз, Ереван, 1946





ԵՐԳՉԻ ՄԱՀԸ

Ուղիղ 31 տարի էր, որ կույր երգիչը թափառում էր ծովափնյա գեղեցիկ քաղաքում ու երգում սլավոնական հին, բայց հաճելի մեղեդիներ: Բոլորը նրան ճանաշում ու սիրում էին: Ինքը՝ կույր երգիչն էլ ճանաշում էր շատերին, հատկապես նավաստիներին: Նրան հայտնի էր բոլոր նավերի շվացուցակը, գիտեր ո՛ր նավի վրա ո՛վ է աշխատում: Նավաստիները սիրով լսում էին նրա երգերը ու առատ վարձատրում, նվերներ տալիս, մի խոսքով, նրանք էին, որ իրենց խնամքի տակ էին առել ծերուկ երգչին:

Մի օր մի խումբ նավաստիներ նվիրեցին նրան իրենց հին հագուստները, տվին ուտելեղեն և պատվիրեցին, որ այսուհետեւ նա երգի միայն նավաստիների սիրած երգերը: Կույր երգիչն ուրախությամբ համաձայնեց, ինքն էլ էր սիրում այդ երգերը: Ուրախ էր անցնում երգչի կյանքը նավաստիների հետ և հոգով վշտանում էր, երբ նրանք նորից գնում էին ծով: Ծովագնյա մայթերի վրա կույր երգիչը շրջում էր ու անվերջ հաշվում օրերն ու ժամերը, թե երբ նորից կվերադառնան իր սիրելի նավաստիները:

Երբեմն նա կծկվում էր նավամատուցի մի անկյունում ու ժամերով մնում այդպես լուս, քարացած: Այդ րոպեին

դժվար էր հասկանալ, թե ինչ էր խորհում ծեր երգիչը. արդյոք փրփրած ծովի կատաղի ալիքների նոր երգն էր հյուսում, թե՛ ծովային տարերգի քմահաճ պարն ունկնդրում, կամ գուցե մի ուրիշ բան. դա մնում էր խոր գաղտնիք, որ հայտնի էր միայն իրեն՝ կծկված, լուռ երգչին:

Երբ պատերազմն սկսվեց, կույր երգիչն անշափի մըշտացավ: Իր կյանքում նա շատ պատերազմներ էր ապրել, բայց այս մեկը նրա համար ամենից սոսկալին էր: Քաղաքը պատերազմի ճակատին շատ մոտ էր, թնդանոթների, ռումբերի խոռվ դղրդյունը լսվում էր քաղաքում: Նավաստիները էլ այցի չեն գալիս նրան, նրանք կովում էին ֆակատում: Ծերուկ երգիչն էլ այլև չէր երգում, նա լսել էր, քաշվել մի անկյուն ու վշտացած զրուցում էր իր փոքրիկ ութամյա ընկերոջ՝ իգորի հետ:

— Իսկ գերմանացիները որ մտնեն քաղաք, մեզ կըսպանե՞ն, — հարցրեց իգորը, նայելով ծեր երգչի գունատ ու անկյանք դեմքին:

— Մե՞զ, մեզ ինչի՞ են սպանում, չէ՞ որ մենք անվտանգ, անօգնական մարդիկ ենք, ինչ նշանակություն ունի նրանց համար մեր մահը. չէ՛, մի՛ վախենա, իգա՞րկա, նրանք մեզ ձեռք չեն տա, — գանդաղ, բայց համոզված ասաց կույր երգիչը: Ապա իգորի անհանգստությունը լիովին փարատելու համար պատմեց, որ ինքը շատ պատերազմներ է ապրել, շատ պատերազմների պատմություն գիտե, և որ կաշատ հին ժամանակներից մնացած մի օրենք, մի սովորություն, որ կովող կողմերը երբեք ձեռք չեն տալիս ծերերին ու երեխաներին: Այդպես եղել է հնում դեռևս վայրի ցեղերի ժամանակ, այդպիս մնացել է դարերի ընթացքում մինչեւ մեր օրերը:

Մարտերը օրեցօր ավելի սաստկանում էին, թշնամին մոտենում էր քաղաքի մատուցներին: Քաղաքի բնակչու-

թյան մի մասը թողնում էր քաղաքը. ծեր երգչին էլ հայտն նեցին այդ մասին, բայց նա հրաժարվեց մի ավելորդ բեռ դառնալու նրանց համար.

— Մենք մնանք, իգարկա, ո՞ւր պիտի գնանք, որւ գիտես, որ ինձ համար շատ դժվար է քոչել տեղից-տեղ: Մենք մնանք, իգարկա, մեզ ձեռք չեն տա նրանք, — դողդոզուն ձայնով ասաց երգիշը:

Եվ նրանք մնացին — ծեր երգիշն ու փոքրիկ իգորը:



Ինչպիսի՝ ավերումներ ասես, որ չկատարեցին գերմանացիները ծովափնյա այդ գեղեցիկ քաղաքում. ծերուկ երգիշը չէր տեսնում, չգիտեր, իսկ փոքրիկ իգորը տեսնում էր, բայց փոքր էր, շատ բան չէր հասկանում: Զարհուրելի բաներ էին պատմում: Ծերուկ երգիշը դժվարանում էր հավատալ: Էսելով այդ գաղանությունների մասին, նրա դեմքը մոայլում էր, հոգին՝ փոթորկվում. և, առաջին անգամ իր կյանքում, նա մտածեց՝ լավ է, որ ինքը կույր է ու ոչինչ չի տեսնում:

Այդ օրը սովորականի պես նրանք դուրս եկան ծովափուտելու բան ճարելու. քաղցած էին, ծերուկ երգիշը տարօրինակ կերպով անհամբեր էր դարձել ու ամեն մի քայլափոխում հարցնում էր.

— Ո՞վ է գալիս, ո՞վ անցավ, ի՞նչ աղմուկ է:

Փոքրիկ իգորը հոգնել էր պատասխանելուց, բայց էլի շարունակում էր համբերությամբ կատարել իր պարտականությունը:

Այդպես խոսելով քայլում էին, երբ դիմացի փողոցի անկյունից հանկարծ դուրս եկան գերմանական մի խումբ գինվորներ ու սպաներ և շրջապատեցին նրանց:

— Այդ ո՞ւր եք շտապում, — հարցըին նրանք:

— Չենք շտապում, — պատասխանեց կույր երգիշը:

— Սրան տեսեք, կույր է ձևանում. բա՛ց աշքերդ, ծեռո՛ւկ, թե չէ ընդմիշտ կիակենք մենք այն:

— Ես կույր եմ, ինձ այս քաղաքում բոլորը գիտեն, հարցրեք՝ ում կուզեք:

— Ահա՛, կո՞ւյր ես, իսկ այս ի՞նչ է թեիդ տակ, կիթառ է, ուրեմն դու նվագում ես և երգել գիտես:

— Այո՛, և՛ նվագում եմ և՛ երգել գիտեմ:

— Դե՛, նվագի՛ր, երգի՛ր, տեսնենք ինչպես ես երգում:

— Ի՞նչ երգեմ, իմ երգերը ձեզ դուք չեն գա, ես միայն սլավոնական երգեր գիտեմ, իսկ դուք չեք սիրում այդ երգերը:

— Ահա թե ինչ, ուրեմն դու այդքան հասկանում ես, դու գիտես նույնիսկ, թե մեզ ինչ է հարկավոր, դե, ուրեմն, ասա՛, ծերուկ, դու կիմանաս, թե որտեղ են թաքնված պարտիզանները:

— Ես ինչ կարող եմ իմանալ, ես ոչինչ չգիտեմ:

— Ոչինչ չգիտե՞ս, իսկ մենք գիտենք, որ դու ինքդ ծպտյալ պարտիզան ես. իզուր կույր ու անմեղ մի ձևանա. ասա՛, որտեղ են ձերոնք,—հրացանի կոթով ուժեղ հարված տալով ծերովկին, գոռաց գերմանական սպան:

Իգորը ահից սկսեց լաց լինել: Ծանր հարվածը իշավ նաև նրա՛ մեջքին:

— Ի՞նչ եք ասում, ես ի՞նչ պարտիզան եմ. Իգա՛րկա, լաց մի՛ լինի, սրանք ինձ չեն ճանաշում:

— Ճանաշում ենք, ամբողջ Ռուսաստանն ենք ճանաշում և երեք ձեզ չի հաջողվի մեզ խարել,—նորից գոռաց սպան ու ձեռքի ատրճանակով երեք անգամ կրակեց կույր երգչի վրա:

Ծերուկ երգիշը թավալվեց գետին: Իգորը սարսափահար ճշաց ու ընկալ նրա վրա:

Գերմանացիները ոտքի մի հարվածով շարդեցին նաև կիթառը ու հեռացան...



Արդեն ուշ երեկո էր:

Ծովից փշում էր անհանգիստ ու ցուրտ քամին:

Փողոցի մի անկյունում ծանր վիրավոր ընկած էր կույր երգիչը. նա իր կյանքի վերջին բողեներն էր ապրում: Իգորը ահաբեկված արտասվում ու կրկնում էր.

— Դու ասում էիր՝ ծերերին ու փոքրերին ձեռք չեն տա, տեսնո՞ւմ ես, նրանք մե՛զ էլ են սպանում:

— Լաց մի՛ լինի, Իգորիկա՛. Եթե նրանք մեզնի՛ց անգամ սարսափում են... նույնիսկ մե՛ր մեջ պարտիզան են տեսնում, նշանակում է նրանք խստ ահաբեկված են... Նրանք մեր երկրում երկար չեն կարող մնալ,—դժվարությամբ ու զայրույթով ասաց կույր երգիչը:

Իգորը կծկվել էր նրա կողքին և շարունակում էր ցավից ու սարսափից արտասվել:

Ծերունին այլևս չէր կարողանում խոսել, նա միայն թույլ և ուժասպառ ձեռքով շրյում էր Իգորի գլուխը:

Ծովից բարձրացող քամին հետզհետեւ ավելի սաստկանում էր:

Ուշ գիշեր էր, երբ Իգորը հանկարծ զգաց, որ այլևս չի շարժվում ծերուկի ձեռքը...

— Ճեծկա, ճեծկա,—գիշերվա ահավոր խավարի մեջ սարսափահար ճշաց Իգորը:

Կույր երգիչը մահացել էր արդեն...



Հաջորդ օրը գերմանական ոստիկանությունը ծովը նետեց երկու դիակ ու մի զարդված կիթառ...



ԾԱՂԻԿՆԵՐԸ //

Պատերազմը պղուրնց պարտիզան Հայրովի հոգին: Իսկ անձանոթ վիշտը թախծի ծանր քող էր գցել նրա ժըպտուն դեմքին: Նա քայլում էր տիսուր, մտազբաղ և երբեմն էլ լուս, ինքն իրեն խոսում էր ու քարձրածայն կրկնում.

— Սրիկանե՛ր, օ՛չ, սրիկանե՛ր:

Ճակատ էր գնացել Հայրովի միակ զավակը. նրա հետ պնացել էին շատ-շատերը: Դե, ի՛արկե, պիտի գնային, այդ շատ լավ էր հասկանում պարտիզան Հայրոն. Հայրենական մեծ պատերազմ էր, ամենքը գնում էին կռվելու, իր զավակն էլ պիտի գնար:

Էլ ինչո՞ւ էր նա զավակ ունեցել, էլ ինչո՞ւ էր նրան սիրել, փայփայել ու մեծացրել, որ այսօր, երբ սև ամպերն են իջել մեր երկրի վրա, երբ թշնամու կատաղի հորդաները քանդում ու ավերում են մեր երկիրը, այսօր նա չգնա պաշտպանելու հայրենիքը:



Հայրոն անվանի մարդ էր, նրան ճանաշում ու սիրում էին բոլորը: Նա հայտնի էր ծաղիկների իր նշանավոր պարտեզով: Ինչպիսի՝ պես-պես ծաղիկներ ասես, ոչ չկային

պարտիզան Հայրոյի ծաղկանոցում: Այդ ծաղիկները, հո-
տափետ, քնքուշ ու գունեղ ծաղիկները հատ-հատ, փունջ-
փունջ դուրս գալով Հայրոյի պարտեզից, կարծես լեզու էին
առնում ու իրենց տիրոջ դովքն անում ամեն տեղ:

Ով ասես, որ չեր եղել նրա պարտեզում, ով ասես, որ
Հայրոյի պարտեզից ծաղիկներ չեր տարել իր սիրուհուն, իր
հարազատին. ինչպիսի հանդիսներ ասես, որ չեին զարդար-
վել Հայրոյի պարտեզի հրաշագեղ ծաղիկներով:

Երբ գինակոչ եղավ, նորից այցելուներով լցվեց Հայրո-
յի պարտեզը. եկան աղջիկներ քնքուշ, թափանցիկ, մայրեր
եկան գունատ ու թախծոտ և շատ-շատ ուրիշներ. եկան ծա-
ղիկներ տանելու կայարան՝ իրենց եղբայրներին, զավակնե-
րին, իրենց հարազատներին ճանապարհելու համար:

Շատ ծաղկեփնչեր կազմեց այդ օրը պարտիզան Հայ-
րոյն: Բայց մի ծաղկեփնչ առանձնապես գեղեցիկ էր, նա-
կազմված էր բացառիկ խնամքով, նրա մեջ կալին պարտե-
զի բոլոր ընտիր ծաղիկները, նա ծաղկեփնչերի ծաղկեփնչ-
ըն էր, գեղեցիկների գեղեցիկը: Պարտիզան Հայրոն այդ
ծաղկեփնչը՝ կազմել էր իր զավակի համար, չե՞ որ նրան
էլ իր պարտեզի ծաղիկների պես սիրել, ծաղիկների պես
փայտայել ու մեծացրել էր:

Հարյուրափոր մարդիկ էին հավաքվել կայարանում:
Նրանք եկել էին ճանապարհելու իրենց սիրելի զավակնե-
րին: Ճակատ էր գնում նաև պարտիզան Հայրոյի տղան:

Գնացքը շարժվեց:

Նրանք մեկնեցին՝ իրենց հետ տանելով ժողովրդի սե-
տը, նրա գուրգուրանքը և հաղթանակի անսահման հավատը:

Երբ կայարանից վերադարձան տուն, Հայրոյի կինը՝
Մանուշը քաշվեց մի անկյուն ու սկսեց դառն ու անզուսպ
կերպով արտասվել:

— Բավական է, Մանուշ, գնացողի ետեից լաց չեն
մինի, — ասաց Հայրոն, բայց իր սիրտն էլ լիքն էր և հա-
զիվ էր զսպում իրեն:

— Պատերազմի շրջանում ծնող, մայր շպիտի լինել,

ամեն ինչ կարելի է լինել, բայց մայր լինելուց,—կրկնում
էր Մանուշը:

— Ե՞ս, Մանուշ, դու միամիտ ես, դու շփոտես ինչ բան
է ստրուկ լինել, այն էլ գերմանացուն. Եթև իմանալիր, այդ-
պես չէիր ասի: Ես գիտեմ ինչ բան է այդ գերմանացի ա-
սածը, տեսել եմ նրանց զինվորների ու սպաների գարշելի
մռութը:

* * *

Օրերն անցնում էին, բայց պարտիզան Հայրոն լուր
չուներ իր գավակից: Անցել էր արդեն մեկ, երկու շաբաթ և
այսօր արդեն մի ամիս, նորից երեք շաբաթ, բայց դարձլաւ
ոչ մի լուր: Սոսկալի լուրեր էին գալիս պատերազմի դաշ-
տից: Ֆաշիստական հորդաները ոտնահարում էին ամեն ինչ-
սպանում, մորթում ու սվինահար էին անում անօդնական
գերիներին, կանանց ու երեխաներին:

Լսելով այդ ամենը, պարտիզան Հայրոն ծանր ցամ
էր զգում հոգու խորքում: Վշտի զայրուցին օրեցօր ավելի
էր կուտակվում նրա կրծքի տակ, ուշում և ուզում էր պայ-
թել, բայց ծերությունը, անիծված ծերությունը խանդարում
էր նրան, որ ինքն էլ իր հարվածը հասցնի գաղանացած
թշնամուն:

Հայրոն դարձել էր լուսկյաց. նա համարյա չէր խոսում:

Առաջվա պես պարտիզան Հայրոն այլու չէր հետե-
վում իր պարտեզին: Մավիկները, հոտավետ, գունել ծաղիկ-
ները հետզհետե թոշնում էին, չորանում:

— Ինչ պարտեզ, ինչ ծաղիկներ, երբ հաղարավոր մար-
դիկ են մեռնում, ում են պետք այն ծաղիկները, որ մահվան
պատկ ու վշտի սփոփանք պիտի լինեն,—ասում էր պարտիզ-
ան Հայրոն:

Եվ թոշնում, չորանում էին ծաղիկները, սիրուն, գույնըզ-
գույն ծաղիկները...

* * *

Այդ օրը, երբ սովորականի պես Հայրոն իշել էր իր
պարտեզը, նստել իր սիրած խնձորենու տակ ու աշխատում

Էր աղատվել իրեն հալածող ու ձնշող մտքերից, նրան մոռէցայլ փոստատարն ու հանձնեց մի ծրար:

Այդ՝ երկտող, ուրախալի մի նամակ էր իր զավակից.

«Ես առողջ եմ ու լավ,—գրում էր նա,—աննկարագրելի մարտեր են տեղի ունենում: Զախշախում ու ոչչացնում ենք ֆաշիստ մարդակերներին: Իմ մասին չմտածեք: Զարխրեք... հաղթանակը մերը՝ կլինի: Կարուտում եմ բոլորիդ, պարտեղին... հետևեք, որ ծաղիկները չթոշնեն, չըրանան»:

Պարտիզան Հայրոյի ու նրա կնոջ՝ Մանուշի ուրախությանը շափ շկար: Շուտով այդպիսի ուրախալի նամակներ ստացան և մյուս հարեանները:

Պարտիզան Հայրոյին ամեն օր տասնյակ մարդիկ էին այցելում, ողջունում էին նրան ու պատմում այն շտեսնը-ված հերոսությունների մասին, որ ցուցաբերում էին Կարմիր Բանակի խիզախ մարտիկները: Նրանց դյուցազնական պայքարի մասին անթիվ, անհամար երգեր էին գրվում, նրանց գովքն էր, որ արվում էր ամեն տեղ, երկրի ամեն անկյունում:

Հայրոյի պարտեզը նորից սկսեց կենդանանալ: Ոչ միայն հարեանները, այլև անծանոթ մարդիկ օգնում էին պարտիզան Հայրոյին, ջուր էին ցանում ծաղիկներին, իսկ ծաղիկները, վառ, սիրուն ծաղիկները բացում էին իրենց մետաքսե թերթիկները, ժպտում ու առաջվա պես զարդարում պարտեզը:

Մեր անծայքածիր երկրին շատ տանկեր, վասող, արկ ու փամփուշտ է հարկավոր, բայց մեր երկրին հարկավոր են նաև ծաղիկներ, հոտավետ, սիրուն, վառ ծաղիկներ մեր պանծալի մարտիկներին, ստալինյան բազեներին դիմավորելու, նրանց կուրծքը զարդարելու, նրանց հաղթանակը շնորհավորելու համար:

Էյ, սիրելի պարտիզան, դե թա՛րմ, թա՛րմ պահիր ծաղիկները, մոտ է մեծ հաղթանակի ժամը:



С О К Р А С

Как сильно билось русское сердце
при слове отечество!

А. С. Пушкин

Դարբինը վշտացած էր:

Մի քանի տասնյակ տարի շարունակ նա աշխատում էր-
այդ արհեստանոցում, բայց երբեք իրեն այնքան հոգնած,
այնքան ջարդված չէր զգացել, որքան այդ օրը: Երեք ծե-
րացել էր կամ տարիների ծանր աշխատանքը հյուծել, մա-
շել էր նրան: Ո՛չ, ո՛չ: Դարբինը դեռ առուց է, նրա բա-
զուկներում դեռ ուժ կա, չնայած քառասուն տարի շարու-
նակ նա աշխատում է այդտեղ:

Վիշտը, խոր վիշտն էր նրան այդպես կծկել, այդպես
ուժասպառ արել:

Պատերազմի դաշտում սպանել էին նրա ավագ որդուն,
իսկ կրտսեր որդուց, որ նույնպես ճակատումն էր, երրորդ
ամիսն էր, ինչ ոչ մի լուր չկար: Եվ սոսկալի մտքերը հան-
գիստ չէին տալիս, տանջում ու մաշում էին նրան:

Արհեստանոցը մի տեսակ մոռալլվել էր, իսկ քուրայից
ցայտող կայծերը, կարծես սվիններ էին, որ խրվում էին
նրա կրծքի մեջ: Չէ՛, աշխատել այլևս չէր լինում, նա նույ-
նիսկ հաճախակի մոռանում էր, թե ի՞նչ է շինում:

Մի ուրիշ քուրա էր վառվում նրա կրծքի տակ, ավելի ուժեղ, ավելի թեժ, որ լափում էր նրա սիրտը։ Ամեն ինչ փոխվել էր, ըմբոստացել։ Երկաթն էլ, կարծես, խիստ կարծրացել էր ու այլև չէր ենթարկվում նրա ծանր մուրճի։ Հարվածներին։ Այդ տեսնում էր վարպետը, և նրա վերքերն ավելի էին մորմոքվում։ Նա մի կողմ գցեց մուրճը, մոտեցավ դռան, հենվեց նրան ու հրամայեց աշակերտներին։ Հանգնել քուրան։

Ո՛չ տանը, ո՛չ զինվորական կոմիսարիատում, ո՛չ էլ մոտիկ ու հարազատ մարդիկ շաբարողացան համոզել վարպետին, որ նրա տարիքն անցել է արգեն ճակատ մեկնելու համար։ Նրա որոշումը որոշում էր, ասածն՝ ասած։ Մի զավակին սպանել են, մյուսից լուր չկա, հազարավոր մարդիկ մեռնում, անհայտանում են, իր հայրենի հողի վրա տեղում է արյան անձրել, իսկ ինքը շարունակելու է առաջվա պես։ Հանգիստ աշխատել վառվող քուրայի մո՞տ։ ո՛չ, ո՛չ, հիմա իսկական քուրան վառվում է պատերազմի գաշտում և իսկական վարպետներն այնտեղ են, որ ցույց են տալիս իրենց վարպետությունը։

Իզո՞ւր էին ուզում համոզել նրան, իզուր էին ուզում կոտրել նրա համառ կամքը—որոշել էր, ուրեմն պիտի գնար։

Եվ նա գրվեց աշխարհազորական ու գնաց ճակատ՝ կամ մեռնելու իր ավագ որդու կողքին, կամ հաղթանակով վերադառնալու իր կրտսեր որդու հետ։

Աշխարհազորականները զարմանքով էին նայում վարպետին։ Բայց ինչո՞ւ, չէ՞ որ նա նույնպես հագնված էր այնպես, ինչպես նրանք, ուներ հրացան, փամփուշտ, ատրճանակ։ Գուցե նրանց զարմացնում էին վարպետի խորն ընկած աշքերը, նրա դեմքի ակոսված կնճիռները կամ նրանց խորքում մարմնացած տարիների մուրը, ո՛չ, իհարկե, ո՛չ.

ա՛յդ չեր, որ զարմանք էր պատճառում նրանց, այլ այն, որ հրացանի, փամփուշտի, նոնակի կողքին նա կրում էր նաև մի մեծ, ծանր մուրճ: Ինչո՞ւ էր նա վերցրել այդ, մի՞թե քիչ էր այն ամենը, ինչ կրում էր նա իր վրա: Այդ էր ահա, որ զարմացնում էր բոլորին: Բայց այն քչերը, ովքեր գիտեին, որ նա դարբին է, մտածում էին՝ երեխ նրա համար դժվար է բաժանվել իր հարազատ մուրճից, ամբողջ կյանքն անց է կացրել նրա հետ և նրա հետ էլ ուզում է մեռնել:

Բայց տարօրինակ էր, շատ տարօրինակ, որ դժվարին երթի ժամանակ, չըովլ անցնելիս, շնչակտուր վագելու պահին անգամ նա չեր բաժանվում իր ծանր մուրճից:

Վարպետը չեր խոսում, միշտ մտազբաղ էր, լուռ: Նա ոչ ուշադրություն էր զարձնում ընկերների զարմացած հայցքներին, ոչ էլ պատասխանում նրանց հարցերին:

— Վերցրել եմ, պետք կգա,—սառը պատասխանում էր դարբինը և շարունակում էր քայլել, առանց ցույց տալու, որ իր բեռը մի ծանր մուրճով ավելի է մյուսներից:



Ճակատում մարդ հաճախ մոռանում է ամեն բան—մայր, կին, երեխա, մոռանում է ամենքին, ամեն ինչ: Կովելու բուռն տենչն է տիրում նրան, հաղթելու անհուն կամքը: Այդպես եղավ նաև այն վաշտի հետ, որի մեջ էր դարբինը: Թնդանոթների արկերը պայթում էին աշ ու ձախ, բարձրացնելով հոգի, քարի, երկաթի ու ծխի խառն ամպեր, իսկ մարդիկ իլացած՝ կորչում էին նրանց մեջ ու թվում էր, թե վերջն է ամեն ինչի:

Բայց վաշտը համառոքեն առաջ էր գնում, նա արդեն ժուկեցել էր իրամատներին: Այդ սոսկալի որոտի մեջ լսվեց մի ուրիշ, կարծես ավելի ուժգին որոտ: Դա հրամանատարի ձայնն էր, որ արձակեց սվինային մարտի հրամանը, և վաշտը մի մարդու պես նետվեց մարտի, սվինային կատաղի մարտի:

Այդ պահին էր ահա, որ դարբեինը գալրութից սեղմված բռունքների մեջ առավ ծանր մուրճը ու առաջ նետվեց:

Սարսափելի ու սոսկալի տեսարան էր այդ:

Նրա կնճռոտ ու մրոտ դեմքը, կատաղությունից վառվազ աշքերը, նրա ահարկու հայացքն ու ձեռքի մեծ մուրճը անասելի սարսափ առաջացրին շուրջը:

Դարբինն առաջ էր վազում ու ահոելի մուրճը սրի պես դարկում մեկի գլխին, մյուսի մեջքին, երրորդի կրծքին, և այդ մահացու հարվածների տակ նրանք ոռնում ու գլորվում էին գետին: Դարբինն արդեն գլորել էր նրանցից մի տասնյակ և դարձյալ ցասկոտ մոլեգնությամբ առաջ էր շարժվում, բայց այլևս ոչ ոք չէր մոտենում, չէր դիմադրում նրան: Գերմանացիները սարսափահար փախչում էին նրա մոտից: Դա մի հրեշային տեսիլ էր նրանց համար, և նրանք փախչում էին, փախչում, ինչպես իրենց համար անհայտ մի նոր դժոխային գենքից:

Դա ոռւսական հին մուրճն էր, այն մուրճը, որ բարձրացավ ու խորտակեց ցարերի մոայլ Ռուսաստանը և ստեղծեց մեր ազատ երկիրը: Այժմ նորից բարձրացել է այդ ազատաբեր մուրճը՝ խորտակելու երկաթով, արյունով ու վառողով շաղախմած դարշնագույն Գերմանիան: Դա ոռւս ժողովրդի ուժն է, նրա հաղթանակի սիմվոլը, որ բերել է ու կբերի միլիոնավոր մարդկանց, կանանց ու երեխաներին ոռւսական մեծ ազատություն:

Խսկական ազատություն:

1941 թ. հոկտեմբեր.



ԾԱՂԿԱՎԱՑԱՌ ՊԱՏԱՆԻՆ

Գերմանացիները նրան բոնեցին լայն հրապարակի մեջ
արձանի մոտ, խոշոր ծաղկեփունջը ձեռքին:

— Ո՞ւմ համար էն այդ ծաղիկները, — հարցրին նրան:
— Վաճառելու համար;
— Դու չգիտե՞ս, որ այստեղ ամեն ինչ ձրի է, մեզ հա-
մար:

— Ո՞չ, — ասաց ըմբոստ պատանին:
— Ա՛ռ քեզ, այսուհետև կիմանաս, — ասաց ֆաշիստ
զինվորը, ուժեղ ապտակելով նրան, Պատանու աշքերը մըթ-
նեցին, քիչ մնաց ընկներ, հազիվ կարողացավ մնալ ոտքի
— Տա՛ր այդ ծաղիկները և տուր սպային, — հրամալեց
նույն զինվորը մահվան սպառնալիքով:

Ծաղկավաճառ պատանին շրջվեց ղեպի սպան, որ
կանգնած էր քիչ հեռու, և խկուն ճանաշեց նրան:

— Ո՞չ, ես նրան ծաղիկ չեմ տա, նա սպանել է իմ քրո-
ջը, նա մարդասպան է:

— Ինչպե՞ս, դու համարձակվում ես... — որոտաց ֆա-
շիստը ու արյունոտ սուրբ խրեց պատանու կուրծքը:

Պատանին ճշաց, ընկավ գետին, բայց ծաղկեփունջը բաց շխզեց ձեռքից, նա ամուր սեղմեց կրծքին:

— Չե՞մ տա, նա սպանել է իմ քրոջը, — նորից կրկնեց նա:

Ծաղիկներն ամբողջովին արյունոտվել էին. կարմրել էին սպիտակ ծաղիկները: Դերմանական զինվորը ուզեց խլել ծաղկեփունջը, բայց համառ պատանին որոշել էր շտալ այն:

Մարդասպանի սուրբ նորից փայլեց պատանու գլխին, բայց անուշաբույր ծաղիկները արդեն արյան մեջ տրորվել, ճմլվել էին:

— Ա՛ռ, — ծաղկեփունջը շպրտելով գերմանացու երեսին, ասաց մեռնող պատանին, — ա՛ռ, հիմա ինքդ տար այս արյունոտ ծաղիկները քո սպային:

Պատանին մեռավ, մեռավ հակարտ, արհամարհանքի ու առելության ցայտող հուրն աշքերում, մեռավ, երբ ծաղիկներն ամբողջովին տրորված ու արյունոտ էին...

Մարդասպանների անցած ողջ ուղին այդպես տրորված էր ու արյունոտ...

1941 թ հոկտեմբեր.



Ե Ր Գ Ը

И с песней

на смерть

рингутся люди.

В. Маяковский

Ես գիտեմ, որ ժամանակը հետզհետե իմ հիշողության
մեջ մշուշապատում է նրա լեռնային հպարտ ու արտահայ-
տիչ դեմքը, նրա սուր հայացքը, նրա վառ ու կրակոտ աշ-
քերը։ Բայց ես երբեք, երբեք չեմ մոռանա նրա երգի ձայնը։
Այդ հուզիչ ու քաղցր ձայնը մինչև հիմա էլ հնչում է իմ ա-
կանջին։

Զորամասում մենք բոլորս սիրեցինք նրան, սիրեցինք
նրա երգերը։ Զէ՞ որ մարտի դաշտում մի առանձին քաղց-
րությամբ ես հիշում հայրենի երգերը։ Սիրող մի տեսակ
ձմլվում է, երբ հիշում ես, թե ինչպես պատերազմից առաջ
այդ նույն երգերը դու երգում էիր քո սիրած աղջկա համար,
քո տխրության և ուրախության պահին։ Եվ ահա այդ նույն
երգերը դու լսում ես նորից, լսում ես քո խրամատում, քո
բլինդաժի մեջ։ Մի պահ թախիծը պատում է քեզ, բայց դու
մոռանում ես ամեն ինչ ու ինքդ էլ սկսում ես ձայնակցել,
ինքդ էլ երգել։

հնչքա՞ն հարազատ ու քաղցր են հնչում այդ երգերը:

Նա եկել էր Կովկասի լեռնաշխարհից: Թողել էր իր հայրենի լեռներն ու ձորերը, անտառներն ու աղբյուրները և եկել էր պաշտպանելու հայրենիքը: Լեռնային այդ աշխարհից նա բերել էր երկաթյա առողջություն, պայքարի բորբոքված կիրք և հայրենի սիրած երգերը:

— Այդ բոլորն էլ անհրաժեշտ են թշնամուն հաղթելու համար,—ասում էր Հրամանատարը, ձեռքը խփելով նրա մեջքին:

Թվում էր, թե չկար երգ, որ նա չիմանար. բացի արեվելյան երգերից նա երգում էր նաև ուսւական ժողովրդական երգեր, բայց ուսւական երգերը այնպիսի շեշտադրությամբ էր երգում, այնպիսի քաղցրությամբ, որ իրենք՝ ուսւները մի առանձին սիրով ու հիացմունքով էին լսում:

Նրա մասին ամենքն ասում էին.

— Այդպիսի ձայն ունեցող մարդը երբեք չի կորչի, երբեք չի մեռի:

Նրա անունը Արտավազդ էր, իսկ ամեն մեկը իր ցանկացած ձևով էր կանչում նրան—Արտո, Արտաշես, Արտյուշա, բայց ամենքին հայտնի էր նա որպես երգող տղա, այդպես էլ ասում էին նրա մասին—էն երգող տղան:

Զորամասում նրան շատ էին սիրում: Ամեն անգամ նրա քաղցրահնչյուն երգը լսելով, տղաները սրտանց ու անկեղծ բացականշում էին.

— Դու, Արտյուշա, կարող ես չկռվել, մենք քո փոխարեն կկռվենք, դու միայն երգիր մեզ համար, դու երգիր՝ մենք կկռվենք:

Բայց Արտավազդը սիրում էր իր հայրենիքը, սիրում էր հայրենի երգերի պես, և նա ուզում էր մարտնչել, հաղթել ու երգել:

* * *

Լուսաբացին մեր զորամասը հարձակման անցավ: Թըշնամին կատաղի դիմադրում էր: Նա կրակ էր բացել զենքի

բոլոր տեսակներից և շանում էր կասեցնել մեր առաջիւաղացումը:

Մարտի ծանր պահին ստորաբաժանման հրամանատարը սովորով մոտեցավ Արտավագդին ու հեալով ասաց.

— Ես հիմա գրոհի հրաման կտամ, երբ բոլորը ոտքի բարձրանան ու առաջ նետվեն, որ սկսիր բարձր ձայնով երգիլ, աշխատիր, որ քո բոլոր ընկերներն էլ երգեն, հասկացա՞ր, ու շատ անհրաժեշտ է, աշխատեցեք բարձր, ինչքան կարող եք ըարձր երգնել:

— Կա՛, ընկեր հրամանատար:

Մի քանի րոպե հետո որոտաց գրոհի հրամանը: Հրամանի հետ միասին հնչեց նաև Արտավագդի երգը: Կրակոցների դժոխային աղմուկին խառնվեցին երգի խրոխտ հընչունները: Մկրոպամ երգը խլանում էր կրակոցների աղմուկից, իսկ հետո, երբ երգողների թիվը մեծացավ, երգը հնչեց ավելի խրոխտ, ավելի ուժգին:

Քանի մոտենում էինք թշնամու խրամատներին, այնքան նվազում էին մեր շարքերը, նվազում էր և երգը, բայց Արտավագդի լեռնային ձայնը շարունակում էր հնչել ավելի ուժգին, ավելի ցասումնալի: Ոգնջնչված նրա երգից, տղաները առաջ էին նետվում:

Վերջապես կոտրվեց թշնամու համառությունը, ու նա սկսեց խուճապի մատնվել, նահանջել: Երգը ավելի բարբոքվեց, ավելի ուժգին սկսեց հնչել: Մարտիկները հաղթական երգով առաջ էին անցնում: Այդ պահին էր ահա, երբ հանկարծ բոլորը զգացին, որ կտրվեց Արտավագդի ձայնը: Թշնամու գնդակը վիրավորեց նրան, բայց այդպես վիրավոր ընկած ժամանակ էլ նա, ձեռքն ուղղեց դեպի առաջ ու շարունակեց երգը:

Ընկերները նկատեցին, որ նա ընկավ, բայց մարտի թեժ պահն էր, առաջ էր հարկավոր անցնել, և նրանցից ամեն մեկը կարծես մրրկի պես առնում էր նրա բերնից երգը ու առաջ ալանում...

Նրան բերեցին դաշտային հիվանդանոց։ Վիրավորներից շատերը ճանաչեցին Արտավագղին, իսկ մյուսները շուտով ընտելացան ու սիրեցին նրան։ Վիրավոր ընկերների տրամադրությունը բարձրացնելու համար երբեմն նաև մեղմ ու կամաց սկսում էր երգել։ Լսելով նրա երգի թախծոտ ձայնը, բժիշկը մոտենում ու հանդիմանում էր։

— Կհոգնեք, իսկ ձեզ հանգիստ է հարկավոր։

— Թող երգի, բժիշկ, թող երգի, —խնդրում էին հիվանդները ու իրենք էլ կամաց, առանց խոսքերի ձայնակցում էին նրան։ Այն սենյակում, որտեղ պառկած էր Արտավագղը, միշտ լսվում էր երգի ձայնը։

Զորամասում բոլորը հետաքրքրվում էին Արտավագղի առողջությամբ։ Նղանք դալիս, կտմաց մոտենում էին հիվանդանոցի դռանը, ականջ դնում ու երբ լսում էին նրա եղանակ ձայնը, հանգիստ սրտով ետ էին դառնում զորամաս ու հայտնում ընկերներին, որ Արտավագղը լավ է, երգում է ու երեխ շուտով վել աղաւնա զորամաս։

Այդ օրը նա շատ ծանր էր։

Լուաբացին հաղիվ լսելի ձայնով նա սկսեց երգել։ Բայց նրա երգի հիվանդագին հնցումները թույլ էին, անհարթ ու թվում էր, թե նա չը երգողը, այլ մի ուրիշը։ Նա խառնում էր երգի եղանակները, զփիտեր ինչ էր երգում։

Նրա մարտական ընկերներից հավաքվել ու լուր լսում էին։ Նա շճանաշեց ոչ ոքի, միայն ինքն իրեն երգում էր, երգում էր ցածր ու հանգիստ։ Մինչև հիմա էլ իմ ականջին գեռ հնչում է նրա վերջին երգը։

Зори большого, грозного дня
Всходят в густой крови.
Родина, ты не забудь меня,
Снова в строй позови.



Մահվան վերջին բոլեին նա միայն մի բան էր ցանկանում՝ նորից վերադառնալ շարք։ Բայց մահը հանեց նըրան շարքից։

Վիշտը բոլորի սրտերում վրեժի թույն կաթեցրեց ու բորբոքեց այդ սրտերը։

Բայց երգը չընեց։

Նրա մարտական ընկերները շարունակեցին երգել։ Եվ երգը շարունակեց ապրել, քայլել նրանց հետ մի շարքում ու հնչել է՛լ ավելի ուժգին, է՛լ ավելի ցասումնալից։

1942թ. Տեսնվար.



Մ Ե Դ Ե Ա

Անծանոթ կինը, արցունքները սրբելով, սեղանին գրեց
Մեղեայի երեք լուսանկարը: Ես վերցրի այդ լուսանկարները
և երկար ժամանակ հայացքս շէի կարողանում հեռացնել
նրանցից: Ես նայում էի Մեղեայի նուրբ ու գեղեցիկ դեմքին
ու խորհում նրա կյանքի ամբողջ տրագեդիայի մասին: Բո-
լոր նկարների մեջ նրա դեմքը ժապտում էր, խոշոր ու արտա-
հայտիչ աշքերը լի էին երջանիկ երիտասարդության անհոգ
արտահայտությամբ:



Գերմանացիները հանկարծակի մտան այդ փոքրիկ քա-
ղաքը: Մեղեայի ծնողները շկարողացան ժամանակին դուրս
գալ քաղաքից: Թշնամու զորքերի գորշ շարքերն անվերջ
անցնում էին փողոցներով:

Առաջին օրերն անորոշ էին ու ամենուրեք տիրում էր
լարված, սպասողական վիճակ, բայց հետո եկան ավելի
փորձված մարդակերներ և ներս խուժեցին քաղաքի ամեն
մի տուն, ամեն մի անկյուն:

Մեղեան լուս կանգնել էր պատշպամքի մոտ ու տիսուր

Թիտում էր. նրա կենսուրախ դեմքն ամպոտել էր, իսկ ժըպ-
տուա ազբերը պատել էին թախծով:

Գերմանական սպան ոտքով զարկեց բակի գուանը ու
ներս մտավ մի խումբ զինվորների հետ: Մեղեան պատու-
հանից տեսավ այդ ու սարսափահար քաշվեց տան խորքը:
Նուի ձևով նրանք բացեցին սենյակի դուռը:

— Ո՞վ է այս տանն ապրում, — հարցրեց սպան:

— Իմ ընտանիքը, — մի քայլ առաջ գալով, ասաց Մե-
ղեայի հայրը:

— Իսկ դու ի՞նչ մարդ եւ, ինչո՞վ ես զբաղվում:

— Ես բանվոր եմ, որմնարիբ:

— Ռդեմն և կոմունիստ, այո՞ — խոսակցության տանը
բարձրացնելով ասաց սպան:

— Ո՞ւ, ես կոմունիստ չեմ:

— Իսկ այս գեղեցիկ տունն ո՞վ է քեզ տվել, եթե կո-
մունիստ չեմ:

— Ես ինքս եմ կառուցել, չէ՞ որ իմ արհեստն է տու-
կառուցելը:

Սպան սկսեց խուզարկել տան բոլոր անկյունները: Նա
բացեց երկրորդ սենյակի դուռը և տեսնելով Մեղեային իր
փոքրիկ քրոջ հետ, խորամանկորեն ժպտաց ու կանգնեց
մուտքի մոտ:

— Չո աղջի՞կն է:

— Այո:

Տան բոլոր անկյունները, անգամ խոհանոցը նայելուց
հետո սպան ասաց.

— Շատ լավ է, ես ապրելու եմ այս տանը, այս երկու
սենյակում, իսկ դուք առաջմ քաշվեք մյուս սենյակը:

Որմնազիբը գլուխը խոնարհեց ու հազիվ լսելի ձայնով
ասաց.

— Ապրեք, եթե ձեզ դուր են գալիս մեր սենյակները:

— Ինչու չէ, ինձ շատ բան է դուր գալիս այստեղ: Առ-
հասարակ, պիտի ասել, որ լավ երկիր է Ռուսաստանը, մի-
այն մարդիկ են անպետք:

Սպան զինվորների ուղեկցությամբ դուրս եկավ, հայտ-
նելով, որ ինքը շուտով կվերադառնա:

Քոլորը լուր էին: Եվ ինչ կարող էին ասել:

* * *

Երբ նրանք դուրս եկան, Մեղեան մոտեցավ ծնողներին
ու արտասուզն աշքերին՝ ասաց.

— Մամա, ես այս տանն այլևս չեմ մնա, սպայի աշ-
քերում մահ կար, նա այնպես նայեց ինձ... թող, մամա, ես
գնամ որեւ տեղ, թաքնվեմ:

— Ո՞ւր գնաս,—սարսափահար ասաց մայրը, գրկելով
ազգկան, — Հիմա գնալու տեղ չկա, ուշ է արդեն, ուր էլ
գնաս՝ նրանք են. քաղաքն արդեն լցված է նրանցով:

— Գոնե թաքնվեմ մի տեղ, — ասաց Մեղեան:

— Ուշ է, աղջիկս, շատ է ուշ, արդեն տեսել են քեզ,
էլ ինչպես կարող ես թաքնվել, մնա մեղ մոտ, մեր աշքի ա-
ռաջ, առանց քեզ ես չեմ ապրի, աղջիկս:

Մայր ու աղջիկ լաց եղան, ապա նրանց միացավ նաև
Մեղեայի փոքրիկ քույրը: Հայրը, որ մինչ այդ լուր էր և
չգիտեր ինչ անել, հանկարծ բարձրացավ տեղից և հուզված
ասաց.

— Ինչ եք անում, լոեք, նրանք հիմա կգան, լոեք, թե
չէ կկատաղեն և, ով գիտե, ինչ կարող են անել:

Հայրը չէր սխալվում, շուտով նրանց տան առաջ կանգ-
նեց զերմանական ավտոն, որտեղից դուրս եկան սպան և
ուրիշ զինվորականներ. նրանք արագությամբ մեքենայից
իջեցրին. սպայի իրերը ու տարան ներս:

Այդ օրվանից նրանց տան առաջ գիշեր-ցերեկ կանգ-
նած էր զերմանական զինված պահակը՝ բութ ու խուզար-
կու հայացքը հառած չորս կողմը:

* * *

Առաջին օրերին սպան քիչ էր լինում տանը, երբեմն
նույնիսկ ուշ գիշերներին էր գալիս, բայց հետո նա ոկանց

տանն աշխատել։ Մեղեայի ծնուզներից պահանջեց, որ
նրանք ծառայեն իրեն։ Նրանք էլ թեյ էին պատրաստում,
ճաշ էին մատուցում և սարսափով ենթարկվում էին սպայի
բոլոր քմահաճուզքներին։

Այդ օրն արտակարգ բարձր էր սպայի տրամադրությու-
նը—սովետական այդ քաղաքը գրավելու կապակցությամբ
Հիտլերյան հրամանատարությունը նրան պարզնատրել էր
մի նոր շքանշանով։

Մեկ-մեկ, ապա խմբովին Հիտլերականները գալիս
շնորհավորում էին պարզեատրված իրենց ավագ սպային,
նստում էին նախապես պատրաստված սեղանի շուրջը, ան-
վերջ խմում էին ու երգում. երգում էին քայլերգեր և ձեռ-
քերը համաշափ զարկում սեղանին։

Երեկոյան դեմ, երբ բոլորը գնացել էին, սպան, ճոճ-
վելով, գուտը հրեց ու մտավ տանտիրոջ սենյակը։

— Ես ուղում եմ խմանալ գուք ուրա՞խ եք, որ ես մի
նոր շքանշան եմ ստացել, ահա, տեսնո՞ւմ եք, սա արդեն
երրորդն է, գեռ էլի կստանամ, չորրորդը, Հինգերորդը, մին-
չև հասնենք Հեռավոր Արևելք, ամբողջ կուրծքս շքանշան-
ներով կծածկվի, հասկանո՞ւմ եք,—հազիվ ոտքի վրա կանգ-
նելով,—ասաց սպան։

Տան տերը, նրա կինը և աղջիկները ոտքի էին կանգ-
նել ու սարսափահար հայացքները սենեկ էին սպային, որի
բերանից փլչում էր գինու ծանր ու տհաճ հոտը։

— Ինչու չեք խոսում, ինչ, ուրեմն գուք ուրախ չեք, հա՞-,
ձեզ կկոտորեմ,—ասաց սպան, հանելով ատրճանակը,—
ձեզ բոլորիդ կկոտորեմ, եթի հիմա շնորհաք, շպարեք, հաս-
կանո՞ւմ եք, կկոտորեմ։ Ես չեմ սիրում, երբ մարդ մեքենա-
յի հնազանդություն չի ունենում, իսկույն չի կատարում տի-
րոջ կամքը, հասկանո՞ւմ եք, ես այդպիսի մարդկանց գնդա-
կահարում եմ, անխնա գնդակահարում։

— Ես ամբողջ օրն աշխատել եմ և այժմ հազիվ եմ
կարողանում ոտքի վրա կանգնել։ Հոգնած է և կինս, պարոն
սպա, ներեցեք մեղ,—ասաց տան տերը։

— Իսկ դու, գու՝ նույնպես հոգնած ես, — ասաց ապան,
զառնալով Մեղեային։ Աղջիկը շփոթվեց, չգիտեր ինչ պա-
տասխանել. այդ բոպեին նա մի այնպիսի սարսափահար
հայացք ձգեց ծնողների վրա, որ կարծես այդ անօդնական
մարդկանցից օգնություն էր խնդրում։

— Դու երգել գիտե՞ս, — հարցրեց սպան, ավելի մոտե-
նալով աղջկան։

— Ոչ, — հազիկ կարողացավ պատասխանել Մեղեան,
երեսը ծածկելով սպայից։

— Դե որ այդպես է, գնանք ինձ մոտ, ես քեզ կուրա-
խացնեմ, — ասաց սպան, Մեղեայի թերց քարշ տալով դեպի
իր սենյակը։ Աղջիկը թույլ դիմադրությամբ առաջ շարժվեց։
Նա գիտեր, որ եթե չգնար, և իրեն, և ծնողներին կսպանեն,
նրան արդեն հայտնի էին նման շատ դեպքեր։ Դուան մոտ
Մեղեան հրաժեշտի դառն հայացք ձգեց ծնողներին, կար-
ծես այլևս չէր տեսնելու նրանց, կարծես մի սենյակից
մյուս սենյակը դա մի աշխարհից մյուս աշխարհն էր տա-
նում նրան։

Դուռն ուժգին ծածկվեց Մեղեայի ծնողների երեսին։

* * *

Մեղեայի ծնողները մնացին քարացած։ Մայրը մի
խեղղող ճիշ արձակեց ու ընկավ գիտին։ Հայրն իսկույն
մոտեցավ նրան ու ձեռքը դրեց բերանին, որ նրա լացի ձայ-
նը շնասներ սպայի ականջին։

— Լոիր, խնայիր գոնե փոքր աղջկանդ, — ասաց նա ա-
ղերսող և դողդոշուն ձայնով։

Քիչ հետո կից սենյակում լսվեց երաժշտության ձայն,
սպան պատեփոնի վրա նվագում էր եվրոպական եղանակներ,
ինքն էլ հետը բարձրաձայն երգում։

Մութն արդեն ընկել էր։

Թե ինչքան ժամանակ նրանք նվագեցին և երբ դադա-
րեց երաժշտության ձայնը, հայտնի չէր, միայն Մեղեայի
ծնողները սւշքի եկան, երբ խավար լուսաթյան մեջ լսվեց
իրենց աղջկա բարձր ճիշը, ապա անկանոն շարժում, նորից

լոռություն, պարձյալ ձայներ: Մեղեայի ծնողները, շնչները պահած, լարված լսում էին, աշխատելով բաց լթողնել ոչ մի ձայն, ոչ մի շնուկ:

Հարեան սենյակում տիրում էր խոր լոռություն. այդ լոռությունը տնեց մոտ երկու ժամ: Ապա նորից, այս անգամ՝ արդեն խեղդող թուլլ ձայնով, լսվեց Մեղեայի ձայնը.

— Մամա՞ ... մա՞ ... մա՞ ...

Մայրը խենթի պես ոտքի թռավ, բացեց պատշգամբի դուռը և ուզեց գնալ մյուս սենյակը, բայց միջանցքում սպայի թիկնապահը նրան կանգնեցրեց և ետ հրեց, զգուշացնելով, որ սպան հանգստանում է և չի կարելի նրան խանգարել: Մայրն արցունքներն աշքերին, աղերսեց, բայց թիկնապահը կոպիտ կերպով նրան դուրս արեց միջանցքից, ինքն իրեն փնթփնթալով, որ սպան չի սիրում, երբ հանգըստի ժամին նրան խանգարում են:

Մայրն ուժասպառ և հուսահատ ետ շրջվեց ու մտավ սենյակ. նա շգիտեր ինչ անել, մի անկյունից մյուս անկյունում՝ էր նետում իրեն, ձգում էր մազերը, երեսը ծածկում էր ձեռքերով ու արտասվում:

Այդպես անցավ մի ժամ, երկու, երեք և շատ ժամեր: Տանը լոռություն էր տիրում: Միայն լսվում էր դրսում ետ ու առաջ քայլող գերմանական պահակի ոտքերի համաշավ ձայնը:

Կլիներ երկի գիշերվա ժամը երեքը, երբ այդ ճնշող ու խորհրդավոր լոռության մեջ լսվեց ատրճանակի շորս կրակոց: Սպայի թիկնապահը և հսկող պահակը զինված իսկուն ներս վաղեցին սենյակ: Մեղեան, ատրճանակը ձեռքին, վառված աշքերով, գունատ, արձանացած էր սենյակի մի անկյունում: Սպան, երկու ձեռքը սեղմած կրծքին, թափալվում էր բազմոցի մեջ ու ճշում.

— Օկնություն կանչեք, թող գան, ես մեռնում եմ, բժիշկ, շտապ բժիշկ կանչեցեք:

Քիչ ճետո ամբողջ տունը շրջապատված էր, շտապ քայլերով ներս ու դուրս էին անում զինվորականները: Շուտով

շարժումները տեղափոխվեցին պատշգամբ. գերմանացիները միմյանց հետ խոսում էին արագ, բայց հազիվ լաելի ձայնով. Աղմուկն աստիճանաբար ավելի մեծացավ պատշգամբում և հանկարծ այդ բոլորը մի վայրկյանում լսեց:

Մեղեայի ծնողները կրակոցի ձայնից իսկուն վեր թռան, ահաբեկված սեղմվեցին պատին ու շնչասպառ ականջ էին դնում, թե ինչ է կատարվում կողքի սենյակում: Նրանք լսեցին ոտնաձայներ, շրթում ծանր տնքոցներ, խուզ, հազիվ լսելի խոխոռոց: Մեղեայի ծնողները գիտեին, զգում էին, որ իրենց տան մեջ, հենց կողքի սենյակում, կատարվում է մի սարսափելի ոճիր, բայց ինչ՝ նրանք չգիտեին: Դուրս գալ չէր կարելի, կսպանեին:

Այդպես լարված, ուժասպառ նրանք սպասեցին մինչև լուսացավ: Մայրը առաջինը դուռը բացեց և հենց այդ բոպեին մի խենթ, վայրենի ճիշ արձակելով, ուշագնաց նետվեց գետին:

Հայրն իսկուն վազեց դեպի դուռը, բայց վայրկենապես ետ-ետ քաշվեց ու ընկալ կնոջ կողքին. միայն թույլ և ուժասպառ ձեռքով նա հազիվ կարողացավ ծածկել դուռը:

Սենյակի միակ դուռը բացվում էր պատշգամբի վրա. ահա այդ դուռն ուղիղ դիմացի սյունից գերմանացիները կախել էին Մեղեային: Եվ նա ճոճվում էր օդի մեջ, երբ առավոտյան մալրը բացեց դուռը ու տեսավ այդ դաժան տեսարանը:

Այդ դուռը այլևս չբացվեց...

Ինչ վերաբերում է գերմանական սպային, այդ նույն գիշերը նա մեռավ կողքի սենյակում: Նրա ցնորդները մինչեւ Հեռավոր Արևելք հասնելու և նոր շքանշաններ ստանալու մասին խորտակեց Մեղեան—սովետական այդ գեղեցիկ ու հպարտ աղջիկը:



Բ Ր Ի Կ Ը

(ՃԱՎԱՏԱՅԻՆԻ ՇՈՑԱՏԵՏՐԻՑ)

Փոքրիկ գյուղը, որ կարևոր ստրատեգիական կետ էր Համարվում, մի քանի անգամ ձեռքից-ձեռք էր անցել: Անընդհատ ոմբակոծության և հրետանային կրակի տակ լինելով, գյուղը ավերվել ու տակնումքա էր եղել: Ամբողջ գյուղում մնացել էր միայն մի քանի խարխուլ տնակ, աճա այդ տնակներից մեկումն էր, որ տեղավորվեց գիվիզիայի թերթի խմբագրությունը:

Այդ տնակները համարյա դատարկ էին, միայն պատերին տեղ-տեղ մնացել էին փակցված զանազան լուսանկարներ, ծղոտե գույնգույն գործվածքներ և բնակարանային զանազան, մեծ մասամբ անպետք, անօդագործելի իրեր: Տեղի բնակչությունից ոչ ոք չէր մնացել գյուղում. միակ կենդանի շունչը, որ մնացել էր և արթուն հսկում էր գյուղի ավերակները, դա մեր տանաիրոց շունն էր:

Մեզանից առաջ այդ տանն ապրող կապիտանը և նրա բանակայինները շանը թրիկ էին կանչում: Արդյոք դա՝ էր շան իսկական անունը, թէ՞ իրենք էին այդպիս կոչել, կամ լսել էին իրենց նախորդող այդ տանն ապրողներից, հայտ-

Նի շեր ոչ ոքի: Միայն ինքը՝ Բրիկն արդին վարժվել էր այդ անփան:

Շուտով Բրիկն ընտելացավ նաև մեզ. նա դարձավ մեր բոլորի սիրելին: Ես երեք չեմ մոռանա նրա տանջված, բայց խելոք ու սքանչելի աշքերը: Քանի-քանի անգամ ես զրկել եմ ու համբուրել նրան, համբուրել ինչպես հարազատի:

Մենք մտերմացանք իրար հետ մի պատահական, բայց խիստ սրտաշարժ դեպքից հետո: Մի օր թշնամու ավիացիան մի առանձին ակտիվությամբ սկսեց ոմբակոծել գյուղը, ես չհասցրի գույքս գալ խրճիթից ու ծածկվել խրամատում կամ բլինդաժում: Մնացի տանը, պատի մոտ կանգնած: Այդ ժամանակ Բրիկը սրբնթաց ներս մտավ, պտույտ գործեց սենյակի անկյուններում, ապա մոտեցավ ինձ ու կըծկը վեց ոտքերիս արանքում: Ծումբերը մեկը մյուսի ետևից անասելի աղմուկով պայթում էին տան շուրջը: Տունը փոքրիկ նավակի պես օրորվում էր, պատուհանի փեղկերը դուրս թռան, հողը թափվում էր առաստաղից ու պատերից: Ես լարված ու անհամբեր սպասում էի, որ ահա կփլվի տոնը և ամեն ինչ կվերջանա: Այդ րոպեին ինչ էր զբաղեցնում միտքս՝ ոժվար է ասել, բայց մի բան պարզ էր, որ կյանքի և մահվան ներքին պայքարի ծանր ռոպեներն էին այդ: Թշնամին երբեք այդպես կատաղի չեր ոմբակոծել գյուղը: Երբ զրությունը մի քիչ խաղաղվեց, հանկարծ ոտքերիս մոտ խլրաց զգացի: Նայեցի և ոտքերիս արանքում տեսա Բրիկին: Ես բոլորովին մոռացել էի նրա գոյության մասին: Այդ նա էր դողում, Դողում էր ինչպես փոքրիկ երեխա: Ես երեք չէի տեսել շանը դողալիս: Ինչքան սրտաշարժ էր այդ: Սարսափը նրան կծկել, աննկատելի էր դարձրել:

Ռմբակոծությունը դադարեց. Ընկերներս ներս եկան և շատ ուրախացան, որ ինձ ոչինչ չի պատահել: Նրանք սկսեցին պատմել ոմբակոծման հետևանքների մասին: Չնայած ես լսում էի այդ զրուցները, բայց միտքս դեռ զբաղված էր Բրիկով: Այդ օրը ես երկար մտածեցի Բրիկի մասին, շատ

Էրկար: Ահա այդ օրվանից էր, որ մի առանձին համակրանք ու սեր սկսեցի տածել գեպի թրիկը. և նրան միշտ շոյում, կերակրում էի:

Բայց մենք գեռ լավ չէինք ճանաչում թրիկին, այդ խելոք, զգայում շանը: Նա միշտ արթուն հսկում էր գուրսը, երբեմն էլ ետին թաթերին նստած՝ դումը ցցում էր օդի մեջ ու ականջները սրած՝ լսում: Քանի-քանի անգամ ևս ծածուկ դիտել եմ ու ապշել, թե ինչպես թրիկն ամեն մի թեթև շշուկից անգամ վլուխն արագ շարժում էր այս ու այն կողմ ու ճգնում հասկանալ վերահաս վտանգը: Թրիկն առաջինն էր, որ վտանգի դեպքում ազդանշան էր տալիս մեզ. նա իսկուն ներս էր վազում, շղային պտույտներ էր գործում մեր շուրջը, նորից դուրս վազում: Ես երբեք չեմ մոռանա, թե ինչպես թրիկը մի անգամ մեզ ազատեց մահից:



Առավոտյան շատ վաղ թշնամու հետախույզ ինքնաթիռը մի քանի անգամ պտույտ գործեց գյուղի վրա: Դա լավ նշան չէր: Կասկած շկար, որ այդ օրը թշնամին ոմբակոծելու էր գյուղը: Ես շտապեցրի ընկերներին՝ արագ վերշացնելու թերթի աշխատանքները, որպեսզի կարողանայինք գնալ որևէ տեղ և ծածկվել: Թե որքան ժամանակ էր անցել, հայտնի չէր. մենք լարված աշխատում էինք, երբ հանկարծ արտասովոր կլանչոցներով թրիկը ներս վազեց, ու սկսեց պտտվել անկյունից-անկյուն. նա տագնապի մեջ էր, նա ուզում էր թափնվել: Տղաները հասկացան և իսկույն դուրս վազեցին: Ես հետեւցի նրանց: Թշնամու հինգ ոմբակոծիչ, կործանիչների ուղեկցությամբ, արդեն պտտվում էին գյուղի վրա: Ես հազիվ կարողացա ինձ նետել խրամատ: Մումբերը սկսեցին թափվել: Երկու ոռումբ հենց ուղիղ ընկան մեր տնակի վրա: Տնակը ծխի ու փոշու մեջ կորավ: Մենք այլևս չէինք կասկածում, որ եթե մի ոռպե էլ ուշանայինք, այլևս անհնարին կլիներ սենյակից դուրս գալ, և տպարանի հետ միասին պիտի օդ բարձրանայինք:

Բրիկը մեզ փրկեց:

Նա մեզ հետ եկել էր խրամատ, կուշ էր եկել ու դողում էր: Նա զարմանալի կերպով հարմարվում էր պատերազմական պայմաններին: Ռմբակոծման ժամանակ նա ոչ միայն ձայն-ծպտում չէր հանում, այլև ամեն կերպ աշխատում էր աննկատելի մնալ:

Երբ թշնամու ինքնաթիւները հեռացան, մենք դուրս եկանք խրամատից ու սկսեցինք կարգի բերել տպարանը: Մեզ՝ ճակատային թերթի աշխատողներիս համար դա սովորական երեսով էր, բայց այս անգամ տառերն ամբողջովին փշացել էին, և այդ հանգամանքը մեզ ծանր վիճակում էր գրել: Այդ մասին ես զեկուցեցի քաղբաժնի պետին և թուլտվություն խնդրեցի թերթի հերթական համարը տպագրել հարեան դիվիզիայի տպարանում:

Բոլորս լարված աշխատում էինք: Բրիկը դարձյալ մեռ հետ էր: Նա առաջվա պես վայելում էր մեր բոլորի սերն ու փայտայանքը, որպես մեր խելոք ու արթում պահակը: Բայց ահա ինձ շուտով զգուշացրին, որ պետք է շանը ոչնչացնել, որ նրա ներկայությունը կարող է մատնել մեզ:

— Ո՞նց թե, ինչո՞ւ:

Ես դժվարանում էի համոզվել և սկսեցի հակառակն ապացուցել, բայց ինձ հետ խոսում էին փորձված հրամանատարներ: Նրանք ինձ համոզեցին, որ շան ներկայությունը որևէ տեղ դա արդեն ապացուց է, որ տվյալ կետում մարդ կա:

— Շունը մատնում է բոլոր տեսակի քողարկում, — ասում էին նրանք:

Ես վշտացել էի, շգիտեի ինչ անել, երկընտրանքի մեջ էի: Դեռ չէի որոշել, թե ինչպես վարվել Բրիկի հետ, երբ մեր զորամասը գյուղից շարժվելու մարտական հրաման ստացավ: Անշափ ուրախացա, որ այդտեղից գնում ենք, միանույն է, ես Բրիկին չէի սպանելու, բայց նրա պատճառով կարող էին տհաճ պատմություններ ստեղծվել:

Երբ մենք սկսեցինք շարժվել, Բրիկը բավական տեղ

ուղեկցեց մեզ. նա գուցե և գար մեզ Հետ. բայց մենք այդ չցանկացանք: Նա երկի վշտացած այդ տմարդի վերաբեր- մունքից, նորից ետ դարձավ գեպի ավերված տան փլա- տակները: Թերես ինքը՝ Բրիկն էլ չեր ուզում բաժանվել իր բնակավայրից, թերես նա սիրում էր այդ տեղը, չե՞ որ ամ- բողջ գյուղը քոչել էր, միայն ինքն էր մնացել այն բոլոր սուկալի անցքերի, որ տեղի էին ունեցել ու դեռ տեղի պիտի ունենալին այդ գյուղում:

Լավ շեմ Հիշում, երկի անցել էր մի քանի ամիս, երբ Հանկարծ ես հանդիպեցի Բրիկին ծովափնյա մի նավա- հանգստում: Մեր զորքերը, տակտիկական նկատառումներով նահանջելով, թողել էին նաև փոքրիկ գյուղը: Բրիկը նույն- պես նրանց հետ թողել ու հեռացել էր: Նա չեր ցանկացել գերության մեջ մնալ, նրա համար փոքրիկ գյուղն իր ավե- րակներով այլևս բնակավայր չեր: Ես գիտեմ, նա խելոք էր, երբեք չեր մնա գերմանացիների մոտ: Ես կանչեցի Բրիկին: Նա իսկույն ճանաչեց ինձ ու վազեց մոտս: Ուրախությու- նից թոշկոտում էր, պոշտ շարժում ու պտտվում շուրջս: Ես գրկեցի ու համբուրեցի նրա խելոք, իմաստուն աշքերը, մաքուր ու գեղեցիկ դունչը:

Մեզանից Հետո նա երկի ծանր, տանջալից օրեր շատ էր ապրել: Թախծոտ աշքերը անթարթ հառել էր ինձ ու լուս նայում էր:

— Դու խոսե՞լ ես ուզում, Բրիկ, դու պատմե՞լ ես ու- զում քո մասին... Ոչինչ, մի անհանգստանա, սիրելիս, ես այնպես էլ հասկանում եմ քեզ, իմ խելոք, իմ իմաստուն Բրիկ:



ՄԱՅՐԸ

Այդ պատահեց 1942 թվի ամռանը։ Մեր զորամասը ծանր մարտերից հետո ետ էր քաշվել Մ. քաղաք՝ հանգըստանալու համար։ Մի տարուց ավելի էր, որ չի տեսել այդ քաղաքը։ Ես կարոտել էի նրա տներին, փողոցներին, մայթերին, նրա ամեն մի քարին։ Կարոտել էի ամենքին և ամեն ինչի։ Զէ՞ որ դա իմ սիրելի, իմ հարազատ քաղաքն է։ Առանց փոխելու ճակատային հագուստս, այդպես հոգնածու փոշոտ զուրս եկա ու կարոտի խոր հուզումով քայլում էի քաղաքի գլխավոր փողոցներով ու հազիվ զսպում ներքին ուրախությունս։ Ծանոթ ամեն մի ծառ, տնակ, քար տեսնելիս ուզում էի ձշալ։

— Ա՛, դու դարձյալ քո հին տեղն ես, քեզ ոչինչ չի պատահել...

Ես ամենքին ուզում էի բարեկել, ձեռք տալ, բոլորին զրկել, ողջունել։

Հուզված քայլում էի քաղաքի մայթերով, նայում էի շորս կողմս, կանգնում, նորից քայլում։

Ես կանգ առա մի դարպասի մոտ։

— Մայրիկ, մի բաժակ զուր կարելի՞ է խնդրել, — դիմեցի դարպասի մոտ կանգնած կնոջը։

Կինը՝ մայրական ջերմությամբ բռնեց թևից:

— Գնանք ներս, զավակս, թեյ կխմես,—ասաց նա:

— Շնորհակալ եմ, մայրիկ, թէյ չեմ ուզում, միայն մի բաժակ չուր, կրկնեցի ես:

Երբ մենք մտանք սենյակ, երկու երեխա և մի երիտասարդ կին ուրախացած վազեցին դեպի մեզ:

— Տատի, ո՞վ է այս քեռին, պապայի մոտի՞ց է զայիս,—Հարցրին երեխաները:

Տատին լռեց, նա մի վշտախառն հայացք գցեց երեխաների վրա, ապա առանց պատասխանելու նրանց, արագ շրջեց երեսը ու դարձավ երիտասարդ կնոջը.

— Թեյ տաքացրու:

Ես չուզեցի այլևս առարկել:

Երիտասարդ կինը իսկույն թեյամանը դրեց տաքացնելու:

— Նստեք, Հոգնած կլինեք,—ասաց մայրը, առաջարկելով աթոռ:

Ես նստեցի: Թմբլիկ ու գեղեցիկ երեխաները շրջապատեցին ինձ և սկսեցին ուրախուրախ թոշկոտել իմ շուրջը:

— Զավակս, դու Կ. Ճակատի՞ց ես գալիս, այո՞,—Հարցրեց մայրը:

Նայելով նրա մայրական ճերմակ մազերին, տանջված ու հյուծված դեմքին, ես չկարողացած ծածկել ճշմարտությունը:

— Այո՛, մայրիկ, ես այնտեղից եմ գալիս:

— Ուրեմն դու նույնպե՞ս այնտեղ ես եղել, իմ զավակի Հետ, դու երկի տեսել ես նրան՝ Ստեփանիս. նա նույնպես քեզ նման Հրամանատար է, քո շորերից է Հագնում, Ստեփանը, մի՞թե դու չես ճանաշում նրան:

Նրանք լարված ու լուռ հայացքները սեեռել էին ինձ. Ես չէի ճանաշում ոչ այդ կնոջը, ոչ նրա Ստեփանին, բայց նրանք ամբողջ ընտանիքով այնպես էին նայում ինձ, որ ես շվարել էի ու չգիտեի ինչ պատասխանել:

— Դու երկի Հոգնած ես, չես հիշում, բայց դու տեսած

կլինես նրան, ես հիմա քեզ ցույց կտամ նրա նկարները, —
ասաց մայրը ու սեղանի դարակից շտապ հանեց Ստեփանի
առանձին, ապա նաև մի քանի խմբանկարները:

— Ահա իմ Ստեփանը, տես, ահա սա է:

Ես ուշադիր նայեցի նկարին, բայց Ստեփանին ոչ տե-
սել էի և ոչ էլ ճանաչում:

— Զե՞ս Հիշում, Յա՞ , նա ուրիշ նկարներ էլ ունի,
ահա, — ասաց մայրը, նորից հանելով մի քանի նկարներ:

Ես ուշադիր նայում էի Ստեփանի նկարներին: Նա
նկարվել էր իր կնոջ, երեխաների հետ, նաև առանձին:

— Շուտով մի տարին կլրանա, ինչ նրանից լուր չու-
նենք, — ասաց մայրը խեղդող ձայնով ու սկսեց արտասվել:

— Ոչինչ, լուր կստանաք, մայրիկ, այդպիսի դեպքեր
շատ են լինում, բայց դա դեռ չի նշանակում, որ նրա հետ
մի վատ բան է պատահել:

— Ուրեմն Ստեփանը կենդանի՞ է, կարող է գա՞լ, —
արցունքների միջից ժպտալով ասաց նա:

— Այո՞ , մայրիկ, նա անպատճառ կգա:

Երիտասարդ կինը բերեց թեյը: Սեղանին դրեցին զա-
նազան բաղցրեղեն: Բայց ես ոչինչ չկարողացա ուտել, մի-
այն մեծ հաճույքով խմեցի թեյը, խմեցի երկու բաժակ.
վաղուց էր ես չեի խմել տանը պատրաստած թեյ: Մի քիչ
էլ երեխաների հետ խաղալուց հետո ես ոտքի ելա:

Նրանք խնդրեցին ինձ, որ մնամ իրենց մոտ ճաշի.
բայց ես շտապում էի: Շնորհակալություն հայտնեցի և
դուքս եկա:

Մայրը բավական տեղ ինձ ճանապարհեց: Երբ ես
ցտեսություն ասացի և ուղեցի բաժանվել, նա հագիւ լսելի
ձայնով շշնչաց.

— Ուրեմն նա կարող է կենդանի՞ լինել, կարող է
գա՞լ...

— Այո՞ , մայրիկ, մի անհանգստացեք, այդպիսի դեպ-
քեր շատ են պատահում, անշափ շատ:

Մայրն այլես ոչինչ շասաց, նա լուռ ստվերի պես հեռացավ ինձնից:

Այդ օրվանից անցել էր մոտավորապես շորս աժիս: Մեր գորամասը թիկունքային այդ քաղաքում վերակազմվելուց և վերապատրաստվելուց հետո նորից մեկնում էր ճակատ: Ես դուրս եկա քաղաք՝ ճանապարհի համար գնումներ անելու: Ժամանակը, քիչ էր, հարկավոր էր շտապել: Եվ ես արագ անցնում էի փողոցից-փողոց, մտնում խանութներն ու խկույն դուրս գալիս: Զգիտեմ ինչու, հանկարծ կանգ առա մի դարպասի մոտ. ծանոթ դարպաս էր: Հա, Հիշեցի, դա այն կնոջ տունն էր, այդտեղ էր, որ ես իմ դալու առաջին օրը թեյ էի խմել, հանգստացել: Հիշեցի մոր տանջված դեմքը, նրանց սիրուն երեխաներին և Ստեփանի նկարները:

— Արդյոք լուր ստացա՞ն նրանք Ստեփանից, թե՝ ոչ՝ մտածեցի ես: Հարկավոր է իմանալ: Շտապ մոտեցանրանց դռան ու սկսեցի բախել: Դուռը բացեց Ստեփանի կինը: Տեսնելով զինվորականի իմ հագուստը, նա հանկարծակի եկավ, ետք բաշվեց, ապա զարմացած դժորձավ ինձ.

— Ո՞ւմ եք ուզում:

— Դուք երկի ինձ չեք ճանաշում, — ասացի ես:

Այդ բոպեին մոտեցավ նաև Ստեփանի մայրը: Վերջիշելով, նրանք խսկույն հրավիրեցին ինձ ներս:

Ես ուրախ-ուրախ ներս մտա, ողջունեցի բոլորին:

— Լուր ստացե՞լ եք Ստեփանից, — եղավ առաջին հարցս:

Նրանք տիսուր ու վշտալից հայացքները սկսեցին իրար: Ոչ ոք չէր ուզում պատասխանել ինձ: Ի՞նչ է պատահել, ինչո՞ւ են լուսմ: Երեխաները կուշ էին եկել՝ անկյունում, նրանք նույնպես լուռ էին, գունատ, էլ չէին վաղվզում, չէին թոշկոտում:

Ես շվարել էի, չգիտեի ինչ խոսել:

Մայրը կամաց մոտեցավ ու գրկեց ինձ:

— Ստեփանն այլևս չկա, նրան սպանել են գերմանացիները, — ասաց մայրը ու կարծես ինքն էլ սարսափած այդ խոսքերից, իսկույն լռեց ու գողացող շուրթերը սկսեց ամուռսեղմել:

Ես գրկեցի նրա ձերմակ գլուխը: Աշքերից հոսող նրա արցունքները թափվեցին կրծքիս:

— Լաց մի լինեք, մայրիկ, հանգստացեք, պատերազմում ամեն ինչ պատահում է, չէ՞ որ Ստեփանը մենակ չէ, չէ՞ որ Ստեփանի պես շատերն են ընկել հայրենիքի համար և նրանք բոլորն էլ քեզ պես մայրեր են տնեցել:

Երիտասարդ կինը, որ նիշարել, անճանաշելի էր դարձել, նույնպես սկսեց արտասվել, իսկ փոքրիկ երեխաները կծկվել էին տան անկյունում, մանկական անմեղ աշքերով նայում էին մեկ ինձ, մեկ մորը, մեկ տատիկին ու կարծես ճգնում էին բոլորի հայացքների մեջ կարդալ պատահած դժբախտության մեծությունը: Նայելով երեխաներին, սիրու փոթորկեց, գիտե՞ն արդյոք նրանք, հասկանո՞ւմ են, թե ինչպիսի դժբախտություն բերեց գերմանացին նրանց և նրանց պես հազարավոր անմեղ մանուկների:

— Դե, բավական է, երեխաների մոտ մի արտասվեր:

Նրանք լռեցին:

— Այսօր, մայրիկ, մենք նորից մեկնում ենք ուազմանակատ, երդվում եմ քո առաջ, երեխաների առաջ, որ ես ձեր վշտի, արցունքների համար անողոք վրեժինդիր կլինեմ նրանցից:

Վշտահար կինն իսկույն բարձրացրեց վլուխն ու արցունքներով լի աշքերը հառեց ինձ, ապա ամուր, շատ ամուր սեղմեց ինձ իր մայրական կրծքին ու համբուրեց: Երկու անգամ նա բերանը շարժեց, ուզեց իսկել, բայց չկարողացավ և այդպես մնաց լուս: Ապա հանկարծ շրջվեց գեպի իրայրի հարսը, որը երեխաներն ու կարծես բոլորի անունից, բոլորի սրտից ասաց.

— Դե, որ գնում եք, սպանեցեք նրանց, Ստեփանի փո-

խարեն էլ սպանեցեք, լոռ՝ ոմ նք, զավակո, անխնա եղեք նը-
րանց հանդեպ, այնպես ջարդեք նրանց, որ մեր խոցված
սրտերը հանգստանան, հասկանո՞ւմ եք:

— Հանգիստ եղիր, մայրիկ, շուտով Գերմանիան կոկը-
սի լաց լինել:

Ես թողեցի նրանց դաշտային փոստի իմ համարը, վերց-
րի իրենց հասցեն, խոսք տիֆի անպատճառ նամակ գրել, ա-
պա, ցտեսություն ասելով, հարազատի պես բաժանվեցի
նրանցից:

Երբ բարձրացա զնացք, կուրծքս դեռ խոնավ էր. դա
Ստեփանի մոր արցունքներն էին, որ ես հետս տանում էի
ուազմաճակատ։ Այնտեղ՝ ուազմաճակատում վրեժի պահին
միայն կը որանան այդ արցունքները։



Չմուան խավար ու ցուրտ գիշեր էր. Մեղ հայտնեցին,
որ լուսարացին մեր զորամասը նորից հարձակման է անց-
նում։ Դա մեր երկրորդ հարձակումն էր. Մենք կազմ ու
պատրաստ էինք, բայց մինչև լուսադեմ դեռ չորս ժամ կար։
Մեր աշխերին այս քուն շեկավ. և ինչպես կարող էինք
քնել, երբ մի քանի ժամից հետո սիթի սկսվեին մարտերը։
Մենք լարված ու անհամբեր էինք. Շուտով եկավ ստորա-
բաժանման հրամանատարը. հարցուց ինչպես է մեր տրա-
մադրությունը, ինչպես ենք պատրաստվել մարտի, կատակ-
ներ արեց։ Մեր միջեւ սկսվեց մտերմական ու հարազատ
զրուց, այնքան անկեղծ, այնքան սրտաբաց, որ կարծես բո-
լորս էլ մի ընտանիքի զավակներ լինեինք. այդպիսի քաղցր
ու սրտառուշ զրուց կարող էր լինել ուազմաճակատում, այն
էլ միայն մարտից առաջ։

Ջրուցի ընթացքում մենք խոսեցինք մեր բանակի հե-
րոսական առաջխաղացման, ազատագրված գյուղերի ու քա-
ղաքների, գերմանացիների հրեշտավոր զազանությունների,

մեր վրեժի, ապա մեր ընտանիքների, երեխաների ու մայրերի մասին։ Մեր զրուցը երկար տեսց։ Ամեն մեկը մի բանէր պատմում։ Ես էլ պատմեցի Ստեփանի մոր, նրանց պերելի երեխաների և այն մասին, որ նրանց առաջ երդվել եմ վրիժառու լինել և այդ մասին գրել իրենց։

— Դրե՞լ ես արդեն, — Հարցրեց հրամանատարը։

— Ո՞չ, — ամոթով ասացի ես։

— Ինչո՞ւ։

— Արովշետև առաջին մարտի ժամանակ ես ինքս ըրկարովացա սպանել գերմանացի։

— Այս անգամ արդեն Հարկավոր է երդումը կատարել, թե չէ շուտով պատերազմը կվերջանա, այլևս գրելիք չես ունենա ու ամբողջ կյանքում ամոթով կմնաս։ Ընկերներիդ էլ մասնակից դարձրու, այն ժամանակ ավելի հեշտ կլինի կատարել խոստումդ։



Կատաղի մարտերը տևեցին մի քանի օր, թշնամին ժանր կորուստներ էր կրում, բայց շարունակում էր դիմադրել ամեն մի բնագծում։ Մարտի ընթացքում ես սպանեցի երեք գերմանացի, երկունին՝ ավտոմատով, մեկին՝ ձեռնամարտի ժամանակ։ Ես ուրախ էի, որ իմ սեփական ձեռքերով սպանել եմ գերմանացի։ Ես ուզում էի ինքս իմ ձեռքը սեղմել, ինքս ինձ ողջունել, ճշալ։ Մեր ստորաբաժանումը բացառիկ խիզախորեն էր գործել։ Որ կողմ նայում էիր՝ գերմանացիների դիակներ էին։ Մարտից հետո ընկերներս այս ու այն կողմից շրջապատեցին ինձ։

— Հիմա արդեն գրիր, Սերգեյ, գրիր Ստեփանի մորը և պատմիր ամեն ինչ։ Պատմիր քո և մեր բոլորի մասին։

Ես սկսեցի երկար ու մանրամասն նամակ գրել։ Մեր ավագ հրամանատարը մոտեցավ ինձ ու ամուր սեղմեց ձեռքս։

— Ի՞նչ ես անում, Սերգեյ։

— Նամակ եմ գրում, ընկեր Հրամանատար:

— Սա մի ամբողջ լրագիր է, — ասաց նա, վերցնելով
բավական երկար ու դեռ շավարտած նամակը, ապա շեշտակի նայեց ինձ ու ասաց.

— Գիտե՞ս ինչ, Սերգեյ, պատուիր այս բոլորը և գրիր
միայն երկու տող, որ գերմանացիներին ջարդել ենք ինչպես
հարկն է, այնպես ենք ջարդել, որ նրանք ամբողջ Գերմա-
նիայում սուզ են հայտարարել, հասկացա՞ր:

— Հասկացա, ընկեր Հրամանատար:

Ես գրեցի միայն մի քանի խոսք և այդ խոսքերը իմ
կյանքի ամենանվիրական խոսքերն էին:

1943թ. Հունվար.



ՍԵՓԱԿԱՆ ԶԵՌՔԵՐՈՎ

Երբ մենք մտանք կապիտան Սերգեևի բլինդաժը, նա
շինելի մեջ փաթաթված պինդ քնած էր: Մի քանի օր անընդ-
հատ լարված մարտերի մեջ լինելով, նա չէր քնել. ասենք,
ինչպես քներ, քնելու ժամանակ չէր: Նա իր ստորաբաժան-
ման հետ միասին հերոսաբար կռվում էր: Հմտորեն թևան-
ցելով թշնամուն, նա շտեսնված ջարդ էր տվել նրան «Աստ-
վածների պուրակում», և կառավարությունը, բարձր գնահա-
տելով նրա ծառայությունը, պարգևատրել էր Կարմիր
Դրոշի շքանշանով: Դա երրորդ շքանշանն էր, որ ստա-
նում էր կապիտան Սերգեևը: Հատուկ հանձնարարությամբ
ես եկել էի շնորհավորելու նրան այդ բարձր պարգևի հա-
ձար:

Լեյտենանտ Լիխնը երբ իմացավ, որ ես կապիտանի
մոտ եմ եկել, ուզեց իսկույն արթնացնել նրան.

— Թողեք քնի, երկի շատ է հոգնած, — ասացի ես:

— Նրան որ թողնես, նա կքնի մինչև պատերազմի վեր-
ջանալը, որովհետեւ պատերազմի առաջին օրվանից մինչև
այսօր նա հանգիստ չի քնել, — ասաց լեյտենանտը ժպտա-
լով, ապա շրջվելով դեպի կապիտանը, թեթև հրեց նրան.

— Կապիտան, ընկեր կապիտան:

Կապիտանը, աշքերը տրորելով, նստեց տեղը ու սկսեց հայցոյել, որ չեն թողնում քնելու, ապա, հանկարծ նկատելով մեզ, զննող հայացք ձգեց մեզ վրա ու ժպտաց:

— Ես խանգարեցի՝ ձեր քունը:

— Այդ ոչինչ, իմ քունը պատերազմն է խանգարել, բայց էլի մի քիչ հանգստացա չէ՝ կենու:

— Այս՝ կապիտան, հանգստացաք:

— Այդ լավ է, նշանակում է գործը առաջ կդնա, — ասաց կապիտանը, ապա քիչ լռելուց հետո շարունակեց.

— Ես մի հրամանատար ունեի. նա քնում էր ստքի վրա, քայլելիս և մեզ հայցոյում էր, որ սովորել ենք քնել միայն պառկած վիճակում:

— Երբ մարտերը շարունակվեն մի քանի օր, դուք կը կորչեք, — կրկնում էր նա. և ճիշտ էր ասում, ես հիմա լիուվին համոզվել եմ այդ բանում, հարկավոր է սովորել քնել ոտքի վրա, քայլելիս, գործի ընթացքում. դա դժվարին արվեստ է, բայց, ինչ արած, պատերազմի ժամանակ դա անհրաժեշտ է, հարկավոր է ամեն ինչ սովորել:

Երբ կապիտանը ստքի բարձրացավ, և հայտնեցի իմ գալու նպատակը, զերմ ու սրտանց շնորհավորեցի նրան ու ցանկացա նոր, ավելի մեծ հաղթանակներ գալիք մարտերում:

Նա ժպտաց:

— Դա լավ ցանկություն է և ես սիրով ընդունում եմ այն. թշնամուն շարդել՝ դա արդար ու սուրբ գործ է:

Այդ գիշեր ես մնացի կապիտան Սերգեևի բլինդաժում. Մենք պառկեցինք իրար կողքի և ամբողջ գիշեր զրուցեցինք իրար հետ. Կապիտան Սերգեևը շատ բան պատմեց, բայց իր սեփական տան մասին արած նրա պատմությունը ես երբեք չեմ մոռանա, ինչպես ինքը՝ Սերգեևը չեր մոռանում:

Հաջորդ օրը, երբ արթնացա, կապիտանը դեռ քնած էր. օգտվելով հանգամանքից, ես հանեցի ծոցատերս ու գրի-

առա այդ պատմությունը, գրի առա այնպես, ինչպես ինձ
պատմել էր ինքը՝ կապիտանը:

Աշա այդ պատմությունը:

* * *

— Այս պատերազմի ընթացքում ես շատ բան եմ տես-
սել, — լայն ճակատը տրորելով, սկսեց Սերգեյը, — որ ինչ-
պես կարող էի շտեսնել, կոհիվ է, ամեն ինչ պատահում է,
բայց այս մեկը մտքիցս չի հեռանում, ծանր վերքի պես ա-
մեն քայլում զգացնել է տալիս իրեն, մորմորում է ինձ,
ճմլում սիրուս: Սատանան տանի, այդպես է, ամեն ինչ ան-
ցել գնացել է, կարծես նույնիսկ մոռացվել, բայց այդ մեկը
մեխվել, մնացել է սրտիս մեջ:

Այդ պատահեց իմ հայրենիքում, հասկանո՞ւմ եք, հենց
մեր գյուղում: Այն ժամանակ մենք հոգնած, անքուն նա-
հանջում էինք: Ես մոտեցա մեր հրամանատարին ու խնդրե-
ցի նրան.

— Սա մեր գյուղն, է, մերոնք այստեղ են ապրում, թո-
ղեք տեսնեմ նրանց, ասելու բան ունեմ՝ մորս, կնոջս:

— Գնա, միայն շուշանաս, չկորցնես մեզ, սառը, թե-
րևս կոպիտ պատասխանեց նա: Ես չնեղացա նրանից, բո-
լորն էլ այդ օրերին ջղային ու լարված էին և հետո՝ էլ ինչ
քաղցր խոսելու ժամանակ էր:

Ես իսկույն շտապեցի տուն: Երբ դուռը բացի, ներս-
մտա, մերոնք ուրախությունից ճշացին, վեր թռան ու վա-
զեցին դեպի ինձ: Մայրս գրկեց, համբուկեց, երեխաս փա-
թաթվեց ոտքերիս, կինս մոտեցավ ինձ, բայց, տեսնելով
մոայլ դեմքս, այլևս չհամբուրեց, բռնեց թկիցս ու մի տե-
սակ վախեցած հարցրեց ինձ.

— Ի՞նչ է պատահել:

— Ոչինչ, ի՞նչ պիտի պատահի:

— Բայց դու տխուր ես, մոայլ:

— Ի՞նչ, ուզում ես, որ ես խնդա՞մ. դա հետո, սիրելիս,

Երբ մենք կհաղթենք, իսկ հիմա նահանջում ենք և ուրախանալու քիչ բան կա:

— Իսկ մենք, մենք ի՞նչ պիտի անենք:

— Դուք էլ պիտի նահանջեք:

— Հապա մեր տունը, այգին, ունեցվածքը, —սարսափահար ասաց մայրս:

— Սիրելի մայրիկ, երբ գերմանացիները մտնեն գյուղ, քո տունը, քո այգին և քո ամբողջ ունեցվածքը այլևս քոնց չեն լինի, նրանք բոլորը կվերցնեն, կալրեն, կոչնչացնեն:

Մի պահ տիրեց լոռվթյուն: Խորհրդավոր, ծանր լոռվթյուն: Նրանք աշքերը սկեռել էին ինձ ու շգիտեին ինչ անել, ուրախանալ, որ ես եկել եմ, թե՝ տիրել, որ այդպիսի ծանր լուրեր եմ հաղորդում նրանց:

— Շարժվեք, իրար նայելու ժամանակ չէ: Վերցրեք այն ամենը, ինչ հնարավոր է, ամենակարևորը, իսկ մնացածը թողեք մնա, նրանք այլևս պետք չեն մեզ:

Մայրս ձայն չէր հանում, նա լուռ կանգնել, կարծես արձանացել էր սենյակի մեջ: Նա շվարած էր, չէր հասկանում ինչ էր կատարվում իր շուրջը, թվում էր, թե չէր լուս իմ ասածները, այլ ուրիշ բանի մասին էր մտածում, կամ, հավանութեն, ոչնչի մասին չէր մտածում, այդպիս կանգնել ու մնացել էր արձանացած: Կինս արագությամբ սկսեց հավաքել տան կարես իրերը, գասավորեց այն պայուսակներում: Ես օգնում էի նրան, դուրս էի տանում իրերը: Երբ ամեն ինչ վերջացավ, ես լուռ վերցրի նավթի մեծ ամանն ու սկսեցի արագ կերպով նավթը ցանել պատերին: Այդ բուպեին մայրս կարծես խոր քնից սթափված՝ նետվեց դեպի ինձ:

— Ի՞նչ ես անում, վալոդյա, —ասաց նա սարսափուհար:

— Այրում եմ տունը, մայրիկ. Երբ մենք հեռանում ենք այստեղից, սա այլևս մեր տունը չէ, իսկ մեր հարկի տակ, մեր օջախում գերմանացի շպետք է ապրի, ավելի լավ

է ազրել, քան թողնել, որ պղծեն մեր տունը, ոճիրների բուն
դարձնեն այս:

— Ռոբերտն այրո՞ւմ ես,—դողդոջուն, Հազիվ լսելի ձայ-
նով ասաց նա:

— Այո, մայրիկ, հարկավոր է արել, ոչինչ, ոչինչ
չպիտի թողնել նրանց:

Մայրս այլևս ոչինչ շխոսեց, մի անգամ էլ նայեց տան
շորս կողմը ու կարոտի վշտով լուս գույս եկավ տնից ու
գնաց խնձորենու ծառի մոտ, որտեղ թափված էին տան ի-
րերը: Ես արագությամբ վերցրի նավթու շորը, վառեցի այն
ու դցեցի սենյակի մեջ:

Կրակն իսկույն բռնկեց: Տունը լցվեց ծխով, որի թանձը
քուլաները սկսեցին դուրս գալ պատուհաններից, գռներից,
տան ամեն մի անկյունից: Քիչ հետո ծխի քուլաների հետ
երևացին նաև կրակի կարմիր լեզուները, որ ջահերի նման
լուսավորեցին ամբողջ գյուղը:

Կրակը հետզհետե մհծանում և արագությամբ լափում
էր չոր տախտակներն ու սյուները:

Մայրս հենվել էր խնձորենուն, ծածկել երեսը ու լաց էր
լինում: Ես գիտեի, որ շատ ծանր էր նրա համար տեսնել իր
սեփական տունը՝ այրվելիս, չէ՞ որ խեղճ կնոջ ամբողջ
կյանքն այդտեղ է անցել, այդ փոքրիկ փայտե տան մեջ
և այժմ զրկվում է նրանից: Ես չգիտեի ինչպես հանգստաց-
նել նրան, խոսք չէի գտնում մխիթարելու:

— Լաց մի լինի, մայրիկ, ոչինչ, երբ մենք վերադառ-
նանք, ես քեզ համար մի նոր տուն կշինեմ, ավելի լավը,
այնպիսի տուն, որի մեջ մենք հանգիստ, բախտավոր կապ-
րենք:

Ինձ համար էլ ծանր էր նայել կրակի մեջ այրվող մեր
հարազատ տանը, չէ՞ որ ես ծնվել, մեծացել եմ նրա մեջ,
իմ մանկությունը, իմ ուրախ ու տիխուր օրերը նույնպես ան-
ցել էին այդտեղ, բայց, ինչ արած, հարկավոր էր այրել:
Ոչինչ չպիտի թողնել սրիկաներին, մոխրակույտեր ու մոխ-
րակույտեր միայն պիտի թողնել նրանց:

Փոքրիկ սայլը՝ մի տան իրերով, շարժվեց դեպի արեւիլք: Մենք լուս քայլում էինք նրա հոտեփոց ու հաճախակիլ ետ էինք նայում ու սրտի մորմոքով տեսնում մեր տանը, որ մոխրանում էր ծիսի ու կրակի մեջ:

Հատ հեռվից, դարձյալ երեսում էր մեր տնից բարձրացող թանձր ծուխը: Մենք արագ հեռացանք գյուղից, չտեսանք մեր այրվող տան ցցված սև պատերը, նրա մոխրակույտերը. այդ թողեցինք, որ իրենք, վերմանացիները տեսնեն ու իմանան, որ Ռուսաստանը դա Ֆրանսիա չէ, որի շքեղ օթելներում նրանք կարող էին խրախճանքներ տարբել: Ռուս մարդը հպարտ է, կամակոր, նա տուն չունի, որտեղ կարողանա ապրել գերմանացին, որի հարկի տակ նա կարողանա պղծել ուս մարդու սուրբ պատիվը:



Բավական ժամանակ էր անցել այդ օրից: Ամեն անգամ, տանից նամակ ստանալիս, կինս գրում էր, որ մայրի վշտից նիհարել, անձանաշելի է դարձել, որ նա չի մոռանում իր հարազատ տունը, այգին, ջրհորը և ամեն օր կըրկնում է, թե երբ ենք նորից վերադառնալու մեր օջախը: Կնոջս վերջին նամակում մայրս էլ մի քանի տող էր գրել, ստանան տանի, խեղճ կինը չի կարողանում ապրել օտարության մեջ: Տեսեք, ինչ է գրում.

«Վալոդյա, սիրելի տղաս, ես համբուրում եմ քեզ, որ աշդպես քաջ ես. փոքր ժամանակդ էլ դու անվախ, կովասեր էիր: Մենք բոլորս ուրախ ենք, որ քեզ պարզեատրել են: Վալոդյա, այնպես արա, որ շուտ վերադառնանք մեր գյուղը: Ես շատ եմ պառակել կարող է մեռնեմ, իսկ մեռնել ուզում եմ մեր գյուղում, հորդ կողքին, մեր հարազատների մոտ: Մի բարկանա վրաս, Վալոդյա, ինձ համար դժվար է ապրել օտարության մեջ»:

Ի՞նչ պատախանել խեղճ կնոջը, ես ինքս եմ կարուտել մեր գեղեցիկ բնությանը, մեր ջրերին, անտառներին,

մեր սիրելի փոքրիկ տանը... Եվ այժմ այդ տունը մնացել է գերության մեջ. Ճիշտ է, նրա սև մոխրակույտերն են մնացել, բայց հենց այդ մոխրակույտերն ել ինձ հանգիստ շեն տպիս:

Ամեն անգամ, երբ սկսվում էին մարտերը, իմ առաջ նորից ներկվում էր Հորիզոնը, մեր այրվող տան բոցերը կարծես նորից բարձրանում էին իմ աշխի առաջ, ճիշում եմ մորս արցունքները, թվում է՝ այդ բոցերի մեջ ճշում է կինս, երեխաս, և բորբոքվում է սիրտս, երակներիս մեջ եռում է արյունը: Վրեժի թույնը կրծում է Հոգիս, ու ես մոռանում եմ ամեն ինչ: Կովել ու անխնա ոչնչացնել սրիկաներին, վրեժինդիր լինել ամեն ինչի և ամենքի համար:

Ինձ անշափ Հուզեց կապիտանի պարզ ու անկեղծ պատմությունը: Ես ամուր սեղմեցի նրա ձեռքը և այդ օրվանից մենք դարձանք բարեկամներ: Նա խոստացավ ինձ գրել իր ապագա մարտական գործողությունների մասին, իր ապրած օրերի, ինչպես նաև մոր, կնոջ ու երեխայի մասին:

Անցան ամիսներ: Ես ոչ մի լուր չունեի կապիտան Սերգեեկց: Ես նրան մի քանի նամակ էի գրել, սակայն պատասխան չկար: Ամեն անգամ նրան ճիշելիս, մի անծանոթ տիսրություն էր պատում ինձ: Ես գիտեմ ինչ բան է պատերազմը, տեսել ու զգացել եմ այն: Ես շատ անհանգիստ էի՝ մինի՛ սպանվել է նա, այդ սքանչելի մարդը: Բայց մի ներքին ձայն կարծես ինձ միշտ հանգստացնում էր, որ նրան սշինչ լի պատահել, որ վաղ թե ուշ՝ լուր կստացվի նրանից, և ես իսկապես ստացա:

Սկզբում չէի ուզում հավատալ, որ նամակը նրանից է, որ այդ գրել է ինքը՝ Սերգեել:

Ահա ինչ էր գրում նա.

«... Դուք, հավանորեն, ինձ անպարտահանալ սկա եք համարում, չէ՞ որ ես խոստացել էի ձեզ նամակ գրել, բայց

պատահեց այնպիս, որ ես Հնարավորություն չունեցա անդամ ձեր նամակներին պատասխանելու: Չեմ կասկածում, որ ի՞նձ հայոցի եք գուք իրավացի եք դրանում, նաև՝ Հնարավոր է զրել բոլոր պայմաններում, բայց, անկեղծությամբ խօստովանեմ, մերոնց էլ կնոշ ու մայրիկիս չեմ դրել:

— Ինչո՞ւ, — կհարցնեք ինձ:

Մեր զորքերի հարձակման ամբողջ ժամանակամիջոցում մենք մարտերի մեջ էինք, թիժ ու հետաքրքիր մարտերի մեջ: Զեզ պիտի հայտնեմ, որ իմ երազը իրականացավ, մենք կովում ենք Ռուբախնայում, իմ հայրենիքում. ավելին, ինձ, բախտավորիս, միճակվեց մարտեր մղել մեր շրջանում, մեր զուողի համար: Հասկանո՞ւմ եք դա ինչ է նշանակում, ինձ՝ Մերգեկիս համար:

Հեռվից երևում էին հրդեհի հրեղեն սյուները: Այդպես էր մեր գյուղը, եթե մենք հեռանում էինք այնտեղից, այդպես էր գերմանացիների տիրապետության ժամանակ, այդպես էր և այժմ, երբ մենք մոտենում էինք նրան. գերմանացիներն այրում էին անվնաս մնացած վերջին տները: Մեզ հաջողվեց բանել այդ հրկիզողներից մի քանիսին. նրանց աշքերը մութ, արյունոտված էին, ձեռքերը՝ նավթոտ ու մրոտ: Հրդեհի ու արյան հոս էր փշում նրանցից:

— Ինչո՞ւ եք այրում խեղճ գյուղացիների տները, — հարցը նրանց:

Նրանք փայտացած կանգնել ու ոչինչ չեն պատասխանում:

— Զեզ հետ եմ, սրիկաներ, ինչո՞ւ եք այրում, սա մեր գյուղն է, մեր հարազատներին սպանել եք բավական չէ, տնե՞րն էլ եք այրում:

— Մեզ հրամայել են, — վերջապես խոսեց նրանցից մեկը, իսկ մյուսները բութ ու ապուշ հայցքները հառել էին ինձ ու տեղներից անգամ չեն շարժվում: Ոչինչ, ոչինչ ըրկար նրանց մեջ մարդկային: Բավական է նրանցից մեկը շարժվեր՝ մյուսները կրկնում էին նույնը: Մեկը քայլում էր,

մյուսները հետեւամ էին նրան; Անկյանք, անարյում մեքենաներ, ավտոմատներ էին նրանք:

Նախքան նրանց համապատասխան ճամբար ուղարկելը, ես հրամայեցի, որ նրանց բոլորին քշեն այդ ծխացող տների մոտ և հենց այդ նույն մրոտ ձեռներով մոխիրների միջից հանեն տաք աղյուսները և սկսեն կառուցել այրված խրճիթները: Եվ, ինչ եք կարծում, մի քանի օրում նրանք կառուցեցին 16 տուն: Օր ու գիշեր աշխատում էին:

— Հոգնել եք, — հարցրի նրանց տվագին:

— Այո՛, — պատասխանեց նա:

— Դեռ վաղ է հոգնել. ամբողջ Ծուսաստանը այդպես քարուքանդ եք արել, այժմ հարկավոր է կառուցել: Ես, իշարկե, հասկանում եմ, որ ավերեն ավելի հեշտ է, քան կառուցելը: Բայց անցել է հեշտ ապրելու շրջանը, այժմ անիվը շրջվել է, սկսվել է ծանր շրջանը, կառուցելու շրջանը: Ես ձեզ հասկանում եմ, դուք անսովոր եք դրան, բայց, ոչինչ, կուլորեք: Մենք միշտ ձեր գլխի վերելը կանգնած կլինենք, մենք գիտենք, շատ լավ գիտենք, թե որտեղից է ընկել ամեն մի աղյուսը և որտեղ պիտի դնել այն:

Մի ուրիշ նամակում նա ինձ գրում է.

...Ծագմական գործողություններն այժմ մեր գյուղից տասնյակ կիլոմետրեր հեռու են: Մայրս, կինս, երեխան արդեն վերադարձել են գյուղ: Ես նույնպես գյուղումն եմ, մերոնց մոտ: Միասին կառուցում ենք մեր ավերված տունը և, պիտի ասեմ, շուտով շատ շուտով կավարտենք այն:

Գիտեմ՝ կհարցնեք, ինչպես է, որ ես գյուղումն եմ: Պատասխանում եմ: Մեր շրջանի համար մղված մարտերում իմ ստորաբաժանումը նորից աչքի ընկալ, և ինձ, իմ ընկերների հետ միասին, պարզեատերեցին: Ես ստացա շորրորդ շքանշանը և մեկ ամիս արձակուրդ: Որոշեցի արձակուրդու սկտագործել գյուղում ու կառուցել տունը: Մի սենյակ ար-

դեն պատրաստ է, շուտով պատրաստ կլինի և երկրորդը, կմնա խոհանոցն ու սրահը: Մեր ընտանիքում այժմ լուրջ վեճ է պնում: իմ ու կնոջս կարծիքով նոր տունն ավելի լավ ու գեղեցիկ է, քան Հինը, մայրս հակառակն է պնդում, նա ասում է՝ Հին տունը ավելի լավն էր, նա պապդ էր կառուցել, իսկ պապդ հայտնի վարպետ էր: Վեճը դեռ շարունակվում է, բայց, հավատացած եմ, տունը ավարտելուց հետո մայրս էլ կհամոզվի, որ նոր տունը ավելի լավն է:

Սրիկա գերմանացիները մեր ընկույզենու ծառը կտրել ու այրել են, դրա փոխարեն այգում թողել են ուրիշ բան՝ ընկույզենու մոտ կա գերմանական չորս հողաթումբ, վրան տնկած փայտե խաչեր: Մայրս ու կինս ուղեցին՝ քանդել այդ փայտերը, բայց ես չթողեցի.

— Թող մնա, դրանք լատերազմի շրջանի տունկեր են, ընկույզենու փոխարեն է, թող մնա: Իմ կարծիքով, մորմոքված հոգու համար չկա ավելի հանգստացուցիչ տեսարան, քան փայտե խաչերի այդ շարանը:

Գյուղում համարյա ամեր օր սունկերի պես բուսնում են նոր տներ: Մեծ, փոքր, ծեր, երեխա—բոլորը—շտեսնված եռանդով աշխատում, վերակառուցում ու կարգի նն բերում գյուղը: Եկվորները պատմում են, որ այդպես է Ուկրաինայի ազատագրված բոլոր շրջաններում:

Մոխիրների միջից վերածնվում է իմ սքանչելի հայրենիքը՝ մեծ Ռմիրախինան:

Այսուհետեւ նա հավիտյան կմնա անպարտելի»:



ՄԱՐԻՆԱ

1. ՄԻԱՅՑԱԿ ԿՇՆԸ ՌԱԶՄԻ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

Դեպի ուազմաճակատ տանող խճուղու լայն ճանապարհով, փոքրիկ պայուսակը մեջքին, քայլում էր մի կին: Ճանապարհով անցնող մյուս մարդկանց նման նա ոչ նայում էր շորս կողմբ ցիրուցան ընկած, այրված ու ջարդված մեքենաներին, ոչ հարցուփորձ էր անում անցուդարձ անողներին, այլ միայնակ ու լուս քայլում էր: Երբորդ օրն էր, որ նա այդ ձիգ, երկար ճանապարհով քայլում էր և, թվում էր, թե վերջ չկար գրան, այդպես պիտի քայլի մինչև իր կյանքի վերջը:

Ուազմաճակատից եկող մարդիկ տարակուսանքով նայում էին նրա խիստ դժգույն դեմքին, վստահ քայլերին ու այլես չէին փորձում հարցնելու, թե որտեղից է գալիս նա և ուր է գնում:

— Երեք տիրել է ամուսնու համար, նրա մոտ է գընում, — ասում էին նրանք ու դառնորեն ժպտում:

Անտարբեր այդ բոլորի հանդեպ, կինը շարունակում էր քայլել առաջ, երեկոյան դեմ նա հասավ ուազմաճակատի

մոտ գտնվող ավերված մի գյուղը: Դյուզում երկու զինվորական մոտեցան կնոջն ու հարցրին փաստաթուղթ:

Կինը դանդաղ բարձրացրեց գլուխը, նայեց շորս կողմը, ուր համարյա ոչինչ չկար բացի ավերված տների ցցված պատերից և ամենուրեք թափված-ջարդված ավտոմեքենաներից, տանկերից ու հրանոթներից:

— Ես փաստաթուղթ չունեմ,—ասաց նա ու շարունակեց նայել շորս կողմը: Թվում էր, թե ինքն էլ էր զարմացել, թե ե՞րբ, ո՞րտեղից և ո՞նց է ընկել այդ ավերակների մեջ:

— Ո՞ւր եք գնում,—հարցրեց զինվորականը:

— Առզմաճակատ:

— Հասլա ինչպի՞ս եք գնում ուազմաճակատ առանց փաստաթղթի:

— Իսկ այդ շամար անհրաժեշտ է կովելու համար:

— Եթե հարցնում են, նշանակում է անհրաժեշտ է: Կինը նորից հանգիստ կրկնեց.

— Փաստաթուղթ չունեմ:

— Այդ վաս է, որ փաստաթուղթ չունեք,—ասաց նրանցից ավագն ու կարգագրեց կնոջը հետեւլու իրեն:

Կինը լուռ, առանց հակաճառելու, հետեւց նրանց այնքան անտարբեր, որ կարծես առանձնապես ոչինչ չեր պատահել և շարունակում էր իր սովորական ճանապարհը:

Մոտավորապես հարյուր քայլ գնալուց հետո, նրանք մտան մի ավերված տան ներքնահարկ, նրանցից մեկը մընաց դռան մոտ՝ հսկելու կնոջը, իսկ մյուսը ներս մտավ ու զեկուցեց մայորին անծանոթ կնոջ մասին:

— Որտե՞ղ է նա հիմա,—հարցրեց մայորը:

— Գորսը սպասում է, ընկեր մայոր:

— Ներս կանչիր:

Մարտիկն իսկույն ներս հրավիրեց կնոջը ու ինքը թույլավություն խնդրեց հեռանալու:

— Գնացեք,—ասաց մայորը ու երեսը շրջեց գեղի երիտասարդ կինը, որ անշարժ կանգնած էր դռան շեմքին:

- Մոտ եկեք, — դարձավ մայորը կնոջը:
 Նա լուս ու հանգիստ մոտեցավ:
 — Ինչպէ՞ս է ձեր անունը, — հարցրեց մայորը, նայեալով նրան ոտից-զլովս:
 — Ի՞մ:
 — Այո, ի՞հարկե, ձեռ:
 — Մարինա:
 — Ինչպէ՞ս եք ընկել այստեղ, Մարինա, ո՞ւր եք գընում:
 — Ճակատ, կովելու գերմանացիների դեմ:
 — Ամուսին, երեխաներ ունե՞ք:
 — Ունեի, բայց չիմա ոչ ոք շունեմ, մենակ եմ, զբահամար էլ եկել եմ ուղմաճակատ:
 — Գերի մնացե՞լ եք գերմանացիների մոտ:
 — Այո, նրանք հանկարծակի մտան քաղաք, և մենք չկարողացանք փախչել:
 — Հասկանալի է:

Մայորն այս շարունակեց իր հարցաքննությունը: Երիտասարդ կինը խիստ կասկածելի էր թվում նրա աշքին, անհրաժեշտ էր նրան ուղարկել համապատասխան բաժին՝ հատուկ քննության: Նա վերցրեց դաշտային հեռախոսի փողը, խոսեց ինչ-որ մի ուրիշ մայորի հետ, ու մի քանի բոլեկից հետո եկավ մի ավտոմատավոր ու տարավ կնոջը:

* * *

Մի քանի օր շարունակ կինը ոշինչ շէր ուղում ասել իր մասին: Հատուկ բաժնի պէտ կրասնովի հարցերին նա անուրոշ ու ընդհանուր պատասխաններ էր տալիս և ոչ մի կերպ չէր ուղում խոստովանել այն ամենը, ինչ նրան բերել ու հասցրել էր այդ ավերակներին: Խոսելիս նա անվերջ ներվագիր շարժումներ էր անում ու տարօրինակ, հիվանդու հայացքով անթարթ նայում էր այս կամ այն կետի:

Այդ կնոջ մասին զեկուցեցին զորամասի հրամանատա-

քին, քաղբաժնի պետին, որոնք Հետաքրքրության համար եկան նրան տեսնելու, նույնիսկ մի քանի հարցեր տվեցին, բայց պատասխանները նույնն էին:

Նրանք համարյա միաձայն այն համոզմանն էին, որ կինը լրտես է, և կարիք չկար զրա համար երկար գլուխ ցավեցնել:

Մայոր Կրասնովը, որ նախկին փորձված շեկիստ էր, շհակառակից ընդհանուր կարծիքին, բայց ասաց, որ նախդան վերջնական վճիռ կայացնելը ինքը մի անգամ էլ ուղղում է հարցաքննել:

Այդ նույն երեկոյան նա կանչեց կնոջն իր մոտ ու կտրականակիս ասաց նրան.

— Քանի որ դուք համառում եք և ոչինչ շեք ուղղում ունել ձեր մասին, ապա մենք ակամա ստիպված ենք մտածելու, որ դուք գերմանական լրտես եք և ուղղում եք սահմանն անցնել:

— Ե՞ս,—հանգիստ հարցրեց երիտասարդ կինը, կարծես լրիվ շհասկանալով պետի խոսքերի իմաստը:

— Այո՛, դուք:

— Ո՞չ, դուք սիսալվում եք,—ասաց կինը, դառնորեն ժպտալով, ապա, տարօրինակ ու խիստ հայացքը հառելով պետին, շարունակեց.

— Ես ինչպես կարող եմ գերմանական լրտես լինել: Զէ՞ որ ես ամբողջ հոգով ատում եմ նրանց. եթե դուք միայն իմանայիք, թե ես ինչքա՞ն եմ ատում նրանց: Զէ՞ որ այդ ատելությունն է ինձ բերել ձեզ մոտ, այստեղ, չէ՞ որ ես եկել եմ նույնպես ոչնչացնելու նրանց: Ահա, այս ձեռքերով, տեսնո՞ւմ եք, այս ձեռքերով ես արդեն սպանել եմ մի նշանավոր օֆիցերի, — ասաց կինը դողացող, բայց հապու ձայնով:

— Ինչպե՞ս, դուք սպանել եք գերմանական նշանավոր օֆիցերի՝, — զարմանքով հարցրեց մայորը,

— Այո՛:

Կինը թեքվեց, քանդեց պատառութած կոշիկի կրունկի

թելը և նրա արանքից հանեց գերմանական օֆիցերի փաստաթվերն ու հանձնեց մայորին, որ այդ ռոպեին, հրդածաշըքիրն ամբողջ մեծովաճախ բացած, նայում էր կնոր ամեն մի շարժումին։ Մայորը ոչ թե վերցրեց, այլ գրեթե խլեց այդ փաստաթվերը ու սկսեց արագ կերպով նաշել տրորված թղթերի ամեն մի կտորին։ Նա լավ գիտեր գերմաներեն և հեշտովաճախ կարդաց այդ փաստաթվերը։ Բավական երկար նա նայեց վոքրիկ, կաշվե շապիկով կազմած ու սոկե տառերով վրան գրած մի տոմսի։ Դա գերմանական օֆիցերի անձնական վկայականն էր՝ օֆիցերի խիստ գոհ ու հպարտ նկարով։

— Ուրիմն դուք սպանել եք սրա՞ն, այո՞,—ասաց Կրասնովը, ցուց տալով օֆիցերի վկայականի նկարը։

— Այո՞,—անտարբեր պատասխանեց նա։

— Իսկ գիտե՞ք ով էր, ինչ գործի էր սա։

— Ո՞չ, գիտեի միայն, որ օֆիցեր է և նշանավոր դիրք է գրավում գերմանական շտաբում։ Նա ուներ մհքենա, ապրում էր չափազանց ճոխ ու շռալ։

— Դուք սպանել եք պատժի ջոկատների ընդհանուր շտարի պետին, շատ նշանավոր մի մարդու։ Դե, պատմեք, Մարինա, թե որտեղ, ինչպիս սպանեցիք նրան։ դա շափականց հետաքրքիր ու կարեոր է գործի համար։

— Ոչ, չեմ կարող,—վճռականապես մերժեց Մարինան, — չեմ կարող։

— Ինչո՞ւ, — գարմացած ասաց Կրասնովը։

— Չեմ կարող, ծանր է ինձ համար խոսել. հավատացեք, այլիս ուժ չկա իմ մեջ, թողեք ինձ հանգիստ, թողեք լուս մնամ և այսպես լուս էլ վրեժինդիր լինեմ թշնամուց։

— Բայց...

— Ոչ, — ընդհատեց կինը, — չեմ կարող, ինչո՞ւ եք ինձ ստիպում, չէ՞ որ դուք մերն եք, սովետական մարդ եք, բավական է, ինչքան ես տանջվել եմ. ես եկել եմ ճակատ՝ կը ովելու թշնամու դեմ, այլ ոչ թե իմ կյանքը պատմելու։

Պետք հանգստացրեց նրան, ապա, ուղիղ բարձրանալով, սկսեց ետ ու առաջ քայլել:

Երկուսն էլ լուր էին: Այդ լուրիցունդ տեսց մի քանի բոպե: Վերջապես մայոր Կրասնովը կանգնեց ու մեղմ ձայնով գարձալ կնոջը.

— Դուք բուրջ կին եք, ինքներդ պիտի հասկանաք, որ նրանք, որոնց մենք ուղարկում ենք կռվելու թշնամու դեմ, պիտի հավատացած լինենք, որ չեն դավաճանի մեզ, որ կոմի վճռական պահին հրացանը չեն ուղղի մեր զեմ: Ես տեսնում եմ, որ դուք ազնիվ կին եք, ես հավատում եմ ձեզ, բայց դուք պիտի իմանաք, որ օրենքն է պահանջում, որ մենք ձանաշնչնք ամեն մի մարտիկի, իմանանք նրա անցալն ու ներկան, նրա կյանքը, նրա սիրոն ու հոգին: Իսկ Եթե նրանք բոլորն էլ ձեզ պես լուսն, մենք ինչպե՞ս կարող ենք ստուգել, չե՞ որ ես իմ քմահաճույքի համար չեմ, որ ուզում եմ իմանալ ձեր ով լինելը, այլ օրենքը, հայրենիքն է պահանջում այդ:

— Ինչպե՞ս, օրենքը, հայրենիքը, — կինը կրկնեց այդ բառերը ու կարծես նոր, առաջին անգամն էր հասկանում նրանց իմաստը:

— Այո, օրենքը, հայրենիքը:

Կինը երկու ձեռքով ծածկեց աշքերը, գլուխը խոնարհեց կրծքին ու խեղզով, հազիվ լսելի ձայնով շշնչաց,

— Ես ձեզ հասկանում եմ, դուք իրավացի եք, բայց ինձ համար գժիքար է խոսել, հավատացեք ինձ, ես չեմ կարող այդ բոլորը իմ լեզվով կրկնել, դա սպանիչ է ինձ համար:

Նա երեսը շրջեց դեպի պատը ու մնաց այդպիս արձանացած:

— Գուցե դուք հոգնած եք, հանգստանալ եք ուզում, — ասաց Կրասնովը:

Կինը հանկարծ շրջեց երեսը:

— Ո՛չ, ես հոգնած չեմ: Եթե օրենքը պահանջում է, ապա ես ամեն ինչ կպատմեմ ձեզ: Բայց խոսք տվեք ինձ,

Քրդվեցէք, որ միայն դուք, միայն դուք պիտի իմանաք և ուրիշ ոչ ոք:

— Հավատացած - եղեք, որ այդպես էլ կլինի, — ասաց Կրասնովը, աթոռ առաջարկելով նրան:

2. ՄԱՆՈՒԿԵՐԻ ԱՇԽԱՌԱՅՈՒՄ

Երիտասարդ կինը խոշոր, կլոր աշքերը հառեց պետին ու համարձակ դարձավ նրան.

— Դուք առաջին և վերջին մարդն եք, որ կարողացաք շարժել լիզուս, բայց ես ձեզանից մի բան եմ խնդրում՝ ոչ մի հարցով ինձ ընդհատեք, ես կաշխատեմ ամեն ինչ ասել ձեզ, ոչինչ չեմ թարցնի ձեզնից: Ես չպիտի խոսեի, բայց երբ այդպես եղավ, ապա համոզված եղեք, որ դուք ամեն ինչ կիմանաք, կիմանաք այնպես, ինչպես այդ եղել է իրականում:

Երիտասարդ կինը լոեց, կնճռոտեց ճակատը, սարսափահար բացեց աշքերը ամբողջ մեծությամբ, կարծես նրան բերել կանգնեցրել են անդունդի առջև ու ստիպում են, որ իրեն նետի այդ անդունդը:

— Ես, — ասաց նա, — երեսի չկարողանամ մտքես կանոնավոր շարադրել, դուք աշխատեցէք մի կերպ հասկանալ ինձ: Միայն ես չգիտեմ ինչից սկսել, ուզում եմ ասել ո՞ր ժամանակից: Բայց, ինձ թվում է, այդ այնքան էլ կարեոր չէ. ձեզ համար կարեորն այն է, որ ես պատմեմ ճշմարտությունը:

— Սկսեք այնպես, ինչպես ինքներդ եք ցանկանում, և առհասարակ խնդրում եմ եղեք միանգամայն ազատ:

— Կուզե՞ք սկսեմ... բայց ոչ, սպասեք, ավելի լավ է պատմեմ այն օրից, երբ ես ավարտեցի Մոսկվայի մանկավարժական ինստիտուտը և եկա մեր քաղաքն աշխատելու: Այն ժամանակ ինձ անշափ բախտավոր էի զգում: Եվ իսկապես, ես բախտավոր էի, շատ բախտավոր, անվերջ ծի-

ծաղում էի, Հիմա էլ Հիշում եմ, որ մայրս միշտ Հանգիմանում էր ինձ:

— Աղջիկս, քիչ ծիծաղիր, այդքան չը կարեցի ծիծաղել, կարող է վատ բան պատահել, — անվերջ կրկնում էր նա:

Իսկ ես, անպիտանս, շարունակում էի ծիծաղել, տռանց զգալու, որ ես սպառում էի իմ կյանքի ամբողջ ծիծաղը և մնալու են միայն վիշտը, կոկիծը ու դաժան, սպանիչ մըտքերը:

— Երբ ավարտեցի ինստիտուտը, և աղջիկներս խմբով ներկայացանք լուսժողկոմատ, մեզ ասացին, թե ինչ պաշտոններ կան: Ապրերի բաժնի վարիչը ժպտալով ասաց.

— Մի լավ տեղ էլ ոմեմ. լուսավորության ասպարեզում աշխատողների երեխաների մանկապարտեզում կա գրւիավոր դաստիարակչություն պաշտոն. և աշխատավարձը, և պայմանները շատ լավ են, խորհուրդ եմ տալիս գնալ. ով էլ գնալու լինի ծեզնից, հավատացած եմ, գուշ կմնա: Ընկերունիներս հրաժարվեցին, իսկ ես համաձայնեցի: Մանկապարտեզում ես աշխատել էի մինչև ինստիտուտ մանելը. ինձ ծանոթ էր այդ աշխատանքը և հետո ես անշափ սիրում էի երեխաներին: Դուք երեխ զարմանաք, որ ես ասում եմ, թե երեխաները շատ եմ սիրում, նույնիսկ ավելի շատ, քան սորիշները: Մի խոսքով, ես համաձայնեցի գնալ մանկապարտեզում աշխատելու:

Առաջին ամիսները մի տեսակ չգիտեի՝ լավ եմ արել, թե ոչ, որ գպրցի փոխարեն մանկապարտեզում եմ աշխատում: Բայց հետո համոզվեցի, որ չեմ սխալվել: Թու իմասցիք, ես այնտեղ ինչքա՞ն լավ էի զգում ինձ, ինչքա՞ն բախտավոր: Դուք չգիտեք, թե ինչ է նշանակում մանկական աշխարհ. այնտեղ չկա ոչ կեղծիք, ոչ սուս, ամեն ինչ պարզ է ու անմիջական: Առանց կողմնակի ճանապարհների, երեխան ասում է այն, ինչ մտածում է: Եվ ինչքան գրավիչ ու հարուստ է նրանց մանկական մտածելակերպը: Ես այնքան էի ընտելացել նրանց կյանքին, որ մտածում ու խոսում էի երեխայի պես: Ընկերներս նկատել էին այդ, ծիծաղում էին

ու հանդիմանում ինձ: Նրանք չեն սխալվում, ևս իսկապես շատ էի ընտելացել երեխաներին. նրանց կյանքը, մտաշխարհը դարձել էր իմ սեփականը:

Ինձ սիրում էին ոչ միայն երեխաները, այլև նրանց ծընողները, նրանք ինձ համար նվերներ էին ըերում, ինձ հրավիրում էին համարյա բոլոր երեխաների ծննդյան տոներին, և մենք ուրախանում, պարում, երգում էինք:

Բայց հիշում եմ, մի օր, ճաշից հետո, ծնողները սովորականի պես եկան իրենց երեխաներին տարան, աշխատակիցներն էլ աստիճանաբար ցրվեցին: Ես հենվել էի պատըշդամբի սյունին ու նայում էի դուրս: Փողոցի մալթով մի երիտասարդ կին, երեխայի հետ խաղալով, քայլում էր: Նաչք կարողանում զապել իր մայրական զգացմունքները, հանապարհին անվերջ գրկում, համբուրում ու շոյում էր երեխային:

Մայր...

Որքան նուրբ, որքան քաղցր զգացմունքներ կան քո հոգու խորքում...

Ես հանկարծ տիսրեցի, այնպես տիսրեցի, որ, անկեղծասած, ուզում էի լաց լինել: Ես առաջին անգամ զգացի, որ այն բոլոր երեխաները, որոնց ես սիրում, փայփայում ու դաստիարակում էի, ուղիղի երեխաներ են: Այս, նրանք ունեն իրենց ծնողները, որոնք մի օր կարող են այլքս իրենց երեխաներին շբերել մանկապարտեզ: Ես այդ բոպեին այնպես ցանկացա ունենալ իմ սեփական երեխան, որ, մոռապես աղով ամոթի զգացումը, մոտեցա մեր խոհարարութուն և ուղղակի ասացի նրան.

— Ֆրույա մորաքուլը, ես այնպես ուզում եմ երեխանունալ, սեփական երեխա:

— Աղջիկս, էլ ինչ՝ ես սպասում, ամուսնացիր. ուզես-շուզես, կունենաս երեխա, այն էլ մեկի փոխարեն՝ ութը, ինչպես ես:

— Մինչև ամուսին գտնել, ամուսնանալ, հետո ամիս-

Ներ անցնեն, հետո նոր երեխա ունենալ. չէ, դա երկար պատմություն է, ես Հիմա եմ ուզում, հենց հիմա:

— Չէ, այդպես չի լինի, աղջիկս,—մեղմ ժպտալով ասաց Ֆրույա մորաքուրը,—էդ բոլոր երեխաների մայրերը քեզ պես աղջիկ են եղել, ամուսնացել են, տուն են սարքել և հետո ժամանակի բնիթացքում երեխա են ունեցել: Դա արդեն աշխարհի օրենքն է, ուրիշ կերպ չի կարող լինել: Այն՝ Հեքիաթների մեջ է, որ ասում են՝ գնացին, ծովից կամ գետից երեխա հանեցին ու բերին:

Այդ օրվանից երեխա ունենալու միտքը այլևս չէր թողնում ինձ: Բայց ամուսնանալու մասին չի մտածում: Մանավանդ մի քայլի ամուսինների մասին վատ բան էի լսել, ինձ Ֆրույա մորաքուրն էր պատմել: Նրանք երեխա են ունենում և հետո բաժանվում իրենց կանանցից: Ինչ սոսկալի բան է այդ: Ունենալ երեխա և բաժանվել ամուսնուց, քայլքայել ընտանիքը: Սարսափում էի այն մտքից, որ կարող է պատահել ես էլ երեխա ունենամ, հետո ամուսինս թողնի, հեռանա ինձանից: Հիմա էլ շատ լավ հիշում եմ, թե ինչպես ամուսնանալու նախօրյակին մի օր ուղղակի դարձա իմ ապագա ամուսնուն և ասացի նրան.

— Վալողյա, երբ ես երեխա ունենամ, դու ինձ չես թողնի, չէ՞:

— Ինչո՞ւ ես այդպիսի բաներ մտածում, չէ՞ որ ես երբեք առիթ չեմ տվել զրան և, վերջապես, ինչո՞ւ պիտի թողնեմ քեզ:

— Այս, ես ուղիղ եմ ասում. ինչ մտածում, այն էլ ասում եմ. Եթե թողնելու ես ինձ, ապա արի չամուսնանք: Ես չեմ ուզում, որ իմ երեխան հայր չունենա:

Վալողյան ծիծաղեց:

— Դու մի՛ ծիծաղիր, ես երեխայի համար եմ ամուսնանում, ես առանց երեխայի չեմ կարող ապրել:

— Թող այդ հիմար մտքերդ,—ասաց Վալողյան:

Ես ամուսնացա վալողյայի հետ: Ախ, եթե իմանայիք ես ինչքա՞ն բախտավոր էի: Վալողյան ճարտարապետ էր, մի

ազնիվ ու լավ մարդ, իսկական ամուսին և հայր Ես չեմ
հավատում այն կանանց, որոնք գանգատվում էին իրենց
ամուսիններից, ինձ թվում էր, և ես հավատացած էի, թե բո-
լոր ամուսինները Վալոդյայի պես լավն են, ազնիվ ու մաքուր:

Մենք շուտով մի տղա ունեցանք: Տարի ու կես հետո
ունեցանք երկրորդը: Ինչքան լավ երեխաներ էին: Գիտե՞ք
ինչպես էի ես պահում նրանց: Զէ՞ որ ես մանկապարտեզում
շատ մայրերի հետ էի ծանոթ, նրանցից ամեն մեկից մի
բան էի սովորել, ես ինքս էլ զգում էի, որ ես լավ մայր եմ.
այդ երեսում էր նաև իմ երեխաներից: Այո, ես այդ շեմ
թաքցնում, ես հապարտանում էի դրանով: Իմ երեխաներն իմ
կյանքն էին, իմ երջանկությունը: Ես ուրիշ ոչ մի բանի մա-
սին չեմ մտածում, քան նրանց կյանքի ու ապագայի մասին:
Նրանք այնքան լավն էին, որ ամբողջովին կլանում էին իմ
միտքը, սերը, ժամանակը, ուրիշ ոչինչ իմ աշքին չեր երե-
վում, բացի նրանցից: Ես մի օր, մի ժամ անգամ չեմ պատ-
կերացնում իմ կյանքը առանց երեխաների. և այսօր, եթե
ես կենդանի եմ, երբ նրանք այլևս չկան, ապա այդ երեք
նրա համար, որ կարողանամ լրիվ կերպով վրեժինդիր լի-
նել նրանց համար, այո, տասը, հարցուր և հազար անգամ
վրեժինդիր լինել:

Վալոդյան աշխատում էր, իսկ ես պահում էի երեխա-
ներին: Նրանք օրեցօր մեծանում էին և իրենց մանկական
ձիշերով, ծիծաղով մեր հոգին լցնում անսահման երջան-
կությամբ: Թվում էր, թե կյանքում չկա տխրություն, վիշտ,
որ այդ բառերի իմաստը ինչ-որ վերացական հասկացողու-
թյուն էր: Այո՛, իմ երեխաներն ամեն մի ցավ մոռացնել
էին տալիս, չեն թողնում, որ իմ հոգում բուն դնի վիշտն ու
տխրությունը:

Երբ պատերազմն սկսվեց, մեծ երեխաս հինգ տարեկան
էր, իսկ փոքրը՝ երեք ու կես:

Ինչպես հազարավոր հայրեր, իմ երեխաների հայրն էլ
գնաց ճակատ: Բաժանվելու պահին նա անվերջ համբուրում
էր զավակներին ու նայում նրանց աշքերին, մազերին, հաւ-

ռակին: Ես չեմ ուզում, որ նա այդպես համբուրեր նրանց, ես գրա մեջ վատ նախազգացում էի կարդում. երբ տեսնում էի, թե ինչպես նա գրկից բաց չեր թողնում երեխաներին, սարսուռ էր անցնում մարմնովս:

Ես վախից համարյա ճշացի.

— Թող, վալոգյա, չէ՞ որ դու էլի պիտի վերադառնաս, այդպես չի կարելի համբուրել երեխաներին, վատ է, որ այդպես համբուրում են:

Նա երկի հասկացավ ինձ, թե ինչ եմ ուզում ասել, ու ոչինչ չպատասխանեց. լուռ թողեց գրկից երեխաներին ու քայլեց գեպի գուոը. դուն մոտ ինձ նույնպես գրկեց և երկար համբուրեց: Ես, արտասվելով, ազատվեցի նրա գրբ-կից: Եվ ինքը և ես կարծես զգում էինք, որ դա մեր վեր-ջին հանդիպումն էր, որ այս երբեք, երբեք չեինք հանդի-պելու իրար:

— Դե՛, ցտեսություն, Մարինա, — ասաց նա ու արագ քայլերով հեռացավ: Ու ոչ մի խոսք, ոչ մի հանձնարարություն: Նա այդպես լուռ հեռացավ ու այս շվերադարձավ: Նա գնաց, և այդ օրն էլ չքացավ իմ կյանքի ծիծառը, ու այդ օրվանից էլ իմ առջև բացվեց տանջանքների այն ճանապարհը, որ տանում է մարդկանց գեպի կործանում, գեպի գե-րեզման:

Նրանից ես ոչ մի լուր չստացա, ոչ բացիկ, ոչ նամակ, ոչ մի լուր այն մասին՝ կենդանի՝ է նա, թե մահացել է:

Յ. ԱՆԴՐԻՅ ՏԱՆՉԱՆՅԱՆԻ

1942 թվականի փետրվարի վերջին գերմանացիները մտան մեր քաղաքը: Բոլորը մնացել էին զարմացած, որ նրանք քաղաք էին մտել ոչ թե արևմուտքից, այլ արևելքից: Նրանք շրջանցել էին քաղաքը երկու կողմից, և ընա-կիշներից ոչ ոքի չհաջողվեց հեռանալ այնտեղից: Ան-տառ, լեռներ չկան մեր քաղաքի մոտ, թարնովի ոչ մի տեղ

Հնարավոր չէր, դրա համար գերմանացիներին հաջողվեց ձերբակալել ու զնդակա՞րել պատասխանառու աշխատողներից շատերին: Նրանց ես տեսել, ճանաշում էի, մենք ապրում էինք մասնագետների շենքում, իսկ մեզ մոտ ապրողները մեծ մասամբ պետական ու պարտիական պատասխանառու աշխատողներ էին: Ես հիշում եմ, թե ում, երբ և ինչպես տարան զնդակա՞րելու: Ես ուրախ էի, որ իմ ամուսինը չկար, որ նա զնացել է ճակատ, եթե մեռնելու էլ է, ապա թող մեռնի այնտեղ՝ պատերազմի դաշտում:

Այն, ինչ մենք տեսանք ու ապրեցինք գերմանացիների օրոք, մի շտեսնված, աներևակայելի բան էր: Ամեն օր, ամեն ժամ, դիշեր-ցերեկ ճիշեր, աղմուկ, ձերբակալություններ, լաց, զնդակա՞րումներ, կախաղաններ, ջրգեհներ, ծուխ և անվերջ ծուխ: Այրվում ու գետնին էր հավասարվում ամեն ինչ: Ամենուրեք, ուր զնում էիր, ուրիշ տակ մոխիր էր և միմիայն մոխիր:

Ես դուրս չեի գալիս տանից, երեխաների հետ փակվել էի բնակարանում ու լարված սպասում էի, թե ինչ պիտի լինի մեր վերջը: Ինձ տանջում էր երեխաների վիճակը. նըրանց մասին էի մտածում ամբողջ ժամանակ: Դիշերները ես քուն չունեի. անվերջ կրակոցները, զոսոցները, ավտոմեքնաների, տանկերի աղմուկը չէին թողնում աշք փակել: Յերեկը մի քանի ժամ հարևանները հանդիպում էին իրար, խոսում էին եղած նորությունների մասին, ու նորից ամեն մեկը փակվում էր իր բնակարանի մեջ: Շուտով այդ հանդիպումներն էլ համարյա դադարեցին, որովհետև միայն սարսափելի լուրեր էինք լսում իրարից:

Ամեն անգամ, երբ մեր բակում լսում էր մի բարձր ձայն, կամ դռան ուժեղ բախում, կարծես մեր կյանքի կեսը զնում էր: Մենք գիտեինք արդեն, թե ինչ է նշանակում գերմանացու ոտք զնելը որիէ մեկի դռան շեմքին... Երբ երեխաները պառկում էին քնելու, ես անվերջ նայում էի նըրանց անմեղ զեմքերին, ու կոկիծը խեղզում էր կոկորդս: Կարծես ծովում խորտակվող նավի վրա լինեինք: Ես

ամբողջովին մոռացել էի ինձ և միայն ու միմիայն երեխաների մասին էի մտածում: Օ, դուք չգիտեք, թե ինչ է նշանակում պատերազմի ընթացքում մայր լինել, մայր, որի փոքրիկ երեխաներով մնացել է գերության մեջ:

Այդպես որ ու գիշեր անքուն, ամեն ըոպե լարված, սպասում էինք, թե ինչ պիտի լինի մեր վիճակը: Բակում համարյա տղամարդ չէր մնացել, եթե չհաշվենք մի քանի ծերերի, որոնք տեղներից անգամ չէին կարողանում շարժվել: Չորս հարկանի այդ մեծ շենքը մնացել էր կանանց ու փոքրիկ երեխաների հսկողության տակ:

Զեմ հիշում որ երրորդ օրն էր՝ ութերորդ թե իններորդ, գերմանական պարետատան երկու օֆիցեր և վեց զինվոր ներս մտան մեր բակը: Մենք չգիտեինք, թե ուր թաքնվեինք նրանցից:

Հերթով նրանք մտան բնակարանները, գրեցին բնակիչների թիվը, մանրամասն հարցաքննեցին բոլորին:

Դուքս գալիս նրանց ավագը դարձավ ինձ.

— Զեր բնակարանը շատ լավն է, այստեղ կապրի գերմանական օֆիցերը:

Ես սարսափից ճշացի.

— Ո՛չ, սա լավ բնակարան չէ, այստեղ արև չկա, լույսը քիչ է:

— Ոչինչ, եթե գերմանական օֆիցերն ուզենա, ապա ձեր բնակարանում կլինի և արև, և լույս, և ամեն ինչ:

— Ես ձեզ ճիշտ եմ ասում, այ, դիմացի տունը ստվեր է գցում, տեսեք, այն մեծ տունը:

— Կայրենք այն տունը, հանգիստ եղեք:

Ես այլևս չկարողացա շարժել լեզու, կոկորդս չորացավ, և, թվում էր, ինձ խեղղում են: Ամեն ինչ մթնեց աշքերիս առջև:

Այդպես, ուրեմն, հասել էր իմ ընտանիքի վերջը: Բայց մի՞թե այդքան շուտ: Զէ՞ որ ես դեռ չեմ ճաշակել կյանքի քաղցրությունը, չէ՞ որ դեռ ոչինչ չեմ տեսել կյանքում, և ահա արդեն վերջն է:

Գերմանական օֆիցերը եկավ հենց նույն բեկոյան, նա նայեց բոլոր սենյակները, պատշգամբը, ապա գիշատիչ աշքերը հառելով ինձ, հարցրեց.

— Զե՞րն են այս երեխաները:

— Այո՛, — պատասխանեցի ես:

— Ամեն ինչ լավ է, միայն զրանք ավելորդ են, միանգամայն ավելորդ, — ասաց նա, մատնացուց անելով երեխաներին:

— Ինչպե՞ս, — սարսափահա՞ր հարցրի ես:

— Այնպես, — ասաց օֆիցերը, — նրանք կիանգարեն, իսկ իսանգարել ինձ չի կարելի, հասկացա՞ք:

— Այս ժամանակ մենք կգնանք այստեղից, վերցրեք ձեղ բոլորը:

— Ոչ, դուք պիտի մնաք, դուք պիտի ծառայեք ինձ, իսկ երեխաները, ոչինչ, կմտածենք, մենք ելք կդունենք, դուք մի անհանգստացեք:

Երեխաների հետ ես քաշվեցի փոքր սենյակը, իսկ երկու մեծ սենյակը, այնպես կահավորված, թողեցի օֆիցերին:

4. ԱՆՏՈՒԵՆԱ, ԱՆՏՈՒԵՆԱ...

Առաջին օրերին գերմանական օֆիցերը ինձ չէր անհանգստացնում, կարծես նույնիսկ չէր նկատում իմ ներկայությունը: Ամեն օր այցելում էր նրան մեր քաղաքի նշանալոր արտիստուհիներից մեկը: Երբ նա գալիս էր, ժպտալով բարեկում էր ինձ ու արագ անցնում օֆիցերի սենյակը: Սկզբում ես չէի պատասխանում նրա բարեկում, շրջում էի երեսս, իբր չէի տեսնում, բայց հետո վախեցա, մտածում էի, որ նա կարող է օֆիցերին հայտնել, որ ես թշնամաբար եմ վերաբերվում իրեն, իսկ օֆիցերը գրա համար մեզ կպատժեր, այն էլ, սատանան գիտե, թե ինչպես: Այդ մասին ես լուրջ մտածելուց հետո որոշեցի պատասխանել նրա բարեկում: և ինքս էլ իմ հերթին բարեկում էի նրան:

չնայած ոչ մի կերպ չէի կարողանում թաքցնել իմ ատելու թլումը նրա նկատմամբ:

Նա հագնում էր բարակ մետաքսե հագուստ: Դա նրա թատերական հագուստն էր: Նա փայլում էր այդ հագուստի մեջ: Ինչքան զեղեցիկ, նորբ ու քնքուշ էր նա: Նրա անունն էլ զեղեցիկ էր—Անտոնինա—և սազում էր իրեն: Անտոնինային տեսնելիս սիրտս գառնորեն ճմլվում էր, ևս հուզվում, ջղայնանում էի, թէ ինչու նա, սովետական այդ աղջիկը գալիս է զերմանացիների մոտ: Բայց ո՞վ էր հասկանում, թէ ինչ էր կատարվում աշխարհում. առում էին՝ քաղաքում ուրիշ մարդիկ էլ էին անցել զերմանացիների կողմը և ծառայում էին նրանց:

Մի օր օֆիցերին շտապ կանչեցին, և նա արագ հագնվեց ու պնաց: Աղջիկը մնաց մենակ: Սենյակում մի փոքր ետ ու առաջ քայլելուց հետո նա եկավ պատշգամբ ու սկսեց խաղալ երեխաների հետ:

Ես լուռ էի:

— Ինչպե՞ս եք, տիկին,—մեղմ ու բարեկամական տոնված հարցեց ինձ:

— Ինչո՞ւ եք հարցնում,—պատասխանեցի ես, առանց նայելու նրա երեսին:

— Հենց այնպես:

— Շատ լավ, մի՞թե չեք տեսնում:

— Ես ձեզ հետ բարեկամաբար եմ խոսում, իսկ դուք հեգնում եք ինձ:

— Ու, չեմ հեգնում, ես ուզում եմ ասել, որ դուք...—այդ բոպեին մեր հայացքները հանդիպեցին իրար, ու իմ խոսքը մնաց կիսատ:

— Մարինա, դուք ճիշտ չեք ասում,—նկատեց նայ խոր աչքերի տակով շեշտակի նայելով ինձ:

Ես շփոթվեցի ու շփտեի ինչ պատասխանել: Անտոնինայի խոսակցության այդ համարձակ ու վճռական տոնը ոչ միայն ինձ դուք չեկավ, այլ նույնիսկ ջղայնացրեց, և, առանց երկար մտածելու, դարձա նրան:

— Ասեք, խնդրում եմ թողեք ինձ հանգիստ. ինչ ուզում
եք արեք իմ բնակարանում, ձեզ ոչ չի խանգարի, միայն
խնդրում եմ հեռու մնացեք ինձնից:

Իմ պատասխանից նա հանկարծակիի եկավ ու խիստ
զարմացած մոտեցավ ինձ:

— Ես չեմ հասկանում. ի՞նչ վատ բան եմ արել ձեզ,
որ այդպիս կոսիտ, նույնիսկ թշնամաբար եք վարվում ինձ
Հետ:

— Ես բան չեմ ասում, ես միայն խնդրում եմ ձեզ:

— Հասկանում եմ, թե ինչ եք ասում:

— Ի սեր աստծո, վատ բան մի մտածեք, ես ձեր դեմ
ոչինչ չունեմ, ես միայն աղաշում եմ ձեզ խղճալ իմ երեխա-
ներին, ես մայր եմ:

— Դուք պարզապես մոլորովիան մեջ եք, և ինձ ան-
շափ զարմացնում է ձեր այդ մոլորովիանը, չէ՞ որ ես ձեզ
Հետ, ձեր երեխաների Հետ երբեք վատ չեմ եղել, ընդհա-
կառակը, ես սիրում եմ նրանց, իսկ թե դուք ինչու եք իմ
հանդեպ այդպիս վատ տրամադրված, չգիտեմ:

Ես լոեցի:

— Ինչո՞ւ չեք խոսում,—ասաց նա հարազատի պես,
բռնելով ձեռքս:

— Զգիտեմ, ես ոչինչ չգիտեմ:

— Մարինա, մենք երկուսս էլ կին ենք, և դուք կարող
եք առանց թաքցնելու ասել ինձ ամեն ինչ, դա միայն ձեր
օգտին կլինի, հավատացնում եմ ձեզ:

— Ես ի՞նչ կարող եմ ասել, ես մոտիկից ձեզ չեմ հա-
նաշում, միայն բոլոր կանալք ձեր մասին վատ են խոսում,
ասում են՝ դուք նրանց համակրում եք, նրանց հետ եք լի-
նում:

Անտոնինան լուռ ձեռքը քաշեց ինձնից, ապա դանդաղ
մոտեցավ պատուհանին ու սուր հայացքը հառեց քանդված
ու ավերված հեռուներին:

Ես նկատեցի, որ իմ խոսքերը տհաճ տպավորություն
թողեցին Անտոնինայի վրա, բայց դա տեսեց միայն մի քանի

րոպե, նա նորից շրջվեց դեպի ինձ և նույն համարձակ ու վճռական տոնով ասաց.

— Գիտե՞ք ինչ, ինձ համար բացարձակապես միևնույն է, թե ինչ են խոսում այդ կանայք իմ մասին, ես զարմանում եմ միայն, որ այս ծանր օրերին անգամ նրանք ժամանակ են գտնում բամբասելու ուրիշներին: Իմ կարծիքով, լավ կլինի, որ նրանք զբաղվեն իրենց գործերով: Մեզնից ամեն մեկը պատասխանատու է իր արարքի համար, այդպես չէ՝ Մարինա:

— Այդպես է, բայց...

— Ի՞նչ՝ բայց:

— Նրանք բամբասող կանայք չեն, նրանք ձեզ ձանառում, սիրում են, դրա համար էլ չեն ուզում, որ դուք գերմանացիների մոտ գաք:

— Չե՞ն ուզում. ինչ անենք, որ չեն ուզում, գուցե ես էլ չեմ ուզում, բայց հանգամանքները ստիպում են անելու:

— Հանգամանքները շատ բան կարող են ստիպել, պիտի կարողանալ զսպել:

— Դա ձեր գործը չէ, խնդրում եմ խրատներ չկարդալ ինձ, — ասաց նա կոպիտ տոնով ու երեսը շրչեց:

Այդ րոպեին բակում լսվեց ավտոմեքենայի ձայնը. դա գերմանական օֆիցերի մեքենան էր, նա վերադառնում էր պաշտոնատեղից: Անտոնինան երգելով, նորից մտավ օֆիցերի սենյակը:

Իսկ ես երկար, շատ երկար ժամանակ մնացի տեղում կանգնած:

Ես դատապարտում էի Անտոնինային, որ նա այդպես արհամարհում էր շրջապատը և համարձակ կերպով կատարում էր իր քմահաճ ցանկությունները: Շատ անգամ ես ներկա էի լինում այնպիսի տեսարանների, երբ Անտոնինան, իր գեղեցիկ ու հպարտ գլուխը բարձր պահած՝ թելադրում էր իր կամքը գերմանական օֆիցերին, և վերջինս հիպնոզացածի պես լուր կատարում էր նրա քմահաճուկները: Այդպիսի

բոպեներին Անտոնինան, Հեգնող ժպիտը դեմքին, տիրաբար նայում էր նրան ու լուս հրճվում:

Տեսնելով գազանին, վանդակած Անտոնինայի ափի մեջ, ես ներքուատ ուրախանում էի նրա փոխարեն, այդպիսի րոպեներին ես նույնիսկ պատրաստ էի ներելու նրան: Բայց, դժբախտաբար, այդ երկար չեր տևում, Հենց որ մի քիչ հեռանում էի նրանից, ինձ նորից կրծում էր այն միտքը, թե ինչո՞ւ գերմանական օֆիցերի արյունոտ ձեռքերը պիտի դիպ-շեն Անտոնինային:

Անտոնինան շարունակում էր կանոնավոր այցելել օֆիցերին:

Ինձ Հանդիպելիս նա սովորականի պես, մեղմ ժպտով՝ հարցնում էր.

— Ինչպե՞ս եք, Մարինա:

— Ոչինչ, —ակամա պատասխանում էի ես:

— Շատ մի վշտանա, ամեն ինչ այս կյանքում ժամանակավոր է, —ասում էր նա ու անցնում օֆիցերի մոտ:

Նա գիտեր, որ մենք վատ ենք ապրում, և ամեն անգամ, օֆիցերի մոտ գալիս, փոքրիկների համար անպատճառ ուստի-լու բան էր բերում: Իմ երեխաները նրան այնքան էին սովորել, որ Համարյա միշտ սպասում էին, թե երբ էր նա գալու: Բայց չնայած նրա բոլոր լավություններին, իմ մեջ գարձյալ շարունակում էր մնալ մի ներքին, տհաճ զգացում դեպի նա, ես աշխատում էի ամեն կերպ նրանից ծածկել իմ այդ զգացումը, բայց երկի չեր հաջողվում այդ, և մեր Հարաբերությունները գարձյալ մնում էին սառը, օտարութի, մենք դարձյալ շարունակում էինք իրար հոսել պաշտոնական տունով, «դուք»-ով:



Հատուկ հրամանով, որ փակցրած էր քաղաքի պատերին, գերմանացիները բոլոր մարդկանց, առանց խորության, քը-շում էին աշխատանքի: Ով փորձում էր խուսափել, նրան-

տանում էին բռնությամբ, կամ գնդակահարում էին, որ մյուս-
ների համար օրինակ լինի: Հարյուրավոր անապատան երե-
խաներ մերկ ու քաղցած թափառում էին փողոցներում, իսկ
նրանց ծնողները, եթե միայն կենդանի էին, տաժանակիր
աշխատանք էին կատարում գերմանական գերության մեջ:

Ժողովուրդը դարձել էր լուակյաց: Մարդիկ քայլում էին
ստվերի պես, մոալ ու գունատ: Մահը ուղեկցում էր բոլո-
րին:

Իմ ուղեղը դադարել էր աշխատելուց, ու ամեն ինչ կա-
տարում էի լուս, մեքենայորեն: Անտոնինան նկատում էր
այդ ու հանդիմանում ինձ.

— Ամոթ է, ընկճվել չի կարելի:

Ես լուս նայում էի նրա գեղեցիկ դեմքին:

— Ինչո՞ւ չեք խոսում:

— Ի՞նչ խոսեմ, ես համարյա մոռացել եմ խոսելը, ինչ-
քան ժամանակ է, որ ես միայն ինքս ինձ հետ եմ խոսում,
լուս:

— Գերմանացիները, անհանգստացնո՞ւմ են ձեզ, Մա-
րինա, — ասաց նա կամաց, հազիվ լսելի ձայնով:

— Ինչո՞ւ եք Հարցնում, — վախեցած ետ քաշվեցի նրանից:

— Մի քաշվեք, ասացեք ինձ. Եթե անհանգստացնում
են, ապա ես կարող եմ օգնել ձեզ, ես շատերին եմ օգնել:

— Ո՛չ, ես օգնության կարիք չեմ զգում:

— Դուք, իհարկե, ճիշտ չեք ասում:

Ես չպատասխանեցի նրան: Ինչպիսի պայմաններում էլ
ես լինեի, ինձ համար ծանր էր դիմել մի կնոջ, որն ամբողջ
ժամանակ գերմանական օֆիցերների շրջանումն էր, այն
մարդկանց շրջանում, որոնք ամեն օր, բոլորի աչքի առցել ա-
վերում, քանզում էին մեր երկիրը, դաժանորեն բնաջնջում
մեր ժողովրդին:

Մի քանի օր հետո մեր տան պարետը ինձ հանձնեց
բաղամասի ոստիկանի հրամանը, որի մեջ ասված էր՝ շտագ
ներկայանալ ոստիկանատուն՝ աշխատանքի մեկնելու համար:

Գլուխ պտտեց, աչքերս մթնեցին: Ուրեմն իմ երեխաւ-

ներն էլ մյուսների պես պիտի մնան դուրսը, քաղցած ու անշխամ: Ես չփուի ում դիմել, ում խնդրել: Այդպես շվարած կանգնած էի, երբ Անտոնինան ներս եկավ:

— Բարեկ, Մարինա:

Պատասխանի փոխարեն ես լուս մեկնեցի նրան թուղթը:

Նա արագությամբ կարդաց այն, ճետո աշքի տակով ծածուկ նայեց ինձ, թուլ ժպտաց ու զղածգաբար պատռեց թուղթն ու շպրտեց անկուն:

— Կարող եք չներկայանալ, — վճռական տոնով ասաց նա:

— Ինչպես թե չներկայանալ:

— Այնպես, շարունակեցեք ձեր գործով զբաղվել:

Ես այլևս չկարողացա լեզու շարժել: Արցունքները խեղեցին կոկորդս, ու սկսեցի բարձր ձայնով արտասվել: Անտոնինան իսկույն մոտեցավ ինձ, քրոջ պես գրկեց ու հանդիմանական տոնով ասաց.

— Ինչո՞ւ եք լաց լինում, երեխա՝ եք ինչ է, ամոթ է, սրբեք աշքերդ:

— Անտոնինա, — դարձա ես նրան, — աղաշում եմ ձեզ, այնպես արեք, որ նրանք չպրկեն ինձ իմ երեխաներից, ես միայն նրանց համար եմ ապրում:

— Լավ, էլ ինչո՞ւ եք արտասվում, մի վախեցեք. քանի ես այստեղ եմ, ձեր երեխաներին ոչինչ չի պատահի, իսկ երբ ես դադարեմ այստեղ լինելուց, այն ժամանակ արդեն ոչինչ չեմ կարող անել:

— Ի՞նչ, մի՞թե ձեզ էլ է վտանգ սպառնում:

— Ով գիտե, պատերազմ է, ինչեր ասես չեն պատահի:

Ես դժվարանում էի հասկանալ, թե ինչ էր ակնարկում նա, բայց որոշակի զգում էի, որ իմ մեջ հետզհետե թուլանում էր առաջգա անզուսպ տեղությունը զեպի Անտոնինան: Ավելին, նրա ներկայությունը իմ բնակարանում, մի տեսակ հանգստացնում էր ինձ:

Անտոնինան օժանդակում էր ինձ, նա այդ անում էր ազնիվ մարդու անշահախնդիր զգացումներով, ես այդ շատ լավ էի զգում ու գիտակցում, բայց այնուամենայնիվ մինչև վերջ էլ մենք մնացինք իրար հանդեպ օտարութի:

Մի օր նա եկավ ինձ մոտ, ընկավ բազմոցի վրա ու ծառ
նը հեալով ասաց.

— Հոգնել եմ, Մարինա, շատ եմ հոգնել:

— Հանգստացեք, այստեղ ձեզ ոչ չի խանգարի:

— Չէ, այսօրվա մասին չէ խոսքը, առհասարակ հոգնել եմ, առաջ ես հոգնել շգփտեի, բայց վերջերս զգում եմ, որ հոգնում եմ, իսկ գործ դեռ շատ կա, անշափ շատ:

— Ի՞նչ գործ,—զարմացած հարցը ես:

— Ինքս էլ շգփտեմ, միայն ամբողջ օրը լարված են շղերս, սոսկալի լարված, դեռ էլի լավէ, որ դիմանում են, չեն պայթում:

Ճիշտն անած, ես չէի հասկանում, թե նա ինչ էր անում և ինչու էին նրա շղերը լարված:

— Գուցե...

— Մարինա,—ընդհատեց նա ինձ,—կուզե՞ս մի նվեր տամ քեզ, գիտեմ, որ ինձ չես սիրում, հենց դրա համար էլ ես ուզում եմ իմ նկարը նվիրել քեզ:

Նա իսկույն բարձրացավ տեղից, վերցրեց պայտակը, հանեց նրա միջից նկարն ու տվեց ինձ:

— Այդ նույն նկարից մի հատ էլ տվեցի օֆիցերին: Նա ինքը ցանկացավ ունենալ իմ նկարը: Ես սկզբում չէի ուզում, բայց հետո որոշեցի տալ: Կանանց նկարների մի ամբողջ ալբոմ ունի նա, որ հավաքել է տարբեր երկրներում, տարբեր ազգերի կանանցից, որոնց հետ պարոն օֆիցերն ուրախ ժամանակի հուշեր ունի: Ոչինչ եթե իմ նկարն էլ հուշերի համար է վերցնում, վատ չէ, թող վերցնի, իսկ ես առանց նկարի էլ կհիշեմ նրան: Իսկ քեզ, Մարինա, այս նկարը նվիրում եմ նրա համար, որ երբ ես մեռնեմ, մի օր նա, անշուշտ, լեզու կառնի ու սրտանց կխոսի քեզ հետ, կասի քեզ ամեն ինչ, և դու այլևս ինձ վրա չես բարկանա, երեսդ չես շրջի ինձնից:

— Ինչո՞ւ եք մեռնելու մասին խոսում, ձեզ չեն սաշ զում այդպիսի խոսքեր: Դուք այնպես կենսուրախ եք, առանց ծիծաղի ձեզ չի կարելի պատկերացնել:

— Դու ծիծաղին մի նայիր, Մարինա, երկի այդպես ծփ-
ծաղելով էլ մեռնեմ: Ծիծաղը՝ դա իմ հոգին չէ, այլ նրա
ամուր փականը:

Մի քանի րոպե նա նստեց բազմոցին, ապա հանկարծ
վեր թռավ տեղից, վերցրեց պայուսակը ու դուրս եկավ:
Դուան շեմքին լսվեց նրա ձայնը.

— Ես շտապում եմ, Մարինա, ցտեսություն:

Օրեցօր Անտոնինան փոխվում, անճանաշելի էր դառ-
նում. նրա խոշոր, վառ աշքերը կարմրել ու զրկվել եին
առաջվա փայլից, անքնությունից դեմքը թոշնել, գունատվել
էր: Ինչ էր կատարվում նրա հետ, դժվար էր հասկանալ:

Մի օր առավոտյան, մոտավորապես ժամը տասնմեկին,
օֆիցերի սենյակից լսվեց բարձր աղմուկ, ապա Անտոնինա-
յի ուժեղ ճիշը և ատրճանակի մի քանի կրակոց:

Կրակոցի ձախից երեխաներն ահարեկված՝ վագեցին
ինձ մոտ. փոքր երեխաս սկսեց լաց լինել. ես նրան հան-
գըստացրի ու ինքս պատուհանի անկյունից սկսեցի դիտել:
Դողը պատել էր մարմինս, ես անհանգիստ էի, արդյոք ի՞նչ
պատահեց Անտոնինային:

Շուտով օֆիցերը, առանց վերնաշապկի, այլայլված
դուրս եկավ պատշաճմբ, կանչեց մուտքի դռան մոտ կանգ-
նած պահակին, բարկացած ինչոր կարգադրություններ արեց
նրան ու նորից ներս մտավ սենյակ: Հետո կանչեց ինձ ու
հրամայեց շտապ հավաքել սեղանը: Ես մեքենայորեն մոտե-
ցած սեղանին ու սկսեցի հավաքել: Մի քանի րոպե հետո
եկավ գերմանական բժիշկը մի խումբ զինվորների հետ միա-
սին: Նա մոտեցավ օֆիցերին ու բռնեց նրա թերը. այդ ժա-
մանակ ես նկատեցի, որ օֆիցերի ծեռքից արյուն էր հոսում:
Արյան հետքեր կային նաև նրա դեմքին: Ես մտածեցի
ուրեմն Անտոնինան էր կրակել օֆիցերի վրա, բայց հենց
այդ բոպեին մյուս սենյակից զինվորները հանեցին Անտոնի-
նայի դիակը ու դուրս տարան: Ես հազիվ կարողացա ինձ
զսպել, որ չձշամ: Ես ուզեցի անմիջապես դուրս փախչել,
բայց ո՞ւր, փախչելու տեղ չկար, երեխաներս կողքի սե-

նյակում ինձ էին սպասում: Ես վագեցի նրանց մոտ: Նայում
էի շորս կողմա, տեղ չկար թաքնվելու: Իմ սեփական բնա-
կարանն ինձ թվում էր սպանդանոց, իսկ ես՝ կալանված նրա
մեջ:

Անտոնինայի զիակը աշքից չեր հեռանում: Նրա մե-
տաքսե բարակ ու գեղեցիկ հագուստն ամբողջովին արյու-
նութել էր:

Այսպես, Անտոնինան ալևս չկար: Նրա արյան կաթիլ-
ները ներկել էին հատակը, պատշպամբը, աստիճանները:
Ուրեմն սկսեց արյան հոտ փշել իմ բնակարանից: Լարված,
սպասողական վիճակը ինձ խեղդում էր. ինչ լինելու էր, թող
միայն շուտ լիներ, որքան հնարավոր է՝ շուտ:

Հաջորդ օրն օֆիցերը զգնաց աշխատանքի: Երեկոյան
դեմ, սառը ծիծաղը դեմքին, նա մոտեցավ ինձ. կարծես
ոչինչ չեր պատահել, այնքան հանգիստ, այնքան անվրդով
էր նա:

— Ինչ զգվելի աղջիկ էր Անտոնինան, տեսա՞ր ինչպիսի
տգեղ խաղեր սարքեց իմ գլխին: Դուք ինքներդ տեսնում էիք.
թե ես ինչքան լավ էի վերաբերվում նրան, կատարում էի
համարյա նրա բոլոր ցանկությունները: Ծնորհակալության
փոխարեն նա շարունակում էր հազար ու մի տհաճ պատմու-
թյուններ սարքել: Ես համբերությամբ տանում, ներում էի
այդ ամենը, հավատացած լինելով, որ դա վերջինը կլինի,
և ալևս չեն կրկնվի նման բաներ, բայց ոչ, նա շարունա-
կում էր ավելի սանձարձակ, ավելի հանդուզն պահել իրեն:
Այդ բոլորը դեռ ոչինչ. այս քանի օրը նա մի այնպիսի խայ-
տառակություն էր սարքել, որ եթե ժամանակին չկանխեինք,
ապա հավիտյան կարող էի կործանվել: Այդ բոլորից հետո
նա դարձյալ չեր ուզում հանձն առնել, որ ինքն է այդ խայ-
տառակության հեղինակը: Ես ասացի՝ կսպանեմ, եթե չխոս-
տովանես:

— Չես սպանի:

— Կսպանեմ:

— Չես սպանի:

— Գուցե ես կարողանալի զսպել ինձ, բայց ատրճանակս իմ համբերությունը չուներ, նա փակեց Անտոնինալիք լեզուն: Նա վիրավոր հարձակվեց վրաս և ուզում էր խլել ատրճանակը: Տեսեք, ինչպես է կծել ձեռքերս, ճանկուել երեսս: Առջասարակ շատ տարօրինակ են Ծուսաստանի կանալք: Նրանք վայրենի են, անկիրթ: Ես եղել եմ շատ երկրներում՝ Ֆրանսիայում, Հոլանդիայում, Լեհաստանում, Հունաստանում, Իտալիայում, մի խոսքով՝ ամեն տեղ, տեսել եմ այդ երկրների կանանց, բայց այդպիսի բաներ չեմ տեսել: Նրանք կրթված, խոնարհ կանալք էին, իսկ այստեղ ամեն ինչ վայրենի է: Թվում էր, թե գոնե կանալք, որպես քնքուշ արարածներ, մի փոքր կտարբերվեն տղամարդկանցից, բայց ոչ, նրանք էլ նույն երկրի պտուղներն են:

Տարօրինակ բան է, այդպիսի մի դեպք էլ պատահեց ինձ հետ անցյալ տարի: Մեր գրաված քաղաքներից մեկում ես հանդիպեցի մի երիտասարդ աղջկա. նրա անունը ես հիմա չեմ հիշում. վարդագույն այտերով, առողջ աղջիկ էր, իսկական ուս գեղեցկութիւն: Մի օր մենք միասին պառկած խոսում էինք, խոսում էինք հազար ու մի բանի մասին: Ես նըան պատմում էի իմ հուշերը եվրոպական երկրներից: Հանկարծ նա դարձավ ինձ.

— Շատ մարդ ես սպանել այնտեղ:

— Այո՛, շատ:

— Եվ միշտ էլ այս մատով ես քաշել ատրճանակի ձգանը, — հարցրեց նա, ցուց տալով աջ ձեռքիս ցուցամատը:

— Այո՛, այս մատով:

— Ինչպես կուզենալի ատամներովս պոկել այդ մատը, որ դու այլես չկարողանաս մարդ սպանել, — ծիծաղելով ասաց նա:

— Պոկիր, եթե կարող ես, — ասացի ես, մատս զնելով նրա բերանը:

— Եվ, ինչ եք կարծում, այդ քնքուշ գաղանը կծեց մատըս. իբր կատակ էր անում, բայց այնպես կծեց, որ ես հա-

պիտյան գրկվեցի ցուցամատից: Դուք ի՞նչ կասեք դրան: Ինչ պիսի վայրենություն: Երբ նա այդպես արեց, ես էլ վերցրի ատրճանակը ու սպանեցի նրան:

5. ՃԵՐԱՆՆԵՐՈՒՄ

Ես ոչինչ չեի խոսում. լուռ լսում էի նրան, լսում էի ու չեի հավատում, որ այդ հրեշը այդպես հանգիւտ կարող է խոսել սպանության մասին:

— Դուք էլ նրանց նման եք, Մարինա,—Հարցրեց նա սառը ժպտով ու մոտեցավ ինձ:

— Ո՛չ, ո՛չ ինձ մի մոտենաք, ես վատն եմ, ես կարող եմ ավելի մեծ վայրենություն անել, քան նրանք: Անտոնի նան կրթված աղջիկ էր, ես վատն եմ, ինձ մի մոտենաք, ի սեր աստծո:

— Ինչպե՞ս, ասում եք դուք էլ նրանց պես վայրենի՞նք, բայց չե՞ որ ես ձեզ էլ կսպանեմ, եթե դուք աշխատեք նմանվել նրանց:

— Լսեք, պարուն օֆիցեր, դուք եղել եք շատ երկրներում, տեսել եք շատ գեղեցիկ կանանց, թողեք ինձ հանգիստ, տես նո՞ւմ եք, ես փոքրիկ երեխաներ ունեմ, նրանց կերակրել, խնամել է հարկավոր, և, վերջապես, ինչքան հոգս ու ցավ կա հիմա:

— Դուք զուտով կազմատվեք այդ ցավերից:

— Ինչպե՞ս կազմատվեմ:

— Այո՛, ձեր երեխաներին կպահեն ուրիշները, իսկ դուք պիտի խնամեք ինձ, դուք վատ եք կատարում ձեր պարտականությունները: Մինչև հիմա շատ բան կատարում էր Անտոնինան, իսկ հիմա նա այլևս չկա, ուրեմն դուք ինքներդ պիտի հասկանաք և անցնեք ձեր պարտականությունների կատարմանը, թե չէ, զգուշացնում եմ, դուք նույնպես Անտոնինայի բախտին կարժանանաք:

— Պարոն օֆիցեր, խղճացեք իմ երեխաներին, աղաջում
հմ՝ ձեզ:

— Աղաջելու փոխարեն աշխատեցեք պարտաճանաչ լի-
նել, այն ժամանակ ամեն ինչ կարգին կլինի, — սառն ու հան-
դիսութ, ինչպես միշտ, ասաց նա ու գնաց իր ննջարանը:

Երկար ժամանակ քարացել, կանգնել էի տեղս: Ես զգում
էի, որ մահն աստիճանաբար մոտենում է ինձ, նա եկել՝
նույնիսկ բնակվում էր իմ տանը, կողքի սենյակում: Ինձ
նրանից բաժանում է ընդամենը մի քանի քայլ, միայն մի
դուռ, որն ամեն բոլոր կարող էր բացվել: Ես այդ գիտեի,
տեսնում էի, բայց ոչինչ չէի կարող անել: Այս, ոչինչ: Փախ-
չել հնարավոր չեր, պահակը քանչորս ժամ մուտքի մոտ
կանգնած հսկում էր: Վճռական քայլ նույնպես չէի կարող
անել, որովհետեւ երեխաները ձգում էին փեշու. և այդպիս
չորս կողմից կաշկանդված՝ քարացել էի, այս՝ ուղղակի քա-
րացել: Փոքրիկ երեխաս սկսեց լաց լինել: Հազիվ կառողա-
ցա մոտենալ նրան: Ես սարսափում էի նայել նրանց երեսին:
Արդյոք գիտե՞ն նրանք, թե ինչ է սպասում իրենց, գիտե՞ն,
որ դահիճը եկել բնակվում է իրենց մոտ, կողքի սենյակում.
և ամեն բոլոր կարող է զրկել իրենց կյանքից: Երբեմն փոքր
երեխաս ժպտում էր անմեղ, մանկական ժպտով: Երբ նա
ժպտում էր, ես լաց էի լինում: Այդ ժպիտը ինձ հիշեցնում
էր Անտոնինայի ծիծաղը: Ես սարսափում էի այդ ժպտից,
ես, նրա մայրը, չէի ուզում, որ իմ երեխան ժպտար, հաս-
կանում եր ինչ էր կատարվում իմ հոգում: Ես չէի ուզում,
որ իմ երեխան ժպտար, դա կարող էր նկատել պարոն օֆի-
ցերն ու զայրանալ:

Ես երկար մտածեցի, բայց ելք շգտա: Երեխաների փըր-
կության համար ստիպված էի իմ զլուխը խոնարհել օֆիցերի
առաջ: Այդ օրվանից սկսած, ես ամեն ինչ անում էի նրա հա-
մար, որպես աղախին լվանում էի նրա շորերը, գլուխը, ոտ-
ները, թեյ էի պատրաստում, սեղան սարքում, մի խոսքով,
անում էի այն ամենը, ինչ հրամայում էր:

Մի որոշ ժամանակ նա սկսել էր հետո լավ վերաբերվել,

երեխաների վրա այլևս չէր բարկանում: Բայց նրա այդ լավ վերաբերմոնքից էլ ես անհանգստանում էի, նույնիսկ վախենում: Նա երեկ այդ զգում էր. ապակենման աշքերը հառում էր ինձ ու սառը ժամում:

Մի երեկո նա հարրած եկավ տուն: Կանչեց ինձ, որ թեյ գնեմ ու սարքեմ սեղանը. իբր թե Հյուրեր էին գալու իր մոտ. ես խկույն թեյ գրի ու սկսեցի սարքել սեղանը: Երբ ամեն ինչ պատրաստ էր, ես խնդրեցի, որ նա թույլ տա ինձ գնալու իմ սենյակը, երեխաների մոտ:

— Ո՞չ, դուք այս գիշեր կմնաք ինձ մոտ, իմ Հյուրը այսօր դուք եք, մենք միասին կընթրենք, հետո, եթե անհրաժեշտ լինի, կգնաք:

— Ծնորհակալ եմ, պարոն օֆիցեր, շատ շնորհակալ, թողեք ինձ գնամ,—վախեցած ասացի նրան:

— Նստեցեք, իզուր եք անհանգստանում. ես ձեզ ասացի կգնաք. դուք ինքներդ միշտ տեսնում եք, որ ես չեմ սիրում մենակ ընթրել, ուղղակի սովոր չեմ գրան,—ասաց նա խիստ տոնով: Նրա կապույտ աշքերը մթնել ու դարձել էին դաժան ու ահավոր:

Ոտքերս թուլացան, ու ես ոչ թե նստեցի, այլ ընկարաթուին: Այդ րոպեին ինձ թվաց, թե ես գլորվեցի մի խավարանդունդ, որտեղից այլևս վերադարձ չկա:

Նա երկու բաժակ գինի լցրեց, մեկը ինքը վերցրեց, մյուսն առաջարկեց ինձ:

— Ինձ համար դա շատ է, պարոն օֆիցեր:

— Դուք անվերջ խոսում եք, դա լավ չէ,—ասաց նա առայն սառը ու խիստ տոնով:

Ես լուս խմեցի մեկ, երկու, երեք և այդպես շատ բաժակներ: Ինձ թվում էր, թե այդ ամենը ես անում եմ իմ երեխաների կյանքի համար: Աշքերս սկսեցին պղտորվել: Պարոն օֆիցերը սկսեց նվագել, երգել: Հետո, հետո այլևս չեմ հիշում, թե ինձ հետ ինչ պատահեց, հիշում եմ... ոչ, ոչինչ չեմ հիշում...

Թե ինչպես եմ եկել իմ սենյակը, շորերով ընկել ան-

կողնու վրա, դարձյալ չեմ հիշում: Միայն առավոտյան կլի-
ներ ժամը տասներկուսը, երբ մեծ երեխաս մեծ դժվարու-
թյամբ արթնացրեց ինձ: Ես արթնացա, նայեցի երեխաներին,
շորս կողմս, ինձ ու նոր միայն հասկացա, որ այն բոլորը ոչ
թե երազ է եղել, այլ իրականություն, այո, իրականություն,
իսկ ինձ թվում էր, թե երազում եմ տեսել, չէ՞ որ մինչ այդ
նման սոսկալի երազներ ես շատ էի տեսնում, համարյա
ամեն գիշեր: Բայց այդ մեկն իրականություն էր: Սոսկալի
իրականություն: Ես ամոթից երեսս շրջեցի երեխաներից և
սկսեցի բարձր ու անզուսպ ձայնով լաց լինել: Երեխաները,
տեսնելով ինձ, իրենք էլ սկսեցին լաց լինել: Ես ձանցը ի
նրանց:

Մի քանի օր շարունակ ես չկարողացա անկողնուց ոտքի
բարձրանալ, գլուխս պտույտ էր գալիս, ու ես ընկնում էի:
Օֆիցերը եկավ՝ տեսավ ինձ պառկած ու ժպտաց իր մեռելա-
յին ժպտով:

— Առողջացեք, վատ է պառկելք:

Ես չէի նայում նրա երեխին. այս անգամ ես վախենում
էի ոչ թե նրանից, այլ ինձնից: Այս: Ես ամեն րոպե կարող
էի ապտակել նրան: Կատաղությունից ես դողում էի ամբողջ
մարմնով, բայց զսպում էի ինձ, որ օֆիցերը չնկատի այդ:

Նա մի քիչ խոսեց երեխայի հետ, խոստացավ նրա հա-
մար կոնֆետ բերել ու գնաց:

Ը. ԳԵՂԵՑԻԿ ՈՒ ՔԱՂՅՐ ՆՎԵՐ

Զնայած ես դեռ հիվանդ էի, բայց ստիպված՝ ոտքի
բարձրացա, որովհետև տունը թափթփված էր, երեխաները
լաց էին լինում, իսկ օֆիցերը լուս շղայնանում էր:

Հաջորդ օրը նա իր խոստումը կատարեց և, երբ վերա-
դարձավ աշխատանքից, գրանից հանեց մի կոնֆետ ու
տվեց փոքր երեխայիս: Երեխան ուրախությունից թուշկո-

տում էր և չէր ուզում ուտել, նա ուզում էր պահել ու անվերջ խաղալ նրա հետ:

— Կե՛ր, շատ համով է, ես էլի կրերեմ քեզ համար:

Երեխան բացեց կոնֆետն ու սկսեց ուտել: Ես վերցրի կոնֆետի դրավիչ թուղթը ու սկսեցի նայել: Գեղեցիկ, գունավոր թուղթ էր այդ, վրան փայլուն ու մեծ տառերով դրված՝ «Սովետական երեխաների համար», ապա քիչ ներքե ավելի փոքր տառերով դրված էր՝ «Միայն մի հատ»:

Երեկոյան գեմ երեխան սկսեց ծանր հաղալ և անվերջ ջուր խմել: Ամբողջ գիշեր նա շքնեց, հազում ու լաց էր լրնում: Նա կծկվել էր անկողնու մեջ և անվերջ տնքում էր: Երեխայի ինչն էր ցավում, հայտնի չէր, ամեն բողե ցավն ավելի էր սաստիանում, ու երեխան կորցնում էր իրեն: Ո՞ւմ գիմել օգնության՝ ինք էլ չգիտեի, ոչ ոք չկար: Հարևաններիս անգամ չէի կարող դիմել, որովհետև նրանք ամեն կերպ խույս էին տալիս իմ սենյակում բնակվող օֆիցերից, ինձ մոտ ոչ ոք չէր գալիս, բոլորն էլ վախենում էին:

Օֆիցերը իր սենյակում պառկած, հանգիստ երգում էր: Լուսաբացին երեխաս մահացավ:

Ինձ համար այլևս գաղտնիք չէր, որ օֆիցերի բերած կոնֆետը սպանեց երեխայիս, նա զոհ գնաց պարոն օֆիցերի գեղեցիկ ու քաղցր նվերին: Սիրտս ցավագին ճմլվում էր: Ուրիմն նա, այդ մարդը, որ ապրում է իմ հարկի տակ, ոչ միայն մեծերին է սպանում, այլև փոքրերին: Այն ժամանակ, երբ փոքրիկ կծկված՝ մահանում էր, նա կողքի սենյակում իր համար հանգիստ երգում էր, կարծես ոշինչ, ոշինչ չէր պատահել, կարծես զգիտեր, որ իր տված գեղեցիկ թղթում փաթաթած կոնֆետից երեխան արդեն մեռնում էր:

Ես գրկել էի երեխայիս դիակը ու լաց էի լինում: Զկար այլևս իմ սիրելի մանկիկը: Ես նոր հասկացա, թե ինչու նրա հայրը ճակատ մեկնելու պահին այնպես գրկում ու անվերջ համբուրում էր, նա երևի զգում էր, որ վերջին անգամն է համբուրում իր երեխաներին, որոնց այնպես սիրում, փայտայում էր:

— Գիշերը կարծեմ դուք անվերջ լաց էիք լինում և չէիք Հոգում այն մասին, որ հարհան սենյակում մարդ կարած, — առավտյան առաց օֆիցերը, հոնքերը խոժողովինձ վրա:

— Իմ երեխան մեռավ, պարոն օֆիցեր:

— Հասկանում եմ, բայց երեխայի պատճառով դուք շպիտի խանգարեք ուրիշի քունք: Պատերազմ է, մեռնում են շատերը, եթե ոչ այսօր, ապա վաղը, եթե ոչ վաղը, ապա մյուս օրը. մեծերն են մեռնում, իսկ ի՞նչ են փոքրերը: Նա մեռավ, կունենաք մի նորը՝ ավելի լավը, իսկական երեխա: Զգուշացնում եմ ձեզ, որ մյուս անգամ շկրկնվեն այդպիսի բաներ. ես չեմ սիրում, որ մարդիկ զուրկ են քաղաքավարությունից:

— Պարոն օֆիցեր...

— Լոեք, դուք ուզում եք արդարանալ, իսկ ես ձեզ նորից զգուշացնում եմ, որ շպետք է մոռանալ շափ ու սահմանը, հասկացա՞ք: Ես չեմ սիրում այդպիսի բաներ, ես սովոր չեմ զրան:

Հետզհետե աշքերս մինում էին ու ականջներս խլանում: Կարծես ես ընկել էի մի ահավոր դժոխք, և հրեշավոր մարդիկ ինձ խոշտանգում, սպանում էին: Ես հազիվ կարողացա մոտենալ պատշպամբի ոյունին ու երկու ձեռքով գրկեցի այն, որ ընկնեմ:

Օֆիցերը գնաց աշխատանքի, իսկ ես երկար, շատ երկար մնացի այդպես սառը սյունը զրկած: Հարեւաններս երբ իմացան երեխայիս մահը, ծածուկ ու վախճանելով եկան ինձ մխիթարելու: Ես նրանց ցույց տվի օֆիցերից տված կոնֆետի փայլուն թուղթը: Նրանք սարսափահար նայեցին թղթին և վախենում էին անգամ ձեռք տալ:

Փոքր երեխայիս թաղելուց հետո իմ ամքողջ Հոգաը գարձել էր մեծը: Նրան նայելով, ես ուրախանում ու սարսուն էի զգում մարմնիս մեջ: Ես գիտեի, որ հիմա իմ կյանքը ամբողջովին նրանից է կախված: Երեխան էլ իր հերթին կարծես մի բան էր զգում և ինձնից չէր հեռանում: Երբեմն միայն

կարձ ժամանակով գուրս էր գալիս, բակի երեխաների հետ
մի քիչ խաղում, հետո նորից վերադառնում տուն:

Շուտով մեր բաղաքից մեծ թվով կանանց կալանավո-
րեցին և ուղարկեցին Գերմանիա աշխատանքի: Դրանց մեջ
էին մեր շենքի բնակիչներից ութ հոգի:

— Զեզ էլ պիտի ուղարկեին, բայց ես չթողի: Հավատա-
ցած եմ, այսուհետեւ գուք ավելի՝ կանոնավոր կերպով կկա-
տարեք ձեր պարտականությունը, — ասաց օֆիցերը խիստ ու
հանդիմանական տոնով:

— Շնորհակալ եմ, պարոն օֆիցեր, — հազիվ կարողացա
տել այդ մի քանի խոսքը:

Օ՛, գուք շգիտեք, թե սովետական կնոջ համար ինչ ծանր
է կանոնավոր կատարել իր պարտականությունները գերմա-
նական օֆիցերի հանդեպ: Դա նշանակում է կատարել նրա
բոլոր քմահաճույքները: Իսկ գերմանական օֆիցերի քմահա-
ճույքները՝ դա մոլի մի խաղ է իր անսահման զաժանությամբ
ու լկափությամբ: Դժվար է սկզբական լեզվով պատմել, թե օր
ու գիշեր ինչպիսի տանջանքներ էր պատճառում նա ինձ...

Առանց ամոթ զգալու, հաճախ նա ստիպում էր մաժել իր
մարմինը. շաբաթը երկու անգամ նա լոգանում էր տանը: Եվ
ես պիտի լողացնեի նրան: Ես լվանում էի նրա կեղտոտ շո-
րերը: Օ՛, ինչեր ասես, նա չէր հարկադրում ինձ անելու, ան-
գամ երեխայի ներկայությամբ:

Դուք երկի մտածեք՝ մի՞թե հնարավոր չէր հեռանալ,
փախչել այդտեղից: Ո՛չ, այդ մասին շատ էի մտածել, ամեն
օր, ամեն ժամ ու բոպե: Բայց հնարավոր չէր այդ, այն էլ
երեխայով: Հետո այդ մասին ոչ միայն ես էի մտածում,
այլև օֆիցերը: Այնպիսի պայմաններ էին ստեղծված, որ
հեշտ չէր փախչելը: Ամենափոքր ըմբռստության համար զըն-
դակահարում, կախում էին:

Ամենասոսկալին այն էր, որ օֆիցերը հաճախ նողկալի
պատմություններ էր անում գերմանական տղամարդու առա-
վելությունների մասին:

Կինը հանկարծ լոկց: Մի քանի անգամ փորձեց շարունա-

կեւ, բայց չկարողացավ: Նա երեխ խոսք չէր գտնում արտահայտելու իր միտքը: Պատմելու ժամանակ նրա դեմքի գույնը հաճախակի փոփոխվում էր, շունչը երբեմն նվազում, կարծես կտրվում էր:

Կրասնովն իսկույն ոտքի բարձրացավ ու ջուր առաջարկեց նրան: Նա լուս խմեց, ապա, ջղածգաբար դնելով բաժակը սեղանին, սովորականից ավելի բարձր ձայնով դարձավ պետին.

— Եթե դուք տեսնեիք, թե այդ խոսքերն ասելիս գերմանական օֆիցերի կապույտ ու սառն աշքերը ինչքան գարշելի, ինչքան զգվելի էին:

Բայց ինչ կարող էի անել. ներքուստ հոշոտում էի ինձ, կրծոտում շուրջերու ու լուս: Համբերություն—ահա իմ կյանքի միակ նեցուկը, բայց նա էլ սկսում էր դավաճանել ինձ:

7. ՎԵՐՁԻՆ ԽԱՂԻ

Մի օր Հավաքվել էին շենքի երեխաները ու սովորականի պես խաղում էին բակում: Դրանց մեջ էր և իմ երեխան: Ես խոհանոցում ճաշ էի պատրաստում և շփոթեի, թե ինչ էին անում նրանք, երբ հանկարծ լսեցի մի ուժեղ պայթյուն: Կարծես ծանր սումբ ընկալ շենքի վրա: Ցնցվեց տունը, փշրվեցին ապակիները:

— Զավա՛կս,—ճացի ես ու նետվեցի դուրս:

Բայց այն, ինչ ես տեսա բակում, կարծես վայրկենական մի տեսիլ էր, որ երեաց իմ աշքին ու շքցավ:

Մի խումբ երեխաներ, արյան մեջ շաղախված՝ ընկած էին բակում. մի քանիսը գեռ թավալվում էին: Դրանց մեջ Հավիկ աշքս ընկալ երեխալիս հագուստին: Ամեն ինչ մթնեց աշքերիս առաջ, և ես ընկա աստիճանների վրա: Մի քանի անգամ աշքերս բացվում ու նորից մթնում էին, ու ես ոշինչ,

ուժնչ չէի հասկանում: Միայն ուշ գիշերին ուշքի եկա: Մարմինս ամբողջովին թաց էր. ևս ընկած էի անկողնու վրա:

Ինչ կատարվեց ինձ հետ այդ ահավոր գիշերին, ուանհնարին է ասել, ուավեր է մարդկացին բոլոր տեսակի ուժերից...

Մի քանի օր հետո իմացա այդ հրեշավոր գործի մանրամասնությունը: Գերմանական պահակը, որ կանգնած էր դարպասի մոտ, տեսնելով բակում խաղացող երեխաներին, աննկատելի կերպով նրանց ձեռքն է տալիս լի ականը. նրանք ուրախացած՝ սկսում են խաղալ նրանով, և մի քանի րոպեից հետո պայմում է այն: Այդ պայմումից սպանվում են շորս երեխա և ծանր վիրավորվում երեքը: Սպանվածների մեջ էր և իմ երեխան: Ինչ սպանվել. տառմ են՝ նրանց փոքրիկ մարմինները մի քանի մասերի էին բաժանվել: Այդ կրակոցի վրա երբ սկսվում է ծնողների ճիշն ու աղմուկը, իսկուն մոտենում են գերմանական ավտոմատավորները ու հրամայում բոլորին, որ քաշվեն իրենց տները. շատերը հեռանում են, բայց մի կին իր երեխայի արյունոտ զիակը գըրկած՝ շարումակել է ճշալ ամբողջ ձախով: Գերմանական ավտոմատավորները նրան էլ սպանել են ու երեխաների զիակների հետ միասին գցել ավտոյի մեջ ու տարել: Մի քանի օր շարունակ մեր տան մոտ ուժեղ հսկողություն էր տիրում, ավտոմատավորներն անվերջ պտտվում էին շենքի շուրջը:

Այդպես կորցրի և իմ երկրորդ երեխային:

Պատմում են, որ իմ տանն ապրող օֆիցերը այդ օրը եկել կանգնել է բակում, նայել ականի պայմած տեղը և հանգիստ բարձրացել տուն, կարծես ոչինչ առանձնապես պատահած չիներ: Նա միայն քիչ տակ գնթին թացել է.

— Ծնողներն են մեղավոր. պիտի պատճել նրանց, որ թույլ են տալիս իրենց երեխաներին ականի հետ խաղալ: Ինչպես կարելի է այդպիսի անզգույշ բան անել:

Մի քանի օր հետո, երբ ևս մի փոքր ուշքի եկա, նա մոտեցավ, բարեկց ու բավական մեղմ տոնով սկսեց միսիթարել ինձ.

— Շատ ցավում եմ ձեզ պատահած դժբախտության համար, բայց միաժամանակ չեմ կարող շասել, որ դուք մայրերդ նույնպես մեղավոր եք. ինչպէս կարելի է երեխային թուլ տալ այդպիսի վտանգավոր խաղեր խաղալու: Դուք մոռանում եք, որ պատերազմ է, որ Քիմա ամեն տեղ կարող են պայմանագրի նյութեր լինել, հարկավոր է զգուշ լինել, արթուն՝ ամեն քայլափոխում:

— Ասում են, որ ձեր զինվորն է երեխաների ձեռքը տվել այդ ականը, պարոն օֆիցիր, — ասացի նս, ուզիղ նայելով նրա աշքերին:

— Դա դեռ ստուգված չէ, ես այդ չգիտեմ, բայց այնուամենայնիվ, որովհետեւ այդ երեխաների մեջ եղել է նաև ձեր երեխան, ապա ես այն զինվորին պատժեցի, և նա այլու չի երևա այստեղ, — ասաց նա ու մի փոքր լոելոց հետո նորից շարունակեց.

— Գիտե՞ք ինչ, շատ ձանձրալի է այդ պահակների գործը. եթե իսկապես նա է տվել ականը երեխաների ձեռքը, ապա, հավանորեն, ինքն այդ ականով խաղացել, հոգնել է, հետո տվել է երեխաներին խաղալու, նրանք ել անզգույշ են եղել, և ահա այն պայմել է: Ոչինչ, այդ երեխաների մայրերը նորը կբերեն, այդ գժվար չէ նրանց համար: Երեակայեք, այդպես չէ Եվրոպայում. այնտեղ կինը չի ուզում երեխանենալ, իսկ այստեղ, ընդհակառակը, կինը պատրաստ է թեկուզ պահն օր երեխա բերելու, — ասաց օֆիցիրը ու սկսեց ծիծաղել:

Ով գիտե այդ բոպեին ինչ գարշելի բան հիշեց նա: Բայց հանկարծ նորից լրջացավ ու կարծես ինքն իրեն բարձրածայն ասաց.

— Ռուսաստանում մարդ շատ կա, դա վատ է, դա բարդացնում է կյանքը. որքան քիչ լինեն մարդիկ, այնքան հեշտ ու լավ կլինի ապրելը: Մարդկային ցեղը պիտի աճի գանգաղ, այլ ոչ թե խոզի պես, իսկ երբ նա աճում է խոզի պես,

ապա պիտի ոչնչացնել նրանց ինչպես խողերին։ Դրա համար էլ մարդկային ցեղը այսպես ազատերվել է, դառել է կենդանիների հոտ։ Իսկ այդպես շարունակել չի կարելի։ Գերմանիան այն չի հանդուրժի այդ։

Չգիտեմ ինչու, ես մի տեսակ թմրել ու դարձել էի անտարբեր դեպի իմ շրջապատը, դեպի ամենքը և ամեն ինչ։ Այս ինձ ոչինչ չէր հուզում, չէր վրդովում։ Ես լուռ էի, կարծես չէի լսում օֆիցերի խոսքերը։ Անկասկած, նա այդ նկատում էր, բայց ոչինչ չէր ասում, երեւ նրա համար էլ միհնույն էր՝ իրեն լսում են, թե ոչ։ Նա ուզում էր բարձրաձայն խոսել և խոսում էր։

Ես այլևս ինձ այնպես կաշկանդված չէի զգում, ինչպես առաջներում, չկար նաև այն լարվածությունը, որ այնպես գիշեր-ցերեկ հանդիսաւ չէր տալիս ինձ։ Գերմանական օֆիցերը, որ շատերի հետ սպանել էր և իմ երկու երեխային, այլևս աշնպես սարսափելի չէր թվում ինձ, ինչպես առաջ։

Այդ օրերին Գերմանիա աշխատելու ուղարկեցին մի մեծ խումբ կանանց։ Առաջին հերթին ուղարկում էին այն կանանց, ովքեր երեխաներ չունեին։ Նրանց հետ ուղարկեցին նաև իմ այն հարկանուհիներին, որոնց երեխաները մահացել էին ականի պայմաններում։ Ես լիովին հավատացած էի, որ ինձ էլ նրանց հետ կուղարկեն, եթե իմ տանն ապրող օֆիցերը գտած լիներ մի ուրիշ, ինձնից ավելի լավ կին։ Բայց այդպիսին դեռ չկար, և օֆիցերը ստիպված՝ ինձ պահում էր։

Երեխաներին կորցնելուց հետո ես լուռ ելք էի որոնում հեռանալու, քանի դեռ ինձ էլ Գերմանիա չէին ուղարկել։ Ես գիտեի, որ հեռանալ հեշտ չէ, մանավանդ հատուկ հրաման կար, որ խստիվ արգելվում էր բնակիչներին քաղաքից հեռանալ։ Բայց այդ բոլորը ինձ չէր սարսափեցնում, ես սպասում էի միայն հարմար առիթի՝ հանդիսավոր կերպով բաժանվելու իմ տանն ապրող օֆիցերից։

Այդ երեկո օֆիցերը եկավ հարբած: Նա հրամայեց ինձ ջուր գնել լողանալու համար: Այդ առաջին դեպքը չէր. երբ նա մի փոքր խմում էր, սիրում էր լողանալ, մասամբ ընդունելու պատկել: Նա ասում էր, որ ինքը վաղուց ծերացած կլիներ, եթե այդ սովորությունը շունենար: Ես փայտ ջարդեցի և ջուր դրեցի տաքանալու: Վախենում էի գնալ սենյակ և այդպիս մնացի խոհանոցում ու անվերջ նայում էի, թե ինչպիս փայտի կտորները ճրթճրթալով այրվում ու մոխրանում են: Ինձ թվում էր, թե իմ կյանքն էլ այդպիս այրվել է ու մնացել են միայն մոխրները, որ այլևս ոչինչ, ոչինչ չի մնացել ինձ համար: Ամուսինս գնացել էր, չգիտեի նա կենդանի է, թե ոչ, երեխաներիս իմ աշքի առջև սպանեցին, մնացել էի ես: Մնացել էի որպիս մոխրի:

Այդպիս, մտքերիս մեջ վերացել էի, երբ լսեցի օֆիցերի ձայնը.

— Մարինա, դեռ պատրաստ չե՞՞ ջուրը:

— Ո՞ւ պարոն օֆիցեր, շուտով պատրաստ կլինի:

Նա ճոճվելով մոտեցավ ինձ, գրկեց ու սկսեց իր դաժան կատակները: Օ՛, այդ հրեշը ինչքան է ինձ տանջել:

Պատճառաբանելով, որ ջուրն արդեն տաքացել է, ևս մի կերպ կարողացա ազատվել նրա գրկից: Իսկույն բերեցի տաշտը, եռացրած ջուրը և սապոնը: Նա սովորականի պես հանդիսատ, առանց քաշվելու, հանվեց ու մտավ տաշտը: Նա իրեն շափազանց լավ էր զգում ջրի մեջ, նույնիսկ ծիծազում, երգում, կատակով ջուր էր ցանում երեսիս: Այս անդամ մի արտակարգ շանասիրությամբ սապոնեցի նրա մարմինը, գլուխը: Կլոր տաշտը ամբողջովին լցվել էր սապոնի փրփուրով: Ես վագեցի խոհանոց նորից տաք ջուր բերելու: Երբ ջրով լի կաթսան վերցրի, այդ պահին աշբովս ընկավ կրակի մոտ ընկած կացինը. ես իսկույն այն փաթաթեցի շորի մեջ ու կաթսայի հետ միասին տարա ներս: Օֆիցերը ուրախ երգում էր: Ես նորից սապոնեցի նրա վլուխն ու երեսը: Երբ նու

ամբողջովին կորել էր սապոնի փրփուրի մեջ և աշքերը փակ՝
սարասում էր տաք շրին, այդ պահին աճա նրա գլխին իշան-
սառը կացնի կատաղի հարվածները: Հենց առաջին երկու
հարվածից նա դադարեց շնչելուց: Սապոնի սպիտակ պղպջ-
շակները սկսեցին կամաց-կամաց կարմրել: Սարսափից եւ-
դողում էի ամբողջ մարմնով: Ծնկներս սկսեցին ծալվել ու
քիչ մնաց՝ ընկնեի: Կարծես իմ ամբողջ ուժը, կացնի հնա-
միասին, իշել էր նրա գլխին, և իմ մեջ այլիս ուժ չեր մնա-
ցել անգամ շարժվելու: Ես ուժասպառ ընկա բազմոցին ու
նայում էի պարոն օֆիցերին:

Այլևս չկար դաշիճը: Նա այլևս չի տանջի ուրիշ կանանց-
ես վերջին կինն էի, որին նա տիրեց: Նա միշտ հպարտու-
թյամբ կրկնում էր, որ շատ երկրներում է եղել, շատ կա-
նանց է տիրել՝ տարբեր ազգերից, բայց ուստի կանանց պես
տարօրինակ կանացը չի տեսել: Նա չգիտեր, որ այդ տարօ-
րինակություն չէ, այլ ուստի մարդու բնավորությունն է այդ-
պես, նա չի կարող տանել գերմանացու քմահաճ սովո-
րությունները:

Օֆիցերի աջ ձեռքը մնացել էր տաշտից բռնած: Ես նկա-
տեցի, որ նրա ձեռքի վրա չկար ցուցամատը: Հիշեցի այն-
անհայտ, անանուն ազգկան, որ զրկել էր օֆիցերին ցուցա-
մատից: Խեղճ աղջիկը մտածել է, որ եթե կծեր ու պոկեր
օֆիցերի ցուցամատը, նա այլևս չէր կարող ատրճանակի-
ձգանը քաշել, չէր կարող սպանել մարդկանց: Նա չգիտեր,
որ պարոն օֆիցերը կարող է սպանել նաև գեղեցիկ կոնֆե-
տով, կարող էր հանգիստ կերպով ականը գնել երեխաների
ձեռքը: Օ՛, ոչ, իմ անհայտ, իմ անանուն քուրիկ, գերմանա-
ցոց ազատվելու համար հարկավոր է նրա գլխին կացին
իշեցնել:

Այդպես պարոն օֆիցերն ավարտեց իր կյանքը կլոր-
տաշտի մեջ. դա սովորանութիկ ու գեղեցիկ է: Զգիտեմ ինչու,
ես հավատացած էի, որ եթե հարցնեին օֆիցերին, թե ինչ-
պիսի պայմաններում նա կցանկանար մեռնել, երեկի կասեր՝
լողանալիս, չէ՞ որ նա անշափ սիրում էր լողանալ: Միայն

նա չփիտեր, որ ոռւսական տաշտը խիստ տարբերվում է եղբայրականից, և որ ոռւս կինը այլ կերպ գիտի լողացնել գերմանացուն:

Տաշտի ջուրը ամբողջովին կարմրել էր, և կարծես պարոն օֆիցերն արյան մեջ լողանալիս է խեղղվել: Դա սազում էր պարոն օֆիցերին—լողանալ արյան մեջ: Դա այնպիսի սքանչելի տեսարան էր, որ բոլորը կցանկանացին այն տեսնել: Այդ տեսարանն արժանի էր մեծ նկարչի վրձինին, և այդ նկարիչը նախապես կարող էր համոզված լինել իր նկարի անմրցելի հաջողության մեջ: Միլիոնավոր մարդիկ՝ գունատ, վշտից կորացած, կգային, կանցնեին այդ նկարի մոտով, և մի պահ կհանգստանար-նրանց հոշոտված հոգին, կբացվեին նրանց զեմքի կնճիռները:

Բազմոցի վրա նստել, երկար ժամանակ նայում էի պարոն օֆիցերին ու որոճում հազար ու մի միտք: Բայց հանկարծ սթափվեցի, մինչև ե՞րբ մնալ այդպես, ի՞նչ պիտի անել, ո՞ւր պիտի գնալ: Խսկույն ոտքի ելա, նայեցի ժամացուցին. գիշերվա ժամը երեքն էր: Դուրս գալ տնից չէի կարող, գիշերվա ժամը երեքն էր: Մոտ կանգնած արթուր հսկում էր օֆիցերի կյանքը. նա չփիտեր, որ իր օֆիցերն այլևս կարիք չունի հսկողության:

Ես կարող էի միայն առավոտյան դուրս գալ տնից, զամբյուղը ձեռքիս, իբր ամեն օրվա պես շուկա եմ գնում: Բայց մինչև առավոտ ժամանակ դեռ շատ կար: Ի՞նչ անել, ինքս էլ չփիտեի:

Ես մի սենյակից մյուս սենյակն էի անցնում, կանգնում, նայում էի այս ու այն անկյունին, բայց որոշակի ոչինչ չէի կարողանում անել: Վերջապես մի կերպ ինքս ինձ հավաքեցի, արագությամբ փոխեցի շորերս, իրար վրա մի քանի հագուստ հագա, հետո վերցրի այն թանկարժեք իրերը, որ կարելի էր գրանց դնել, ապա անցա օֆիցերի սենյակը, տակն ու վրա արի այն, բայց ոչինչ չկար. նա երկի գիտակցարար տանը ոչինչ չէր պահում: Միայն ծոցի գրանում գտա մի քանի մեքենագիր փաստաթղթեր, ապա կաշվե գեղեցիկ շաքանի մեքենագիր փաստաթղթեր, ապա կաշվե գեղեցիկ շա-

սլիկով օֆիցերի անձնական վկայականը։ Այդ բոլորն ամբողջը կրոնկավոր կոշիկիս արանքում, թելով զգուշությամբ կարեցի ու հաղա։

9. ԱՀԱ ՆՐԱՆՔ, ԵՎՐՈՊԱԿԱՆ ԳԵՂԵՑԿԱԽԵԾԵՐԸ

Սեղանի վրա դրված էր մի գեղեցիկ ալբոմ, դա օֆիցերի սիրուծիների նկարներն էին։ Չգիտեմ ինչու, ես մեծ ցանկությամբ բաց արի այդ ալբոմը ու սկսեցի մի առ մի դիտել այդ նկարները։ Իսկապես, արժեք նայել։ Ես նայում էի այդ կանանց դեմքերին ու մտածում։ արդյոք որտե՛ղ են նրանք հիմա, կամ կենդանին են թե ոչ։ Գուցե պարոն օֆիցերը նըրանցից շատերին հնանց ինքն է սպանել՝ անկողնու մեջ, ճաշելիս, պարելիս կամ ինչպես թելագրել է բոպեի հաճույքը։

Ինչպես կուզեի, որ նրանք բոլորն եւ հիմա այստեղ լինեին, տեսնեին պարոն օֆիցերին արյան մեջ լողանալիս օ՛, երեխ նրանք ամբողջ մեծությամբ կրացեին իրենց աշքերը ու սարսափահար կնայեին նրան։

— Պարոն օֆիցեր, այդ ի՞նչ է պատահել ձեզ, չէ՞ որ դուք սիրում էիք մաքուր շրում լողանալ։

Այն ժամանակ բոլորին հրելով ես առաջ կգայի և բարձրաձայն կասեի։

— Ո՛չ, դուք սխալվում եք, գերմանական օֆիցերի համար իսկական ջուրն այդ է, նա շատ մաքուր է, այդտեղ, այդ շրի մեջ միայն նա կարող է լիովին մաքրվել։

Բայց, չգիտեմ ինչու, հանկարծ մի ներքին ատելություն զգացի գեպի այդ բոլոր կանայք. չէ՞ որ նրանցից ամեն մեկը՝ առաջինը, երկրորդը, երրորդը, քսաներորդը, կարող էր ձեռք բարձրացնել պարոն օֆիցերի վրա, սպանել, թույլ շտալ, որ նա իր երկրից սովա մի ուրիշ երկիր, իր գրկից՝ մի ուրիշի գիրկը ու շարունակի տանջել ուրիշ անմեղ կանանց։ Ուրիշ կանացի պատիվը, ո՞ւր է նրա արդար ցասումը։ Որտե՛ղ է եվրոպացի պատասիր կինը, ինչո՞ւ է նա թույլ տվել, որ

իր մարմնի վրայով գերմանացին քայլի ու հասնի մինչեւ
Խոսաստան։ Զէ՞ որ այս ալբոմի ամեն մի նկար մի սկ, ան-
ջընջելի բիծ է այդ երկրի կանանց համար։ Թողնել, որ հրեշը
գեռ ալբո՞մ սարքի իր համար, ամեն մի նկարի տակ գրի, թե
երբ և որտե՞ղ է տիրել այդ կնոջը։ Օ՞, սոսկալի է այդ։ Ան-
շափ սոսկալի։ Թող նրանցից ամեն մեկը այն անհայտ, ան-
անուն ոռու աղջկա պես կծեր ու պոկեր թեկուզ նրա մի մա-
տր, այն ժամանակ նա ձեռքեր չէր ունենա գրկելու կամ
սպանելու մի ուրիշին։ Ինչո՞ւ նրանց շուրթերին նույնպես
չի կպել գերմանական օֆիցերի արյունը, ինչպես այն երի-
տասարդ ոռու աղջկա շուրթերին։ Եթե նրանցից ամեն մեկը
գոնե մի փոքր ճանկոեր օֆիցերին, այն ժամանակ նրա մար-
մինը ամբողջովին վերք կլիներ, և նա այլիս չէր կարողանա-
տեղից շարժվել։ Օ՞, ո՞չ, ես չեմ ների սրանց։ Հավատացե՞ք,
եթե առաջինը իմ նկարը լիներ պարոն օֆիցերի ալբոմում,
ապա նա կլիներ և վերջինը և այդ միակ նկարն էլ ես եր-
բեք թույլ չէի տա, որ նա շրջեր զանազան երկրներ ու հապր-
տությամբ ցուց տար ամենքին, որ ահա, տեսեք, այն կինը,
որին տիրել եմ ես։ Թույլ չէի տա, որ նա ամոթաբար պղծեր
իմ կանացի պատիվը, իմ ծնողների, իմ ժողովրդի պատիվը։

Բայց ես կուզեի, որ նրանք բոլորը այդ բոպեին տես-
նեին պարոն օֆիցերին իր փառքի գագաթնակետին։

Մինչեւ լույս դեռ ժամանակ շատ կար, և ես վերցրի այդ
նկարները ու շարքով փակցրի պատին։ Այդպես, սենյակը
դարձավ մի թանգարան։ Սենյակի կենտրոնում ինքը՝ գլխա-
վոր հերոսն էր, իր իսկական ֆոնի վրա։ Եթե այդ նկարները
պոր հերոսն էր, իր իսկական ֆոնի վրա։ Համար, ապա նա
պարոն օֆիցերը հավաքել էր թանգարանի համար, ապա նա
հասել էր իր նպատակին։

Թանգարանը պատրաստ էր։ Դրան հատկացրի իմ սե-
փական բնակարանը։ Այդպիսի հարմար բնակարան երկի-
չէր գտնվել ամբողջ Եվրոպայում։

Արդեն լուսանում էր, բայց դեռ էլի մի-երկու ժամ կար,
ես կարող էի տանից դուրս գալ միայն ժամը 8-ին, ոչ շուտ։
Վերջապես եկավ այդ ժամը։ Ես դոներն ամուր փակցի

և գամբյուղը ձեռքիս շտապ դուրս եկա: Մուտքի մոտ գերմանական պահակի ներկայությամբ Հրաժեշտի կարոտով մի անդամ էլ երես շրջեցի դեպի մեր բնակարանը, որտեղ անց էի կացրել իմ ամուսնական կյանքի երշանիկ տարիները, ապա դառն ու արհամարհական հայացք ձգեցի գերմանական պահակի ապուշ գեմքին, հետո շրջեցի երես ու արագ քայլերով հեռացա:

Երեք ժամվա ընթացքում ես պիտի կարողանալի թաքնըվել, որովհետև ուղիղ ժամը 11-ին ավտոմեքենան գալիս էր օֆիցիերի հսկից:

Արագությամբ մնացնելով մի փողոցից մյուսը, ես որոշակի չգիտեի, թե որ եմ շտապում, միայն մտածում էի, որքան հնարավոր է, ավելի հեռանալ մեր տնից: Դուրս գալով քաղաքի ծայրի խուզ փողոցներից մեկը, մի փոքր կանգ առա, նայեցի շորս կողմա, հիշեցի, որ քեռիս ապրում է քաղաքի այդ մասերում: Նեղ ու քարուքանդ եղած փողոցներով անց նելով, շուտով ես գտա նրանց տունը: Քեռիս մի ազնիվ ռեքարի մարդ էր. նա աշխատում էր ավտոպարկում որպես ավագ մեխանիկ և միևնույն ժամանակ դիտեր մեքենավարել: Երբ ես մտա նրանց տուն, քեռակինս ուրախությունից ճշաց ու գրկեց ինձ: Գերմանացիների՝ քաղաք մտնելոց հետո ես չեմ տեսել նրանց: Առհասուարակ դրությունն այնպես էր դասավորվել, որ մեզանից ոչ ոք չդիտեր, թե որտեղ և ինչ վիճակումն են մեր քարեկամները:

— Ո՞ւր է քեռին, — հարցրի ես:

— Կդա հիմա, դուրս է գնացել. ինչո՞ւ ես այլալված, — հարցրեց նա:

— Ոչինչ, քեռին շտապ ինձ հարկավոր է:

— Կդա հիմա, ի՞նչ է պատահել, ինչո՞ւ ես այդպես դառնել:

— Մի հարցրու, քեռակին, մի հարցրու:

Շուտով եկալ քեռիս: Նա ինձ ամուր գրկեց, համբուրեց, ապա հարցրեց իմ, հետո երեխաների մասին: Ես ի վիճակումն են մեր քարեկամները:

ճակի չելի պատմելու նրան այն ամենը, ինչ ես ապրել ու տեսել էի այդ դաժան ամիսներին։ Ասացի միայն, որ գերմանացիները սպանել են երեխաներին, իսկ ինձ հազիվ հաջողվել է մի կերպ աղատվել նրանց ձեռքից, և այժմ հարկավոր է շտապի թաքնվել, որովհետև նրանք ինձ որոնում են և, եթե բոնեն, անկասկած, ինձ կկախեն։

— Դու կմնաս մեզ մոտ, այստեղ համեմատաբար ավելի ապահով է, քան մի ուրիշ տեղ. ծայրամաս է, թիւ է անցուդարձը, — ասաց քեռիս հայրական հոգատարությամբ։

— Ու, քեռի ջան, ինձ անհրաժեշտ է հենց հիմա քաղաքից հեռանալ. եթե ես մնամ այստեղ, միւնուն է, ինձ կգտնեն, որովհետև նրանք հիմա ինձ որոնում են։

— Քեզ կթաքցնենք ներքնահարկում, այնտեղ ապահով է, ոչ ոք չի գտնի քեզ։

— Ախր գու չգիտես, քեռի, ես սպանել եմ նրանց նշանավոր օֆիցերներից մեկին, և նրանք հիմա ամեն տեղ ինձ են փնտրում, հարկավոր է մի կերպ դուրս գալ քաղաքից և, որքան հնարավոր է, շուտ, մինչև ժամը 11-ը, քանի դեռ չգիտեն այդ մասին։

Լսելով օֆիցերի սպանության լուրը, քեռիս մռալվեց նա շատ լավ էր հասկանում, թե ինչ է նշանակում գերմանական օֆիցեր սպանելը։ Նա նայեց ինձ ոչ իր սովորական հայացքով, այլ օտարութի, անծանոթ մարդու հանդիմանական հայացքով և լուր սկսեց ետ ու առաջ քայլել փոքրիկ սենյակում։

Ես հասկանում էի նրան, ես շատ լավ գիտեի, որ այդ րոպեին նա իր մասին չէր մտածում. նա ծնող էր, ուներ փոքր երեխաներ և այդ սարսափելի օրերին չէր կարող չմտածել նրանց մասին։ Բոլորս լուր էինք։ Վերջապես քեռին նորից մոտեցավ ինձ ու արցունքներն աշքերին ասաց ինձ։

— Քաղաքից դուրս ո՞ւր պիտի գնաս հիմա, ամեն տեղ գերմանացիներ են, կգտնեն քեզ։

Երկար մտածելուց հետո ևս եկա այն համոզման, որ քեռիս իրավացի է: Քաղաքից դուրս ուր էլ ևս գնացի, ինձ, որպես անծանոթ ու նոր մարդու, հեշտությամբ կարող էին բռնել, և հետո ևս ինքս էլ որոշակի չգիտեի, թե որտեղ և ում մոտ պիտի բնակվեի, ով պիտի նայեր ինձ: Ես համաձայնեցի մնալ: Նրանք ինձ թաքցրին ներքնահարկում, խսկապիս մի այնպիսի տեղ, որ եթե գերմանացիք նույնիսկ իմանային, հազիվ թե փորձեին իշնել այդ մութ ու խավար խուցը:

Հաջորդ օրը երեկոյան քեռիս իջավ ինձ մոտ ու հայտնեց, որ արդեն փողոցների պատերին փակցրած է ոստիկանության հրամանը իմ մասին. Հայտարարված էր քաղաքացիներին, որ բոլոր նրանց, ում հայտնի է իմ տեղը, պարտավոր են անմիջապես հայտնելու ոստիկանությանը, եթե ոչ, հետագայում ում տանը որ բռնեն, կայրեն այդ տունը ու մեծից մինչև փոքրը կկախեն:

Թաղամասի ոստիկանությունն իր հերթին հետախուզություն կազմակերպելուց բացի, նմանապես զգուշացրել էր թաղի բնակիչներին այն ծանր հետևանքների մասին, որ կվիճակվի բոլոր նրանց, ովքեր մասնակից են ինձ թաքցնելուն:

Ես, իշարկե, իմ խուցից դուրս չեմ դալիս և չգիտեի դրսում գիշե՞ր է, թե ցերեկ, մո՞ւթ է, թե լույս: Ուտելիք ես ստանում էի միայն մի անգամ, այն էլ գիշերը:

Այդպես անցավ մի քանի օր, ապա մի շաբաթ, մի ամիս: Այդ ժամանակամիջոցում քաղաքի պատերին իմ մասին եղած հրամանի վրա փակցրին ուրիշ նոր հրամաններ, որոնք նույնպես հույժ կարենոր նշանակություն ունեին: Քեռին մի փոքր հանգստացել էր, տեսնելով, որ ավելի կարենոր իրադրածություններ հետզհետե մոռացության են տալիս իմ հարցը: Նա արդեն պլաններ էր մշակում քաղաքից ինձ դուրս տանելու մասին: Նա այդ հնարավորությունն ուներ, որովհետև իրենց ավտոպարկի մեքենաները հաճախ գնում էին

շրջանները՝ փայտ, խոտ և գանազան մթերեղեն տեղափոխելու:

Օրերն անցնում էին: Ես մի կերպ ապրում էի այդ ցուրտ ու խոնավ նկուղում: Ամբողջ օրը թմրած ընկած էի գետնին: Երբեմն միայն ինքս ինձ մտածում էի, թե ինչու եմ ես ապրում, ինչ է, վերջապես, իմ կյանքի իմաստը, ինչու եմ այսպիս տանջվում և ուրիշներին էլ ակամա մասնակից դարձնում այդ տանջանքներին: Այդ գերեզմանոցից դուրս գալ չէի կարող, միայն ուշ գիշերներին գալիս էին ինձ մոտ, բերում էին հաց, ջուր և մի քանի բոպե պատմում օրվա նորությունների մասին:

Մի գիշեր քեռիս եկալ ինձ մոտ ու հայտնեց, որ մի քանի օր հետո ինձ կտեղափոխի մորաքրոջ տուն. մորաքրոջը ապրում էր հեռավոր գյուղերից մեկում: Նա ասաց, որ ինքը կատարել է անհրաժեշտ ամեն ինչ և սպասում է միայն հարմար բոպեի՝ մեքենայով տեղափոխելու համար: Ես լուսում էի ու շփիտեի ինչ պատասխանել: Զփիտեի՝ լա՞վ էր, որ այդ գերեզմանից դուրս պետք է գայի, նորից տեսնեի գերմանացու, թե՝ հենց այդտեղ, այդ խոնավ ու մութ նկուղում էլ մնայի մինչև մեռնելը, չե՞ որ դա այնքան էլ երկար շպիտի տեսեր:

Ես ոչինչ չպատասխանեցի քեռուս:

— Դու հիվանդ ես, աղջիկս, — ասաց քեռիս, ձեռքը դնելով ճակատիս:

— Ո՛չ, քեռի, ես հիմա ոչինչ չեմ զգում:

Քեռիս երկու ձեռքով գրկեց ինձ ու սկսեց համբուրել: Նրա արցունքները թափվում էին ու թրջում շորերս: Մոմի գողգոշուն լույսը թույլ կերպով լուսավորում էր խուցը: Ես կլանված նայում էի, թե ինչպես մոմը բոցկլտում էր, ու նրա արտասովոր ստվերները անվերջ շարժվում էին քեռուս գունատ գեմքին: Այդ բոլորը խորհրդավոր ու ծանր տպավորություն էր գործում ինձ վրա:

Այդ օրը քեռիս բավական երկար մնաց ինձ մոտ. նա մխիթարական կցկառու խոսքեր էր ասում ինձ ու աշխա-

տում էր ամեն կերպ թեթևացնել իմ վիշտը: Վերջապես դրժվարությամբ ոտքի բարձրացավ, վերցրեց մոմը և ուրվականի պես կամաց հեռացավ:

Մի քանի օր հետո քերիս արկղներով բարձած մի մերենա նստած՝ եկավ տուն: Արագ իշավ ինձ մոտ ու ասաց, որ մեկնում ենք: Նա ինձ ցուց տվից նախապես պատրաստած արկղներից մեկը. ես մտա նրա մեջ ու կծկվեցի: Արկղը մի քանի տեղից անցքեր ուներ, այնպես որ, ես ոչ միայն հնարավորություն ունեի մաքուր օդ շնչելու, այլև նույնիսկ դիտելու դուրս:

Երբ ամեն ինչ պատրաստ էր, մենք շարժվեցինք: Ճաշնապարհին մի քանի տեղ կանգնեցրին մեքենան, երեխ փաստաթղթեր ստուգելու համար: Երեկոյան դեմ մենք հասանք տեղ: Թե ինչ ճանապարհով, ինչպես և ուր հասանք մենք, ես չգիտեի:

Երբ ես արկղից դուրս եկա, հազիվ կարողացա նշանագել մեքենայի մոտ կանգնած մի պառավ կնոջ: Նա ինձ առավ իր գիրկն ու սկսեց համբուրել: Պառավն անվերջ անիծում էր գերմանացիներին ու երանի տալիս մորս, որ ժամանակին մեռավ ու շտեսավ այդ ծանր ու զաժան օրերը:

Ես չեի կարողանում ոտքի կանգնել, գլուխս պտտվում էր, ծնկներս ծալվում: Ես ընկնում էի: Պառավի օգնությամբ հազիվ կարողացա մտնել սենյակ: Տեսնելով իմ ծանր վիճակը, նա իսկույն անկողին բացեց ու պառկեցրեց:

Քերիս մեքենայով շարունակեց իր ճանապարհը. շրջանի գյուղերից մեկում նա պիտի վերցներ մթերեղեն, լցներ այդ արկղներն ու վերադառնար քաղաք: Բաժանվելիս նա համբուրեց ճակատու ասաց, որ հնարավորության դեպում ինձ անպատճառ տեսության կգա:

Մի քանի օր ես մնացի այդպես պառկած: Յավում էր ամբողջ մարմինս, թլում էր, թե բարձր տեղից ընկել ու շարդվել էմ: Լույսին չեի կարողանում նայել, աչքերս ցափում էին ու արցունքություն: Պառավը մոր պես խնամում էր ինձ: Երբ մի փոքր լավ զգացի, կամաց-կամաց ոտքի բարձրացա

ու սկսեցի սհնյակի մեջ ման գալ և օգնել պառավին նրա
տնալին դորձերում։ Առաջին օրերին, երբ ես հիվանդ պառ-
կած էի, մոռացել էի, որ այդ պառավը իմ մորաքուլըն է։
Հետո վերհիշեցի, որ նրան տեսել էի մեղ մոտ աշակերտ ժա-
մանակու։ Այդ օրվանից տարիներ էին անցել՝ ուրախության,
ապա դառն օրերով լի տարիներ։ Պառավը համեմատաբար
քիչ էր փոխվել, նա համարյա նույնն էր մնացել իմ դժգույն
հիշողության մեջ։

Ես տանից ոչ մի տեղ չէի գնում։ Քիչ կազդուրվելոց հե-
տո սկսեցի օգնել մորաքրոջ բանջարանոցային աշխատանք-
ներում, իմ աշքերը դեռ ցավում էին, ցավում էր նաև գլուխու-
թու ամբողջ ժամանակ լուր էի և չէի էլ ցանկանում խոսել։
Մորաքուլը հաճախակի հանդիմանում էր ինձ։

— Աղջիկս, ի՞նչ ես լուր ու ամբողջ օրը լեզուդ չես
շարժում։

— Ի՞նչ խոսեմ, մորաքուլը, խոսելու բան չե-անմ։

Մորաքուլը ոչ միայն զարմանում, այլ նույնիսկ նեղա-
նում էր, որ ես ասելու բան շունեմ։

— Ինչպե՞ս թե, չէ՞ որ դու քաղաքից ես գալիս, չէ՞ որ
գերմանացիները սպանել են քո երեխաներին, քանդել են քո
տունը, դու մեղանից շատ բան ես տեսել, ինչո՞ւ չես ուզում
պատմել։

Պատախանի փոխարեն ես ծածկում էի երեսս ու լուռ
արտասվում։

— Մի հարցրու, մորաքուլը, մի հարցրու. այն, ինչ եւ
տեսել եմ ու ապրել, չի կարելի պատմել...

11. ՄԵՐՈՒՅՑ ՀԵՏ

Այդ օրը մորաքուլը եկավ և ուրախ-ուրախ պատմեց, որ
գյուղում ամենքը խոսում են Կարմիր Բանակի գալու մասին,
որ մերոնք մի քանի տասնյակ կիլոմետր հեռավորության

վրա են գտնվում և շուտով, շատ շուտով կազատագրեն և
մեր գյուղը:

Գիշերները լսվում էին ինքնաթիռների ձայներ: Մերն էին
այդ ինքնաթիռները, թե նրանցը՝ հայտնի չեր: Հաղար ու մի
լուրեր էին պատվում գյուղում: Վերջապես մի գիշեր մի
խումբ պարտիզաններ եկան գյուղ և զգուշացրին բոլորին, որ
պետք է շտապ թողնել գյուղը ու թափնվել մոտիկ անտառում,
որովհետև գերմանացիները նահանջի ճանապարհին բոլորին
կոտորում էին: Հատուկ մարդիկ գիշերով մեզ ուղեկցեցին
անտառ, ու մենք թափնվեցինք այնտեղ: Մի քանի օր շարու-
նակ մենք մնացինք բաց երկնքի տակ: Չորրորդ թե հին-
գերորդ օրը մենք արգեն լսում էինք թնդանօթների զվրդյունը,
մեր ինքնաթիռները նրեմն թոշում էին շատ ցածր, մեր գրւ-
խի վրայով: Պարտիզանները մեզ հանգստացնում էին, որ շու-
տով մերնք կվերցնեն գյուղը ու մենք նորից կվերադառ-
նանք այնտեղ:

Այդպես էլ եղավ:

Մերոնք շուտով վերցրին գյուղը, ու ամեն մեկը վերա-
դարձավ իր տունը: Մի շարք տներ քանդված ու ավերված
էին: Բարեբախտաբար, գյուղում ուժեղ մարտեր չեին եղել,
դրա համար էլ ավերումները համեմատաբար քիչ էին:

Երբ մենք վերադարձանք, կարմիրանակալիններով լի էր
մեր գյուղը: Շերունիները, կանայք, նույնիսկ երեխաները
գրկախառնվում էին նրանց հետ, համբուրում նրանց երեսը,
շորերը:

Կարմիր Բանակի այդ զորամասերը երկար չեին մնում
մեր գյուղում, նրանք գտախս ու անցնում էին գյուղի միջով
դեպի արևմուտք: Բայց մի քանի օր հետո մի փոքրիկ զորա-
մաս եկավ ու կանգնեց գյուղում: Նրանք տեղավորվեցին գյու-
ղի անվնաս մնացած տներում: Ամենքի տանն էլ երեք, չորս-
չինգ, նույնիսկ ավելի ապրողներ կային: Մեր տանը տեղա-
վորվեցին երեք երիտասարդ կրտսեր հրամանատարներ:

Մենք քաշվեցինք մի սենյակ, իսկ երկրորդը հատկա-
ցըրինք նրանց: Մորաքույրս նրանց համար ստեղծեց բոլոր

Հարմարությունները: Նրանք քնում էին կողքի սենյակում, իսկ թեյի, ձաշի ու ընթրիքի ժամանակ համարյա միշտ մեզ մոտ էին լինում: Երբեմն ազատ ժամերին նրանք գալիս էին, հարցումներ էին անում գերմանացիների մասին:

Ամեն երեկո, երբ նրանք զորամասից վերադառնում էին տուն, մեզ նորություններ էին պատմում: Իրենց հետ նրանք քերում էին նոր գրքեր, ժուռալներ ու թերթեր: Ես վերցնում էի այդ թերթերն ու ազատ ժամերին կարդում: Այդ թերթերի մեջ շուտով երևաց նաև մեր շրջանալին թերթը: Նրա մեջ պարբերաբար տպագրվում էին զանազան նյութեր այն աշակոր գազանությունների մասին, որ կատարել էին գերմանացիները մեր շրջանում: Ես կլանված կարդում էի թերթի ամեն մի տողը:

12. ՓՈՐՔ ՀԱՅՐԵՆԻՔԻ ԴՈՒՍՏՐԻՆ

Մի օր այդ թերթի համարներից մեկը ձեռքս վերցնելով, տեսնեմ նրա մեջ տպագրված է մի գեղեցիկ կնոջ նկար: Նայում ու շեմ հավատում աչքերիս: Թերթը կրծքիս սեղմած, ես խսկույն դուրս վազեցի, դուրս նորից ու նորից նայեցի նրան, նայեցի հեռվից, ապա մոտիկից, նայեցի շորս կողմից. այս՝ նա էր, չէի սխալվում, ինքը Անտոնինան: Նույն ուրախ ժպիտը գեմքին նայում էր ինձ: Կարծես հիմա պիտի խոսեր ինձ հետ, ու ես պիտի լսեի նրա ձայնը: Դա այն նկարն էր, որից մի օրինակ նվիրել էր գերմանական օֆիցերին, մի օրինակ էլ՝ ինձ: Ես աչքերս հառել էի նկարին ու չէի կարողանում հեռացնել նրանից, նայում ու անհամբեր սպասում էի, որ աշակ իմ ծանր օրերի լուր բախտակիցը, զգույն ժպիտը դեմքին, նորից կմոտենա ինձ ու կասի.

— Տեսնո՞ւմ եք, Մարինա, մենք նորից հանդիպեցինք...
Թևերս պարզած ես առաջ շարժվեցի, որ գրկեմ նրան,

բայց, ավաղ, նա չկար, սոսկ գունատ մի թերթ էր ձեռքիս-
որի մեջ տպագրված էր նրա նկարը:

Նկարի վերև խոշոր տառերով գրված էր՝ «Հայրենիքի-
հերոս դուստրը»:

Այդ բոպեին ես չեի հասկանում, թե ինչ էր կատարվում
ինձ հետ. և գուցե երկար շարունակվեր այդ վիճակը, եթե
ներսից չսեի մորաքրոզս ձայնը:

Ես ներս մտա: Աշքերս թաց էին. նրանք նկատեցին, որ
ես արտասվել եմ, ու համարյա միաձայն դարձան ինձ.

— Ի՞նչ է պատահել, Մարինա:

— Ոչինչ, գլուխս պատվեց ու հանկարծ վատ զգացի-
քայց անցավ, հիմա արդեն լավ եմ:

— Դուցե թերթում ձեր հարազատներից որևէ մեկի մա-
սին վատ բան կադրած, խոսեք, Մարինա, մի թաքցրեք, —
ասաց նրանցից մեկը:

Թերթը զնելով սեղանին, ես ասացի միայն, որ ձանա-
շում եմ այս աղջկան, և ուրիշ ոչ մի խոսք:

Ես չփառեի, ավելի շուտ՝ ուշազցություն չեի դարձրել, որ
նկարից բացի, թերթում Անտոնինայի մասին մի ամբողջ
հոդված կար տպագրված: Հրամանատարներից մեկը սկսեց-
բարձրածայն կարդալ այդ հոդվածը, իսկ մենք բոլորս լուռ
լսում էինք:

Հոդվածագիրը պատմում էր, թե ինչպես արտիստուհի-
Անտոնինան, որ բեմում հայտնի էր որպես հերոսուհու գե-
րակատար, գերմանական օկուպացիայի ժամանակ նա բեմից
իջավ ու վերջին անգամ հերոսուհու իր սքանչելի գերը կատա-
րեց կյանքում: Այս անգամ նա հանդես եկավ մարմնավորի-
ւու ոչ թե որևէ մեծ գրողի ստեղծած հերոսուհու կերպարը,
այլ ինքը՝ արտիստուհին իր սեփական կյանքով կերտեց հե-
րոսուհու մի այնպիսի կերպար, որը գերազանցեց իր խաղա-
ցած բոլոր հերոսուհիներին: Գերմանական օկուպացիայի-
ամենաղաժամ օրերին հայրենիքի այդ շնաղ դուստրը, հըմ-
տորեն գործադրելով արտիստուհու իր փայլուն տաղանդը,

սովետական հետախույզ օրգաններին հասցնում էր խիստ արժեքավոր տեղեկություններ, տեղեկություններ, որոնք օգնել են մեր պարտիզաններին՝ բազմաթիվ մահացու հարվածներ հասցնելու թշնամուն և միաժամանակ փրկելու սովետական հարյուրավոր մարդկանց կյանք:

Հայրենիքի համար ծանր օրերին արտիստուհին չցանկացավ հանգես գալ որպես սոսկ հերոսուհու դերակատար, այլինքը դարձավ հերոսուհի:

Ժողովուրդը երբեք չի մոռանա իր հերոս դատեր:

Երբ հոգվածի ընթերցումը վերջացավ, մի քանի րոպե բոլորս լուս էինք: Արցունքները հոսում էին աշքերից: Անտոնինայի պատկերը ցցվել էր աշքիս առաջ: Ինչ բախտավոր ես, Անտոնինա: Դու ապրեցիր, պայքարեցիր ժամար, և նա երբեք չի մոռանա քեզ: Իսկ ես, տեսնում ես, նստել եմ տանը:

Այդ գիշեր ես չկարողացա քնիլ:



Ծանր ժամքերից թմրած ու հոգնած ուղեղիս մեջ մի միտք պարզ ու որոշակի ընդգծվեց—պետք է մեկնել ճակատ: Միենալուն է, իմ երեխաների կորուստը, այն տանջանքները, իոր ես կրել եմ գերմանացիների օրոք, ինձ երբեք հանգիստ շեն տալու:

Կուսաբացին երկտող գրեցի մորաքրոջս, որ ինձ չորոնի, ու արագ քայլերով հեռացա գյուղից:

Շօւտով ես դուրս եկա խճուղու լայն ճանապարհը, որ ուղիղ ձգվում էր դեպի արևմուտք:

Մի պահ ճանապարհի մեջտեղը կանգնեցի, նայեցի շորս կողմա, հետո շրջվեցի գեպի ռազմաճակատ ու վստահ, համատուն քայլերով շարժվեցի առաջ:

Երրորդ օրն է, որ ես քայլում եմ այդ ճանապարհով. և եթե ձեր զինվորները չկանգնեցնեին ինձ, ես դարձյալ պիտի շարունակեի քայլել, քայլել մինչև իսկական մարտերի գիրկը:

Ահա այն ամենը, ինչ պիտի ասեի ձեզ:
Գիտեմ, դուք, անշուշտ, կմտածեք, թէ ինչո՞ւ ուզմաձա-
գատ եմ եկել և ոչ թէ մնացել թիկունքում:

Հավատացեք, ընկեր մայոր, գերմանական օֆիցերը իմ
հոգուց հանեց ամեն ինչ՝ և՛ սեր, և՛ քնքություն, և՛ ուրախու-
թյուն ու դարձրեց ինձ մարդասպան: Եվ ես հենց առաջինը
իրեն սպանեցի, այժմ եկել եմ ճակատ՝ սպանելու նրա եղ-
բարը, նրա բարեկամներին, բոլոր նրա նմաններին:

Ես գիտեմ, որ մեռնել կարող եմ ամեն տեղ և միշտ,
բայց վրեժի անզուսպ ծարավը այրում ու հոշոտում է հոգիս,
մեռնելով անհնարին է հանգստացնել այն. այդ ծարավը հա-
զագեցնելու համար պեսք է գերմանացիների դիակների և ա-
րքան միջով քայլել անդադար, քայլել մինչև արևմուտք, մինչև
թզնամու որջը: Քայլել այնքան, մինչև հոշոտված և վրեժի
ծարավ հոգիդ հագենա թշնամու արյամբ:

Այն ժամանակ, այո՛, միմիայն ա'յն ժամանակ վե-
րաբառնալ դեպի կյանք...

1944 թ. ապրիլ - հունիս



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Էջ

1 ԵՐԳՁԻ ՄԱԶԸ	5
2 ԾԱՂԻԿՆԵՐԸ	10
3 ՄՈՒՐՁԸ	14
4 ԾԱՂԿԱՎԱՀԱՌ ՊԱՏԱՆԻՆ	18
5 ԵՐԳԸ	20
6 ՄԵԴԵԱ	25
7 ԲՐԵԿԸ	32
8 ՄԱՅՐԸ	37
9 ՍԵՓԱԿԱՆ ԶԵՐՔԵՐՈՎ	45
10 ՄԱՐԻԱՄ	55

Խմբագիր՝ ՀՊ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

գ.թ 11429 Պատ. № 514: Տիրաժ 4000. Տպագր. 6^{3/4} մամ.: Հեղինակ.
5,1 մամուլ: Ստորագրված է տպագրության 1946 թ. օգոստ. 20-ին:


ՀԱՅՈՒ ՄԵՆԱՊԵՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԿԵց ՊՈՂՊԵՐԱՓ և ՀՐԱՄԱ.
Վարչության № 3 տպարան, Երևան, 1946 թ.

ԳՐԱԴԱՐԱՆ

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220028378



ԳԻՆԸ 7 Ռ.